

ՆԱԶԻԿ ՌԱԶՄԻԿԻ ԳԱՐՈՒԵԼՅԱՆ

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՇԱՐԺԵՐԻ
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

ԵՐԵՎԱՆ 2006

Խմբագիր՝

պատմական գիտությունների թեկնածու Յ. Գ. Սարգսյան

Գաբրիելյան Ն.

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՇԱՐԺԵՐԻ
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ / Խմբ. Յ.
Սարգսյան, - Եր., 2006, 100 էջ:**

Աշխատությունը նվիրված է 1988թ.-ից հետո Շիրակի մարզի բնակչության միգրացիոն շարժերի աշխարհագրական վերլուծությանը: Ներկայացված են մարզի բնակչության միգրացիաները պայմանավորող հիմնական գործոնները, ինչպես նաև վերջիններիս զարգացման ընդհանուր միտումները:

Աշխատությունը կարող է օգտակար լինել աշխարհագրագետների, տնտեսագետների, ժողովրդագիրների, սոցիոլոգների, միգրացիայի հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների համար:

Աշխատանքում արտահայտված տեսակետները հեղինակին են և կարող են չհամընկնել աջակից կազմակերպությունների դիրքորոշումներին:

*Հետազոտությունն իրագործվել է հրատարակվում է
«Հետազոտական Ռեսուրսների Կովկասյան Կենտրոններ
/ՀՌԿԿ/ - Հայաստան» կենտրոնի հետազոտական
դրամաշնորհի շրջանակներում*



Caucasus Research Resource Centers-Armenia
A program of the Eurasia Foundation

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան
Եվրասիա Հիմնադրամի ծրագիր

ՀՌԿԿ-Հայաստանը կազմում է Նյու-Յորքի Կարնեգի Կորպորացիայի
և Եվրասիա Հիմնադրամի համագործակցությամբ հարավկովկասյան
երկրներում ստեղծված հետազոտական ռեսուրսային կենտրոնների ցանցի
մի մասը: Հասարակագիտական հետազոտությունների ու հանրային
քաղաքականության վերլուծության ոլորտը խրախուսելու նպատակ
հետապնդող այս կենտրոնը տեղակայված է Երևանի պետական
համալսարանում և բաց է բոլոր հասարակագետ – հետազոտողների համար:
Կենտրոնի գործունեության մասին կարելի է տեղեկանալ www.crrc.am վեբ-
կայքից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	7
Գլուխ առաջին. Շիրակի մարզի տնտեսաաշխարհագրական ընդհանուր բնութագիրը, տեղը և դերը Հայաստանի Հանրապետության տնտեսական համալիրում.....	14
Գլուխ երկրորդ. Շիրակի մարզի բնակչությունը	29
Գլուխ երրորդ. Շիրակի մարզի բնակչության միգրացիաները պայմանավորող հիմնական գործոնները.....	43
Գլուխ չորրորդ. Շիրակի մարզի բնակչության միգրացիաները և դրանց զարգացման միտումները.....	60
Եզրակացություններ.....	85
Հավելված.....	90
Գրականության ցանկ	94

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

20-րդ դարի վերջը և 21-րդ դարի սկիզբը Հայաստանի Հանրապետության համար բնութագրվում են քաղաքական ու սոցիալ-տնտեսական բնույթի համակարգային, արմատական փոփոխություններով:

Միայն այս ժամանակահատվածի իրադարձությունների ոչ լրիվ թվարկումը՝ 1988թ. «Սպիտակի» երկրաշարժ, արցախյան հիմնախնդիր, ԽՍՀՄ փլուզում, Հայաստանի անկախության հռչակում ու ցայսօր շարունակվող վերափոխումներ, տնտեսական շրջափակում Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից, ցույց է տալիս, թե ինչպիսի բարդ ու բազմաբովանդակ խնդիրներ են ծառայել ինչպես հանրապետության հասարակության և իշխանությունների, այնպես էլ գիտության, այդ թվում՝ աշխարհագրական գիտության առջև:

Անցումային շրջանի հասարակությունը բնութագրող երևույթների ու գործընթացների ուսումնասիրությունը աշխարհագրական, հատկապես բնակչության աշխարհագրության տեսանկյունից, ունի առաջնային նշանակություն ու կարևորություն, պայմանավորված բնակչության թվի, կազմի, կառուցվածքի, տեղաբաշխման առանձնահատկությունների, միգրացիայի և ժողովրդագրական այլ գործընթացներին վերաբերող բազմաբնույթ իրողությունների փոփոխությամբ:

Նշված իրադարձությունների շարքում իր ծավալներով ու աննախադեպ ազդեցությամբ առանձնանում է 1988թ. դեկտեմբերի 7-ի «Սպիտակի» երկրաշարժը, որն ընդգրկել է հանրապետության տարածքի շուրջ 40%-ը: Վթարային են դարձել կամ ավերվել տասնյակ հազարավոր բնակելի տներ, արդյունաբերական ձեռնարկություններ, գիտակրթական ու մշակութային հաստատություններ, խաթարվել է բազմաթիվ քաղաքային ու գյուղական բնակավայրերի կենսագործունեությունը:

Աղետին հաջորդած ժամանակահատվածում նախկին ԽՍՀՄ ու ՀՀ ղեկավարության կողմից ձեռնարկվել են երկրաշարժի հետե-

վանքների վերացման բազմաթիվ միջոցառումներ: Իրականացվել են համալիր, մեծ ծավալի շինարարական-վերականգնողական աշխատանքներ, այդ թվում՝ ավերված կամ վթարային դարձած բնակարանների, արդյունաբերական ձեռնարկությունների, գիտակրթական, մշակութային, առողջապահական և այլ հաստատությունների մասնաշենքերի ամրացում և նորերի կառուցում: Սակայն, վիճակագրական տվյալների, հրապարակի վրա եղած հետազոտությունների, ինչպես նաև մեր կողմից կատարված աշխատանքների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ցայսօր երկրաշարժի հետևանքներն ամբողջապես հաղթահարված չեն: Որոշ բնակավայրերում դեռևս բավականին մեծ է ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքների թիվը (Գյումրիում պահպանվել են առանձին տնակային թաղամասեր՝ քաղաքային ավտոկայանի, Ազնավուրի հրապարակի հարևանությամբ), չեն վերագործարկվել բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ, դանդաղ է ընթանում նոր արտադրական հզորությունների ստեղծման, բնակչությանն աշխատանքով ապահովելու գործընթացը:

Աղետի գոտու ամբողջական վերականգնման, այն Ջարգացման գոտի դարձնելու կարևոր հիմնախնդրին վերջին տարիներին անդրադառնում են ինչպես հանրապետության իշխանությունները, այնպես էլ գիտնականներ՝ աշխարհագրագետներ, տնտեսագետներ, պատմաբաններ, սոցիոլոգներ: Տարբեր ուսումնասիրություններում հիմնավորվում է, որ Աղետի գոտում ընթացող գործընթացների համակողմանի գիտական վերլուծությունը, հիմնախնդիրների բացահայտումն ու համալիր լուծումների առաջարկները կնպաստեն ոչ միայն Աղետի գոտու վերականգնմանը, այլ այնպիսի ծրագրերի մշակմանը, որոնք հաշվի կառնեն բնակչության հիմնական կարիքներին ու պահանջմունքներին առնչվող խնդիրները և իսկապես կընձեռեն Աղետի գոտին Ջարգացման գոտի դարձնելու հնարավորություններ:

Շիրակի մարզում թվարկված հիմնախնդիրներն առավել մեծ կարևորություն ունեն, քանի որ այն Աղետի գոտու մաս կազ-

մող այլ մարզերից առանձնանում է մարդկային զոհերի թվով և ավերածությունների աստիճանով:

Մարզում առկա բազմաթիվ չլուծված հիմնախնդիրներով էր պայմանավորված նաև **ՀՊԿ-Հայաստան Կենտրոնին** ներկայացված հետազոտական առաջարկը:

Հետազոտության հիմնական նպատակը 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժին հաջորդած ժամանակահատվածում Շիրակի մարզի բնակչության միգրացիոն շարժերի աշխարհագրական վերլուծությունն է, դրանք պայմանավորող տարբեր գործոնների ու վերջիններիս փոխկապակցվածության բացահայտումը, Շիրակի մարզի քաղաքային ու գյուղական բնակչության վերարտադրության վրա այդ շարժերի ունեցած ազդեցության գնահատումը և զարգացման հնարավոր գործընթացների դիտարկումը:

Որպես ելակետային դիտվում է այն թեզը, որ չնայած ձեռնարկված միջոցառումներին, երկրաշարժի ազդեցությունն ու հետևանքների ամբողջական վերացումը դեռևս մնում է շարունակական գործընթաց: Ասվածն ապացուցվում է ոչ միայն Աղետի գոտում, այդ թվում՝ Շիրակի մարզում բնակարանային դեռևս չլուծված հիմնախնդրի առկայությամբ, այլև բնակչության կենսամակարդակի կտրուկ անկման, զանգվածային գործազրկության ու արտագաղթի հետ կապված բազմաթիվ իրողություններով:

Հետազոտական առաջարկում կարևորվել են հետևյալ խնդիրները.

1. Ընդհանուր գծերով բնութագրել Շիրակի մարզի տեղը և դերը ՀՀ տնտեսական համալիրում: Առանձնահատուկ ուշադրություն դարձնել մարզի տնտեսական բնութագրին, ներուժին, տնտեսության զարգացման միտումներին:

2. Վերլուծել Շիրակի մարզի բնակչության թվաքանակի փոփոխությունները, տեղաբաշխման առանձնահատկությունները, քաղաքային և գյուղական տարաբնակեցումը, կարևորելով միգրացիաների ազդեցությունը թվարկված գործընթացների վրա:

3. Ուսումնասիրել մարզի բնակչության միգրացիաները պայմանավորող հիմնական գործոնները, առանձնացնելով ոչ միայն «Սպիտակի» երկրաշարժը, այլև վերջին տարիներին ՀՀ-ում իրականացված վերափոխումների ազդեցությունը բնակչության միգրացիաների վրա:

4. Ուսումնասիրել բնակչության տեղաշարժերը, վերջիններիս ուղղությունները (ներքին և արտաքին միգրացիա): Առանձնակի ուշադրություն դարձնել բնակչության միգրացիաների, հատկապես աշխատանքային միգրացիաների՝ աշխատաշուկայի, զբաղվածության համակարգի, բնակչության տարբեր խմբերի եկամուտների ու ընտանեկան բյուջեի ձևավորման վրա ունեցած ազդեցությանը:

5. Հետազոտության արդյունքների հիման վրա ներկայացնել առաջարկություններ միգրացիաների կարգավորման հնարավորությունների, ինչպես նաև Աղետի գոտին Ջարգացման գոտի դարձնելու ծրագրերի մշակման համար:

Շիրակի մարզի բնակչության տեղաշարժերի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի այն առումով, որ հնարավորություն է ընձեռում դիտարկել ոչ միայն դրանք պայմանավորող գործոններն ու դրանցում կարևորել 1988թ. դեկտեմբերյան երկրաշարժի ուղղակի ազդեցությունն ու հետևանքները, այլ նաև բացահայտել, թե միգրացիաների արդյունքում ինչպիսի փոփոխություններ են առաջացել բնակչության տեղաբաշխման և տարաբնակեցման համակարգում, ինչպես նաև ժողովրդագրական հիմնական ցուցանիշներում:

Գաղտնիք չէ, որ վերջին մեկուկես տասնամյակում բնակչության տեղաշարժերը, հատկապես զանգվածային արտագաղթն ու արտագնացությունը հանրապետության առջև ծառայած կարևորագույն հիմնախնդիրների շարքում են: Դրանք վտանգում են ինչպես հանրապետության, այնպես էլ առանձին վարչատարածքային միավորների բնականոն զարգացման գործընթացները և ազդում ժողովրդագրական ցուցանիշների վրա: Երևույթն առկա է

ոչ միայն ՀՀ-ում, այլև անցումային շրջան ապրող այլ հասարակություններում, որոնցում որպես սոցիալ-տնտեսական ճգնաժամի հաղթահարման հիմնական այլընտրանքային տարբերակ հանդես է գալիս բարձր կենսամակարդակ ու սոցիալական շարժունության ավելի մեծ հնարավորություններ ունեցող պետություններ տեղափոխվելը:

Շիրակի մարզն այս տեսանկյունից ևս բացառություն չէ: Ավելին, արտագաղթն ու արտագնացությունն այստեղ ստացել են ավելի սուր դրսևորումներ, քանի որ գոյատևման խնդիրներին ավելացել են տարրական կենցաղային պայմանների ապահովման հարցերը: Պատահական չէ, որ անցկացված հարցման արդյունքներում բավականին մեծ է այն անձանց թիվը, ովքեր արտագնա աշխատանքների են մեկնում բնակարանային խնդրի լուծման նպատակով:

Ուսումնասիրությունում կիրառվել են աշխարհագրական գիտության մեջ ընդունված հետազոտական ու վերլուծական մեթոդներ: Օգտագործվել է խնդրո առարկայի վերաբերյալ հրապարակի վրա եղած աշխարհագրական, վիճակագրական, սոցիոլոգիական, ազգաբանական ու մշակութաբանական հիմնական գրականությունը: Համակողմանի քննության են ենթարկվել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նյութերը, հրապարակված վիճակագրական ժողովածուներն ու տարեգրքերը, ինչպես նաև 2001թ. մարդահամարի արդյունքները:

Ամբողջական տվյալներ ստանալու ու դրանք ընդհանրացնելու նպատակով անցկացվել է սոցիոլոգիական հարցում՝ զանգվածային և փորձագիտական հարցաթերթերի միջոցով: Հարցմանը, պատահական ընտրանքով, մասնակցել է 250 տնային տնտեսություն (հարցաթերթը վերաբերել է տնային տնտեսության ինչպես ներկա, այնպես էլ բացակա անդամներին)՝ Գյումրի, Արթիկ, Մարալիկ քաղաքային և Ազատան, Արփենի ու Պենզաշեն գյուղական համայնքներում:

Ձանգվածային հարցման հարցաթերթը ներառել է ընտանիքի սեռատարիքային ու մասնագիտական կազմին, զբաղմունքներին, կենսամակարդակին, ընտանիքի տարբեր անդամների միգրացիային վերաբերող հարցեր:

Պաշտոնական վիճակագրական տվյալների բացը լրացնելու նպատակով հարցաթերթում կարևորվել են միգրանտների նախկին և ներկայիս զբաղվածության ոլորտների, եկամուտների, շարժունության, ադապտացիայի, բնակության վայրի ընտրության և այլ հարցերը: Այսինքն, փորձ է արվել ներառել ինչպես միգրացիան պայմանավորող, այնպես էլ որպես միգրացիայի հետևանք հանդես եկող գործոնների ամբողջ համախումբը:

Փորձագիտական հարցմանը մասնակցել է 50 փորձագետ՝ մարզպետարանի ու տեղական ինքնակառավարման մարմինների, կրթական ու առողջապահական համակարգերի, սոցիալական ծառայությունների ու բանկային համակարգի ներկայացուցիչներ:

Ինչպես հետազոտական ծրագրի առաջարկի, այնպես էլ իրագործման և արդյունքների ամփոփման փուլերում գիտակցում էինք, որ հնարավոր չէ մեկ ուսումնասիրությամբ պատասխանել միգրացիաներին ու հատկապես աշխատանքային միգրացիաներին վերաբերող բոլոր հարցերին: Հիմնական բարդությունը նրանում է, որ այսօր բազմաթիվ գործընթացներ կայացման փուլում են ու բարդ է դրանց վերջնական արդյունքների ու հնարավոր զարգացումների վերաբերյալ գիտական կանխատեսումներ կատարելը: Որոշ գործընթացներ ուղղակիորեն կապված են հանրապետության ու մարզի հնարավոր սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացումների հետ: Չափազանց կարևոր է այն, թե ինչպիսի արդյունք կտան շարունակվող վերափոխումները, ինչպիսին կլինեն կառավարման համակարգի ապակենտրոնացման արդյունքները:

Կարծում ենք, որ անկախ առկա բարդություններից, հարցման արդյունքները թույլ են տալիս դիտարկել Շիրակի մարզի բնակչության տեղաշարժերի առանձնահատկությունները և դրանք

համադրելով այլ վիճակագրական տվյալների ու ուսումնասիրությունների հետ, ընդհանրացնել միգրացիաների ազդեցության ու հնարավոր հետևանքների հետ կապված բազմաթիվ հարցեր:

Չետագոտությունը ցույց տվեց, որ մարզի բնակչությունը, որի մեծ մասի մոտ, ցավոք, անցած տարիների ընթացքում ամրագրվել է «աղետյալի հոգեբանությունը», չափազանց զգայուն է ու արագ է արձագանքում և՛ դրական և՛ բացասական տեղաշարժերին:

Ուստի, ստեղծված իրավիճակում կարևորվում են այնպիսի ուսումնասիրությունները, որոնցում առաջնային են կիրառական-գործնական առումները: Դրանք հնարավորություն կտան ոչ միայն վերլուծել ստեղծված իրավիճակը, բացահայտել պատճառների ու հետևանքների ամբողջ համախումբը, այլ նաև կանխատեսումներ կատարել:

Չմոռանանք, որ բացի ներքին հիմնախնդիրների առկայությունից, հանրապետությունը կանգնած է բավականին լուրջ մարտահրավերների առջև: Աշխարհը փոխվում է բավականին արագ: Ուստի արձագանքները նույնպես պետք է լինեն համարժեք, որպեսզի ապահովվեն բնականոն զարգացման հիմքերն ու երաշխիքները:

Չեղինակն իր շնորհակալությունն է հայտնում ուսումնասիրությանը նպաստ բերած բոլոր անձանց ու հաստատություններին՝ Չետագոտական Ռեսուրսների Կովկասյան Կենտրոններ /ՅՈՒՆԿԵՎ-Չայաստան Կենտրոնի աշխատակազմին, սոցիոլոգիական հարցման անցկացմանն աջակցած անհատներին ու կազմակերպություններին:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍԱԿՆԱՐՅԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵՂԸ ԵՎ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ

**Տարածքը, սահմանները,
աշխարհագրական դիրքը**

Շիրակի մարզի տարածքը գրեթե համընկնում է համանուն ֆիզիկաաշխարհագրական շրջանին, որի բնական սահմանները հյուսիս-արևմուտքում, արևելքում և մասամբ հարավում անցնում են ջրբաժան լեռներով:

Տարածքի առանձնահատկություններից է ընդհանուր բարձր դիրքը, որի մեծ մասը գտնվում է 1500 մ-ից ավելի բացարձակ բարձրություններում, իսկ այն եզրավորող լեռնաշղթաներն ու լեռնավահանները, ինչպես նաև ընդհանուր հարթության վրա բարձրացող առանձին բարձունքները՝ հրաբխային, խարամային և այլ կոները, գրեթե չեն խախտում Շիրակի ռելիեֆի համեմատաբար մեղմ բնույթը: Ռելիեֆի կենտրոնական տարրը Շիրակի բարձրադիր հարթությունն է, որը տարածվում է Ախուրյան գետի միջին հոսանքի սահմաններում, նրա ավերին: Շիրակի դաշտից հյուսիս, Ախուրյանի վերին հոսանքի ավազանում, նրանից համանուն ծալքավոր լեռնաշղթայով բաժանված, գտնվում է շրջանի մյուս հարթությունը՝ Վերին Ախուրյանի կամ Աշոցքի գոգավորությունը: Շիրակի դաշտից հարավ ռելիեֆի բնույթը փոխվում է և համեմատաբար ավելի բարդ է: Դա Արագածի հյուսիս-արևմտյան և արևմտյան ստորոտների շրջանն է, որի բնորոշ գիծը ոչ մեծ հարթությունների ու գոգավորությունների և դրանք շրջափակող բարձունքների հերթափոխությունն է¹: Ռելիեֆի մեջ ուրույն տեղ է գրավում Արագածի լեռնավահանը, որի հյուսիսային, հյուսիս-արևմտյան և մասամբ՝ արևմտյան լանջերը, գտնվում են մարզի սահմաններում:

Շիրակի մարզը հյուսիսում սահմանակից է Վրաստանի, արևմուտքում՝ Թուրքիայի հանրապետություններին: Հանրապե-

¹ Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Եր., 1971, էջ 320-322:

տությունում այն սահմանակից է Լոռու և Արագածոտնի մարզերին:

Մարզը գտնվում է հանրապետության ծայր հյուսիսարևմտյան մասում և ըստ էության, նրա դիրքը կարելի է համարել ոչ այնքան բարենպաստ: Սակայն, հաղորդակցության զարգացած ցանցի առկայությունը (երկաթուղիներն ու ավտոմոբիլային գլխավոր ճանապարհները մարզի նկատմամբ ունեն առանցքային դիրք ու հատվում են Գյումրիի տրանսպորտային հանգույցում) և վերջինիս տարանցիկ նշանակությունը տնտեսաաշխարհագրական տեսանկյունից նրա դիրքը դարձնում են նպաստավոր: Մարզի տարածքով իրար հետ են կապվում Հայաստանն ու Վրաստանը (գլխավոր ավտոմայրուղով ու երկաթգծով), նրա միջոցով են միանում նաև Հայաստանի և Թուրքիայի երկաթուղային ու ավտոճանապարհային ցանցերը:

Քաղաքական-աշխարհագրական դիրքի գնահատականը միանշանակ չէ: Մի կողմից, Վրաստանին սահմանակից լինելը, կայունության պահպանման դեպքում, կարող է խթանել մարզի տնտեսական զարգացմանը՝ նպաստավոր կապեր հաստատելու տեսանկյունից: Մյուս կողմից՝ Թուրքիային սահմանակից լինելը և վերջինիս հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը դեռևս հնարավորություն չեն տալիս օգտագործելու սահմանային դիրքը տնտեսական կապերի հաստատման և համագործակցության համար²:

Փաստորեն, մարզի տնտեսաաշխարհագրական դիրքը նպաստավոր է ինչպես հաղորդակցության հնարավորությունների, այնպես էլ, բարենպաստ քաղաքական իրավիճակի առկայության պայմաններում՝ տնտեսության տարբեր ճյուղերի և առևտրի զարգացման տեսանկյունից:

²Աշխարհաքաղաքական հնարավոր զարգացումները, հատկապես Թուրքիայի և Վրաստանի միջև վերջերս ձեռք բերված համաձայնությունը Կարս-Ախալքալակ նոր երկաթգծի կառուցման մասին, առաջիկայում կարող են

Բնական պայմաններն ու ռեսուրսները

Շիրակի մարզի բնական պայմանների առանձնահատկությունը նրանում է, որ նրա տարածքի շուրջ 50%-ը գտնվում է 2000մ-ից բարձր: Եթե վերանանք մասնավոր դեպքերից, ապա Հայաստանի աշխարհագրական լայնություններում մարդու կյանքի և աշխատանքի համար առավել նպաստավոր պայմաններ կան մինչև 1400մ բացարձակ բարձրություն ունեցող գոտում, որից հետո դրանք նկատելիորեն վատանում են: Սկսած 2000մ-ից պայմանները դառնում են անբարենպաստ, երևան են գալիս արտադրական բնույթի դժվարություններ³:

Մարզի մակերևույթի որակական գնահատականն ըստ թեքությունների մեծության դիտարկելիս պարզ է դառնում, որ նրա տարածքի զգալի մասը (շուրջ 80%-ը) տնտեսական յուրացման տեսանկյունից ունի համեմատաբար նպաստավոր ռելիեֆային պայմաններ: Սպասվելիք առավելագույն ուժի երկրաշարժերի ինտենսիվությունը Շիրակի մարզում կարող է լինել 9 բալ: Դրանք ծագմամբ գերազանցապես կապվում են ակտիվ խորքային բեկվածքների հատման հանգույցների հետ⁴, որոնցից մարզի տարածքում է գտնվում Գյումրիի հանգույցը: Սեյսմիկ առավել վտանգավոր գոտու մեջ է մտնում Շիրակի դաշտը:

Օգտակար հանածոները: Մետաղային օգտակար հանածոները մարզում լայն տարածում չունեն: Առավել հետաքրքիր է Սևան-Ամասիայի «մետաղաբեր» գոտու հեռավոր՝ Ամասիայի հանքային շրջանը, որտեղ հայտնաբերված են ծարիրի, մկնդեղի, սնդիկի երևակումներ և նրանց հետ ոսկու համակցվածությունն առանձին դեպքերում հաստատված է:

Շիրակի մարզը հարուստ է բազմազան ոչ մետաղային օգտակար հանածոներով, որոնց մեջ առանձնահատուկ տեղ են գրա-

նվազեցնել Գյումրի-Կարս երկաթգծի կարևորությունը, քանի որ համաձայնագրի կատարման դեպքում Հայաստանը շրջանցվում է:

³ Լ. Վալեսյան, Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Եր., 1988, էջ 22:

⁴ Հայկական Սովետական հանրագիտարան, հ. 12, Սովետական Հայաստան, Եր., 1987, էջ 43:

վում բնական շինանյութերը, իսկ շահագործվող տուֆի պաշարներով մարզը հանրապետությունում առաջինն է:

Մարզի տարածքում հայտնաբերված են բնական շինանյութերի գրեթե բոլոր տեսակների հանքավայրեր, ինչպես նաև արհեստական շինանյութերի արտադրության համար անհրաժեշտ հումքի պաշարներ, ինչը շինանյութերի արդյունաբերությանն ապահովում է և առաջիկայում էլ կարող է ապահովել անհրաժեշտ հումքային բազայով: Ներկայումս, շինարարական աշխատանքների բավականին մեծ ծավալների հետ կապված, ակտիվորեն շահագործվում են Արթիկի, Պենզաշենի և այլ հանքավայրերը:

Որպես քիմիական հումք մարզում արդյունաբերական հետաքրքրություն է ներկայացնում Ջաջուռի կրաքարի հանքավայրը: Դիատոմիտի հանքավայրերից են Մուսայելյանի, Գյումրիի ոչ մեծ հանքավայրերը:

Չնայած ոչ մետաղային օգտակար հանածոների բազմազանությանը, ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Շիրակի մարզում գրեթե բացակայում են վառելիքային ռեսուրսները: Գորշ ածխի ոչ մեծ պաշարներ կան Ջաջուռի հանքավայրում, որի հիդրոէկրաբանական պայմանները բարենպաստ չեն և արդյունահանումը չի կարելի շահավետ համարել:

Կարելի է եզրակացնել, որ մարզի տնտեսական զարգացման լուրջ խթան կարող է հանդիսանալ հանքահումքային ռեսուրսների կան դրանց մի մասի շահագործման բարենպաստ պայմանների ապահովումը, ինչը, բնականաբար, կհանգեցնի լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման ու սոցիալական լարվածության թուլացման: Ջարգացման հեռանկարային ծրագրերի մշակման ընթացքում նույնպես պետք է հաշվի առնվի հանքահումքային ռեսուրսների առկայությունը՝ առավել արդյունավետ ծրագրերի իրագործման տեսանկյունից:

Կլիմայական պայմանները: Մարզի կլիմայական պայմաններն ընդհանուր առմամբ բնորոշվում են որպես բարեխառն, փոփոխվում են ըստ բարձրության, սակայն համեմատաբար միատարր են և առանձնանում են երեք հիմնական տիպով. ա) բարեխառն, երկարատև տաք ամառներով և ցուրտ ձմեռներով, բ) բարե-

խառն, կարճատև զով ամառներով և ցուրտ ձմեռներով, **գ)** լեռնատունդրային: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է $-12 - -8^{\circ}$ -ի միջև: Այստեղ է գտնվում Պաղակնը՝ Արփիի ջրամբարի ափին (համարվում է հանրապետության ամենացուրտ վայրը, ուր բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է մինչև 42°)⁵, սառնամանիքները հասնում են մինչև $-30 - -35^{\circ}$ -ի: Ամառը տաք է՝ հուլիս–օգոստոս ամիսներին ջերմաստիճանը տատանվում է $18-20^{\circ}$ -ի միջև, առավելագույնը՝ մինչև 35° : 10° -ից բարձր ջերմաստիճանների գումարը հավասար է $2000-3600^{\circ}$ -ի⁶: Անսառնամանիք օրերի թիվը 150–180 է, տարեկան մթնոլորտային տեղումները 450–750մմ են: Վեգետացիոն շրջանը տևում է 40–170 օր:

Ջրային ռեսուրսները: Շիրակի մարզի հիմնական ջրային զարկերակը՝ Ախուրյան գետը, իր ընթացքի մեծ մասով սահմանային է, վերին հոսանքի հատվածում հոսում է անդնդախոր կիրճով և այդ հատվածում քիչ օգտագործելի է: Այն սնում է Ախուրյանի ջրամբարը, իսկ Շիրակի ջրանցքի միջոցով ոռոգում է համանուն դաշտի նշանակալից տարածքներ: Ախուրյանի միջին տարեկան ծախսը $31.8\text{մ}^3/\text{վ}$ է, հոսքի մոդուլը՝ $3.91 \text{լ}/\text{վ կմ}^2$: Գետի վրա կառուցված է Գյումրիի ջրաէլեկտրակայանը: Ախուրյանի էներգիայի տարեկան տեխնիկական պաշարները կազմում են 791.6մլն կՎտ/ժ, տարեկան տնտեսապես արդյունավետ պաշարները՝ 144.0մլն կՎտ/ժ⁷:

Այստեղ են գտնվում Ախուրյանի, Արփիի, Մանթաշի, Կառնուտի, Թավշուտի, Սառնաղբյուրի և այլ ջրամբարները, որոնցից ամենամեծը Ախուրյանի ջրամբարն է (ջրամբարի ընդհանուր ծավալը կազմում է 525 մլն մ³, ջրթողունակությունը՝ $70\text{մ}^3/\text{վրկ}$)⁸:

⁵ Բ. Մնացականյան, Ա. Աջամօղլյան, Շիրակի կլիման և ջրերը, Եր., 2005, էջ 42:

⁶ Հայկական ԽՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Եր., 1971, էջ 319-331:

⁷ Է. Անթոնյի, Ի ծի Եժաի անՕաի րի -ՕանժեՕի ժեանի մե Էի րի Էան Աժի րի Դեի Է ՆՆԾ, Աժանի, 1970, էջ 233:

⁸ Ս. Մանասյան, Ա. Գրիգորյան, Ա. Պոտոսյան, Շիրակի մարզի բնությունը, բնակչությունը, տնտեսությունը, Եր., 2002, էջ 29: Տես նաև՝ Բ. Մնացականյան, Ա. Աջամօղլյան, նշվ. աշխ., էջ 134-147:

Նրանցից յուրաքանչյուրը նշանակալից դեր է խաղում ամռան ամիսներին ոռոգման ջուր մատակարարելու գործում:

Ջրային ռեսուրսների շարքում կարևոր նշանակություն ունեն ստորերկրյա ջրերի պաշարները, որոնք արդյունաբերական, կոմունալ-կենցաղային և գյուղատնտեսական ջրամատակարարման համար կարևոր աղբյուր են համարվում: Մարզում է գտնվում Ախուրյանի արտեզյան ավազանը:

Բնական ռեսուրսների շարքում առանձնահատուկ նշանակություն ունեն *Ռեկրեացիոն ռեսուրսները*, որոնք օգտագործվում են բնակչության հանգստի և առողջապահության կազմակերպման համար: Ռեկրեացիոն գործունեության տուրիստական-մարզական ձևերի զարգացման բնական նախադրյալներ կան Ախուրյանի ավազանում: Ռեկրեացիոն գործունեության կազմակերպման ռացիոնալ եղանակների մշակումը և համապատասխան ծրագրերի իրականացումը կարող է նպաստել առկա հիմնախնդիրների մի մասի մեղմմանը, մասնավորապես՝ բնակչության զբաղվածության ապահովմանը, ինչպես նաև ներդրումային գրավչության բարելավմանը:

Կլիմայական պայմանների, ջրային ու ռեկրեացիոն ռեսուրսների ընդհանուր գծերով դիտարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ վերջիններս, չնայած առաջին հայացքից դժվար բացահայտելի, այնուամենայնիվ որոշակի ազդեցություն ունեն բնակչության միգրացիոն շարժերի վրա:

Չողային ռեսուրսները: Բնության տարրերի շարքում հողը, հանդիսանալով գյուղատնտեսության գլխավոր արտադրամիջոցը, առանձնահատուկ տեղ է զբաղեցնում:

Մարզի հողահանդակների կառուցվածքում գյուղատնտեսական հանդակների բաժինը հանրապետության միջին ցուցանիշից բարձր է: Համեմատաբար մեծ տարածում ունեն վարելահողերը: Սակայն երկրաշարժից հետո գյուղատնտեսական հողահանդակների կառուցվածքը ենթարկվել է որոշ փոփոխությունների, ինչի պատճառների շարքին պետք է դասել հատկապես երկրաշարժից հետո ծավալված շինարարական աշխատանքները, ավերածություններից գոյացած շինարարական թափոնների ու աղբի

կուտակումներն առավել արժեքավոր հողերի վրա⁹: Դա նկատելի է հատկապես Գյումրիում և նրա շրջակայքում, որտեղ նոր թաղամասերի կառուցումն իրականացվեց արժեքավոր վարելահողերի վրա: Արդյունքում դրանք դուրս մնացին գյուղատնտեսական շրջանառությունից: Այսպես՝ եթե 1988թ. Շիրակի մարզի վարելահողերը զբաղեցնում էին 86366 հա տարածություն, ապա 2003թ.՝ 84535 հա: Համեմատության համար նշենք, որ Վանաձորում և Սպիտակում նույնպես որոշ նոր թաղամասեր կառուցվել են քաղաքների նախկին շրջագծից դուրս, օրինակ՝ Վանաձորի Տարոն թաղամասը:

Մարզի բնական ռեսուրսների համառոտ վերլուծությունն ու գնահատումը թույլ են տալիս եզրակացնելու, որ այստեղ բազմազան են ինչպես հանքահումքային, այնպես էլ հողակլիմայական ռեսուրսները: Առաջիկա տարիներին նրանց լայնածավալ և հաշվենկատ օգտագործումը նշանակալիորեն կխթանի մարզի տնտեսության և հատկապես արդյունաբերության ճյուղերի կայուն տեմպերով զարգացումը:

Շիրակի մարզի տեղը և դերը հանրապետության տնտեսական համալիրում

Շիրակի մարզի տեղը և դերը հանրապետության տնտեսական համալիրում բավականին մեծ է: Այստեղ մինչև երկրաշարժը թողարկվում էր ՀԽՍՀ արդյունաբերական համախառն արտադրանքի զգալի մասը: Բավականին զարգացած էր նաև գյուղատնտեսությունը. մարզը հացահատիկի, կարտոֆիլի, անասնապահական մթերքների արտադրության գործում առաջատար դեր էր խաղում, իսկ տեխնիկական մշակաբույսերից՝ շաքարի ճակնդեղի հիմնական արտադրողն էր:

Երկրաշարժը, ինչպես նշվեց, էապես ազդեց մարզի տնտեսության վրա: Սակայն վերականգնման ծրագրերում առաջնային համարվեց առավել հրատապ ու կենսական նշանակություն ունե-

⁹Տես՝ Խ. Նազարյան, Շիրակի մարզի բնական լանդշաֆտների անտրոպոգեն փոփոխությունները.- Աշխարհագրություն 2001, Եր., 2002, էջ 5-10:

ցող խնդիրը՝ բնակչությանը բնակարաններով ապահովելը և հետո միայն արդյունաբերական ձեռնարկությունների վերակառուցումն ու վերագործարկումը:

Թվարկված և այլ պատճառներով, վերջին մեկուկես տասնամյակում փոխվել է մարզի տեղը և դերը հանրապետության տնտեսության մեջ: Մինչև 1980-ական թվականների վերջը մարզը, որը տարածքով գրեթե համընկնում է Շիրակի սոցիալ-տնտեսական շրջանի հետ, իր տնտեսական ներուժով հանրապետությունում երկրորդ տեղն էր գրավում, զիջելով միայն Արարատյան շրջանին: Տնտեսական զարգացման մակարդակով (1 շնչին ընկնող ընդհանրական հասարակական արդյունքի և ազգային եկամտի հաշվով) այն զիջել է նաև Լոռի-Փամբակի շրջանին: Շիրակի տնտեսական շրջանը հանրապետության տնտեսությունում ունեցած կշռով Լոռի-Փամբակի տնտեսական շրջանի հետ գտնվել է մոտավորապես նույն մակարդակի վրա: Ինչ վերաբերում է Շիրակի շրջանի որակական կողմին, այսինքն նրա՝ որպես հանրապետական նշանակության տարածքային-արտադրական համալիրի զարգացման մակարդակին, ապա այստեղ բնութագրող ցուցանիշներն ավելի բարձր են եղել¹⁰:

Ձարգանում էր բազմաճյուղ արդյունաբերություն, որում առաջատար էին մեքենաշինությունը, թեթև և սննդի արդյունաբերությունը¹¹: ՀՀ արդյունաբերության տարածքային բաժանման համակարգում առավել բարձր տեսակարար կշիռ են ունեցել թեթև արդյունաբերության գծով՝ բամբակե մանվածքի և գործվածքների, գուլպեղենի, մեքենաշինության գծով՝ էլեկտրատեխնիկական մեքենաների, մետաղահատ ու քարահատ հաստոցների, դարբնոցամամլիչային մեքենաների, սննդի արդյունաբերության գծով՝ մսի, մսի պահածոների ու երշիկեղենի արտադրությունները:

Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում առանձնանում էին շաքարի ճակնդեղի արտադրությունը, հացահատիկի

¹⁰ Լ. Վալեսյան, նշվ. աշխ., էջ 399-400:

¹¹ Լ. Մարտիրոսյան, Դ. Պողոսյան, Ա. Նահապետյան, Լ. Վալեսյան, Շիրակի մարզի գյուղատնտեսության աշխարհագրություն, Եր., 2001, էջ 11:

մշակությունը, կարտոֆիլագործությունը, բանջարաբուծությունը և կաթնատու անասնապահությունը:

«Սպիտակի» երկրաշարժը, ԽՍՀՄ փլուզումը, անկախ պետության ձևավորման դժվարին ուղին պայմանավորեցին մարզի տնտեսության խոր անկումը: 1998թ. մարզին բաժին է ընկել ՀՀ արդյունաբերական արտադրանքի ընդամենը 1.6-3.8%: Այս ցուցանիշով այն գերազանցել է միայն Արագածոտնի, Տավուշի և Վայոց Ձորի մարզերին: Համեմատաբար բարվոք է գյուղատնտեսության վիճակը, այսպես, 1998թ. հանրապետության գյուղատնտեսական արտադրանքի մեջ մարզի գյուղատնտեսական արտադրանքի տեսակարար կշիռը կազմել է 9.8-10.1% (Արմավիրի, Գեղարքունիքի, Արարատի և Լոռու մարզերից հետո)¹²: Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում առաջատար է հացահատիկի արտադրությունը, որի ծավալով մարզը 1998թ. հանրապետությունում գրավել է առաջին տեղը: Առանձնանում են նաև կարտոֆիլի և բանջարեղենի մշակությունը: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով մարզը զիջել է միայն Գեղարքունիքի մարզին, իսկ մանր եղջերավոր անասունների գլխաքանակով հինգերորդն էր:

Ներկայումս դանդաղորեն վերականգնվում են մարզի տնտեսությունն ու արտադրական հզորությունները: Արդյունաբերության առաջատար ճյուղերից են սննդի արդյունաբերությունը և բնական շինանյութերի արտադրությունը:

2002թ. մարզի արդյունաբերության տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում կազմել է 3.2%, գյուղատնտեսության տեսակարար կշիռը՝ 10.0%: Մարզում զարգացած են հացահատիկային մշակաբույսերի մշակությունն ու անասնապահությունը:

Ինչպես երևում է, մարզի տնտեսության առանձին ճյուղերի զարգացումը ենթարկվել է լուրջ փոփոխությունների: Էական է հատկապես արդյունաբերական արտադրանքի ծավալների կտրուկ անկումը: Ծանր վիճակում է հայտնվել Գյումրին, որտեղ

¹² Հայաստան, Տնտեսական միություններ, 1999թ., ապրիլ, էջ 21; ՀՀ մարզերը թվերով, 1999:

արդյունաբերական ձեռնարկությունների անգործությունն ուղեկցվում է զանգվածային գործազրկությամբ, բնակչության կենսամակարդակի անկումով, սոցիալ-մասնագիտական կառուցվածքի փոփոխություններով¹³:

Սեփականաշնորհման գործընթացները դեռևս չեն տվել ակնկալվող արդյունքը, անգործության է մատնված կամ մասնակի ծանրաբեռնվածությամբ է գործում սեփականաշնորհված ձեռնարկությունների մեծ մասը:

Բնական է, որ առաջիկայում, ինչպես ժողովրդագրական բնականոն իրավիճակի վերականգնման/ապահովման, այնպես էլ տնտեսության զարգացման համար կարևոր են տնտեսական հզորությունների վերագործարկման գործընթացները, առանց որոնց, ըստ էության, հնարավոր չէ ապահովել մարզի և հատկապես Գյումրի քաղաքի զարգացումը:

Գյուղատնտեսությունում կատարված փոփոխությունները նույնպես էական են: Հողային ֆոնդի մանրատումը, տեխնիկայի հետ կապված բարդությունները, թունաքիմիկատների ու բուժանյութերի թանկությունը սահմանափակում են ինտենսիվ գյուղատնտեսության վարման հնարավորությունները: Չնայած սրան, գյուղատնտեսությունը, ի տարբերություն արդյունաբերության, համեմատաբար ավելի արագ է վերականգնվում, հիմնականում կապված իրացման և ապրանքափոխանակության ավելի լայն հնարավորությունների, գյուղմթերքների վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների թվի աճի հետ:

**«Սպիտակի» երկրաշարժի սոցիալ-տնտեսական
հետևանքները և դրանց վերացման ուղղությամբ
ձեռնարկված միջոցառումները**

Տարերային աղետները, այդ թվում՝ երկրաշարժերը, դասվում են այն երևույթների շարքին, որոնք շեղում են բնական միջա-

¹³Այդ է վկայում նաև արդյունաբերա-արտադրական անձնակազմի տարեկան միջին թվի անընդհատ նվազումը. տես՝ Արդյունաբերություն, վիճակագրական ժողովածու, Եր., 1999, էջ 59:

վայրի վիճակը կենսագործունեության համար նպաստավոր առավելագույն սահմանից:

1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը, որը ստացել է «Սպիտակի երկրաշարժ» անվանումը, նախորդ 80 տարում Անդրկովկասում գրանցված ամենաուժեղ երկրաշարժն է¹⁴:

ՀՀ ԳԱԱ Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտի տվյալներով երկրաշարժի էպիկենտրոնը ունեցել է հետևյալ կոորդինատները՝ *հս. լայնության 40°22', արլ. երկայնության 44°23'*: Հիպոկենտրոնի խորությունը տարբեր է սկսած 2.5կմ-ից մինչև 10-15 կմ: Երկրաշարժի մագնիտուդը կազմել է 7.0, իսկ անջատված էներգիան՝ 10^{16} Ջ.: Ուժգնությունը էպիկենտրոնում Բագումի լեռնաշղթայում, Սպիտակ քաղաքից հյուսիս-արևմուտք, գնահատվել է 10 բալ (ըստ ՄՁՆ՝ սարքի գրանցումների):

Համաձայն 1988թ. ՀԽՍՀ վարչատարածքային բաժանման երկրաշարժի գոտին ընդգրկել է Ախուրյանի, Ամասիայի, Աշոցքի (Ղուկասյան)¹⁵, Անիի, Ապարանի, Արագածի, Արթիկի, Գուգարքի, Թալինի, Թումանյանի, Իջևանի, Նոյեմբերյանի, Սպիտակի, Ստեփանավանի, Տավուշի (Շամշադին), Տաշիրի (Կալինինո) վարչական շրջանները, Գյումրի (Լենինական), Վանաձոր (Կիրովական), Ալավերդի, Արթիկ, Դիլիջան, Իջևան, Սպիտակ, Ստեփանավան հանրապետական ենթակայության քաղաքները: Ներկայիս վարչատարածքային բաժանմամբ թվարկված նախկին վարչական շրջաններն ընդգրկվել են Լոռու, Շիրակի, Տավուշի և Արագածոտնի մարզերի կազմում: Չնայած երկրաշարժի ընդգրկմանն ու աննախադեպ ավերածություններին, առանձնանում են նաև առավել

¹⁴ «Սպիտակի» երկրաշարժն իր ուժգնությամբ և ընդգրկումով համեմատվում է մեր ժողովրդին հայտնի այնպիսի խոշոր երկրաշարժերի հետ, ինչպիսիք են Վայոց Ձորի 735թ., Դվինի 862թ., Գանձակի 1138թ., Սյունիքի 1143թ., Անիի 1329թ., Երզնկայի 1458, 1482, 1939թթ. երկրաշարժերը: Այն վկայում է, որ դեռևս չարունակվում են Ալա-Հիմալայան երիտասարդ լեռնային գոտու և դրա մաս հանդիսացող Հայկական լեռնաշխարհի ակտիվ լեռնակազմական պրոցեսները. - Լ. Վալեսյան, ԵՂՎ.աշխ., էջ 446: Տես նաև՝ Հ.Գաբրիելյան, Հայկական լեռնաշխարհ, Եր., 2000, էջ 55-58:

¹⁵ Կրկնություններից խուսափելու համար նախկին վարչատարածքային միավորների և քաղաքների հին անվանումները նշվում են միայն այստեղ:

տուժած շրջանները՝ Ախուրյան, Ամասիա, Աշոցք, Գուգարք, Թումանյան, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր¹⁶:

1988թ. դեկտեմբերի երկրաշարժը պատճառել է մեծ վնասներ ու ավերածություններ: Վիթխարի են երկրաշարժի պատճառած մարդկային զոհերը. պաշտոնական տվյալներով՝ 25000 մարդ¹⁷, ավերակների տակից հանել են 39742 մարդու:

Երկրաշարժի արդյունքում ավերվեց կամ վնասվեց հանրապետության արտադրական հզորությունների, ենթակառուցվածքների ու բնակարանային ֆոնդի զգալի մասը: Ավերվել է Աղետի գոտու բնակարանային ֆոնդի կեսը՝ մոտ 8.9 մլն. մ² մակերեսով, ինչը ՀՀ բնակֆոնդի շուրջ 17%-ն է կազմում¹⁸: Շիրակի մարզում ավերվել է 3677.0 հազ. մ² բնակելի մակերես: Ջգալիորեն տուժել է Գյումրին, որտեղ ավերվել է բնակելի, ծառայողական և արտադրական շենքերի 80%-ը: Երկրաշարժի հետևանքները բացասաբար են ազդել նաև բազմաթիվ այլ բնակավայրերի վրա, խաթարելով վերջիններիս բնական կենսագործունեությունը, էապես սահմանափակելով զարգացման հնարավորությունները:

Ամբողջովին կամ մասնակիորեն ավերվել է ավելի քան 230 արդյունաբերական օբյեկտ (ՀՀ արդյունաբերական կարողությունների 25%-ը)¹⁹: Մեծ վնաս է հասել ագրոարդյունաբերական համալիրին: Ավերվել կամ վթարային են դարձել հարյուրավոր դպրոցներ ու մանկապարտեզներ, հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, գրադարաններ, ակումբներ ու մշակույթի տներ:

¹⁶ ՀԽՍՀ դեկավարության կողմից երկրաշարժի ազդեցության գոտին հնարավորինս ընդլայնվում էր, ինչը հետապնդում էր նաև միութենական բյուջեից վերականգնման աշխատանքների համար մեծ գումարներ ստանալու և տեղում առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները լուծելու նպատակ: Սա չի նշանակում, որ առանձնացվող շրջաններն ընդհանրապես երկրաշարժից չէին տուժել: Ուղղակի տարբեր վարչական շրջաններում ավերածությունների չափերը տարբեր էին, հետևաբար, տարբեր էին նաև վերականգնման համար անհրաժեշտ միջոցները:

¹⁷ Ոչ պաշտոնական աղբյուրներում երկրաշարժի զոհերի ավելի մեծ թիվ է նշվում:

¹⁸ Ս. Նազարեթյան, Սպիտակի երկրաշարժը, Եր., 1991, (Ձեռագիր):

¹⁹ Շինարարական-վերականգնողական աշխատանքներն Աղետի գոտում 1989-1998թթ, Վիճակագրական ժողովածու, Եր., 1999, էջ 3:

Այսինքն, գործ ունենք այնպիսի իրողության հետ, երբ առկա են երկրաշարժի բացասական ազդեցությունն ու հետևանքները բնակչության կենսագործունեության բոլոր համակարգերի վրա: Եթե հաշվի առնենք, որ բացակայում էին նաև դրանց արագ վերականգնման հնարավորությունները, ակնհայտ է դառնում, որ երկրաշարժն ունի ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլ ուղղակի հասարակական, մշակութային ու հոգեբանական ազդեցություն բնակչության մի ստվար հատվածի վրա:

ԽՍՀՄ գոյության պայմաններում հայտարարվեց Աղետի գոտու վերականգնման կարճ ժամկետների մասին (նախատեսվում էր այն ավարտել երկու տարում)²⁰: Սակայն 1980-ական թթ. երկրորդ կեսից սկսված և 1990-ական թթ. սկզբին մեծ ծավալներ ընդունած գործընթացները խաթարեցին վերականգնման ծրագրերը:

Հայաստանը դեռ չէր թոթափել երկրաշարժի ծանր հետևանքները, երբ թևակոխեց անկախ պետականության ստեղծման, հասարակության իրավական, քաղաքական և սոցիալ-տնտեսական հիմքերի արմատական վերափոխումների դժվարին և երկարատև ուղին²¹: Նորանկախ հանրապետության ղեկավարության առջև միանգամից ծառայան խնդիրներ, որոնց լուծումը նյութական ու մարդկային ռեսուրսների աննախադեպ լարում ու համախմբում էին պահանջում: Միաժամանակ, այս ամենին ավելա-

²⁰ Տես՝ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը երկրաշարժից տուժած քաղաքների, քաղաքատիպ ավանների ու շրջկենտրոնների վերականգնման և կառուցման գործում Հայկական ՍՍՀ-ին օգնելու միջոցառումների մասին.-Սովետական Հայաստան, 5 հունվարի 1989; ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը Հայկական ՍՍՀ տարածքում երկրաշարժից տուժած արդյունաբերական ձեռնարկությունների և նրանց ենթակա սոցիալական ոլորտի օբյեկտների վերականգնման և կառուցման անհետաձգելի միջոցառումների մասին.-Սովետական Հայաստան, 7 հունվարի 1989; ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը Հայկական ՍՍՀ-ի երկրաշարժի հետևանքով տուժած շրջաններում գյուղական բնակավայրերի և ագրոարդյունաբերական համալիրի արտադրական օբյեկտների վերականգնման միջոցառումների մասին.- Սովետական Հայաստան, 6 հունվարի 1989:

²¹ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր I, Եր., 2000, էջ 17:

ցավ արտաքին քաղաքական ու տնտեսական գործոնների մի ամբողջ համալիր: Ամբողջապես խաթարվեց տասնամյակների ընթացքում ձևավորված տնտեսական համակարգը, 1990-ական թթ. սկզբին հանրապետությունում արձանագրվեց արդյունաբերական արտադրանքի թողարկման աննախադեպ անկում, տեղի ունեցավ հիպերինֆլյացիա: Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) 1993թ.-ին, 1989թ. համեմատությամբ, կրճատվեց 60%-ով, իսկ սպառողական զներն աճեցին մի քանի տասնյակ անգամ: Աննախադեպ էր նաև բնակչության իրական եկամուտների անկումը:

Բնական է, որ այս բոլոր գործոններն իրենց ուղղակի ազդեցությունն ունեցան Աղետի գոտու և վերջինիս մաս կազմող Շիրակի մարզի վերականգնման ծրագրերի ընթացքի ու ծավալների վրա: Շիրակի մարզը, ինչպես Աղետի գոտու մաս կազմող մյուս մարզերը, անկախության հռչակումից հետո բախվեց այնպիսի բարդությունների, որոնք էլ ավելի ծանրացրին իրավիճակը: Բնակարանային շինարարության անբավարար ծավալներն ու հիմնարկ-ձեռնարկությունների անգործությունը դարձան բնակչության ակտիվ տեղաշարժերի պատճառ, խախտվեց բնականոն ժողովրդագրական իրավիճակը:

Աղետի գոտում տարբեր գործոնների անբարենպաստ զուգակցման բացասական ազդեցության մասին է խոսում նաև այն, որ աղքատների ամենաբարձր տեսակարար կշիռը բաժին է ընկնում Շիրակի և Լոռու մարզերին, գերազանցելով միջին հանրապետական առանց այն էլ խիստ բարձր ցուցանիշները²²: Ըստ պաշտոնական վիճակագրության, Աղետի գոտում, ի թիվս ցածր կենսամակարդակ պայմանավորող այլ գործոնների, կարևոր են հատկապես բնակարանային ու զբաղվածության հիմնախնդիրները:

Անցած տարիներին կատարվել են գերազանցապես ոչ արտադրական նշանակության հիմնական ֆոնդերի գործարկման և շինմոնտաժային աշխատանքներ, ինչը, ըստ էության, չի նպաստել

²²Աղքատության նվազեցման ռազմավարական ծրագիր, Հայացք տնտեսությանը, 2001, թիվ 3; Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Եր., 2003: Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Եր., 2003:

կայուն աշխատատեղերի ստեղծմանը: Հիմնական պատճառը, ինչպես նշվեց, ճգնաժամային դարձած բնակարանային հիմնախնդիրը լուծելու ցանկությունն էր, որն իր հերթին թույլ չէր տալիս կատարել արտադրական հզորությունների վերականգնման աշխատանքներ, չնայած չէր լուծվում նաև բնակարանային հիմնախնդիրը: Այս ամենի հետևանքով հեռանում էր նաև աշխատանքային ռեսուրսների մեծ մասը: Սրան զուգահեռ, չէր վերադառնում հիմնական գրանցումից դուրս չեկած և հանրապետության տարբեր վայրերում ու հանրապետությունից դուրս հաստատված բնակչության մի մասը՝ զբաղվածություն և տարրական կենցաղային պայմաններ ունենալու անհրաժեշտությունից դրդված:

1989-1998թթ. Աղետի գոտու բնակելի շենքերի գործարկման ցուցանիշը կազմել է 3399.4 հազ. մ² ընդհանուր մակերես, այդ թվում՝ Շիրակի մարզում՝ 1604.9 հազ. մ²: ՀՀ Կառավարության 1998թ. նոյեմբերի 11-ի թիվ 701 որոշմամբ հաստատվեց Աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագիրը, որով հիմնական համարվեց բնակարանային և սոցիալական ոլորտների խնդիրների լուծումը: Առաջին անգամ ներդրվեց բնակարանների գնման վկայագրերի կիրառման գաղափարը, որը հնարավորություն է տալիս ընտրել բնակության վայրը և բնակարանի որակը: 2001թ. ընդունվեց «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը: Համալիր ծրագրով նախատեսվում է ամբողջությամբ վերականգնել Աղետի գոտին, որի համար սահմանային ժամկետ նշվում է 2005թ.: Համալիր ծրագրի իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցները պետք է ուղղվեն բնակարանային պայմանների բարելավման, ինչպես նաև կրթության, առողջապահության, մշակութային ոլորտի խնդիրների լուծմանը:

Այժմ, երբ բնակարանային հիմնախնդիրն աստիճանաբար լուծվում է, անհրաժեշտ է իրականացնել նաև արդյունաբերական հզորությունների վերագործարկում, ինչը կլուծի հատկապես արդյունաբերական կենտրոնների բնակչությանն աշխատանքով ապահովելու խնդիրը: Գործազրկության չափերը նվազեցնելու համար անհրաժեշտ է մշակել նաև տուրիզմի, բանկային համակարգի, բարձր տեխնոլոգիաների զարգացման ուղիներ և ծրագրեր:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Բնակչության թվաքանակի փոփոխությունները

Բնակչության թվի շարժընթացի վերլուծության աղբյուրները բազմազան են: Սակայն մանրամասն վերլուծությունների համար լիարժեք են համարվում պաշտոնական վիճակագրական տվյալները²³:

Շիրակի մարզի բնակչության թվաքանակն ու կառուցվածքը ներկայացնող ամբողջական տվյալները վերաբերում են 2001թ. մարդահամարին: Վերջինիս նախորդող՝ 1989թ. մարդահամարի արդյունքները ենթակա են ճշգրտումների, քանի որ այն անցկացվել է բարդ պայմաններում: Ելնելով դրանից, մարդահամարից հետո Հայաստանի Վիճպետկոմը հաշվարկների համար օգտվում էր բնակչության ընթացիկ հաշվառման տվյալներից: Հետագա տարիներին ևս վիճակագրության հետ կապված խնդիրները պահպանվեցին, քանի որ, որոշ դեպքերում չէր կատարվում բնակչության տեղաշարժերի ամբողջական հաշվառում կամ տվյալները չէին արտացոլում իրական պատկերը (քառսային իրավիճակում ամբողջական հաշվառում կատարելը, ըստ էության, անհնար էր): Այսինքն, թե՛ երկրաշարժից անմիջապես հետո, և թե՛ հաջորդ տարիներին բնակչության ներհանրապետական ու միջպետական տեղաշարժերը դժվար դիտարկելի էին:

Քննարկվող ժամանակահատվածի առանձին փուլերում ժողովրդագրական ցուցանիշների առանձնահատկությունները և փոփոխությունների շարժընթացը դիտարկելու նպատակով օգտագործվում են նաև ըստ տարիների բնակչության ընթացիկ հաշվառման տվյալները:

²³Պաշտոնական վիճակագրական տվյալների որոշ մասը, հատկապես արտագաղթին վերաբերող տվյալները, չեն համընկնում անկախ փորձագետների ու միջազգային կազմակերպությունների ներկայացրած թվերի հետ: Վերջիններս սակայն մանրամասն, կոնկրետ վերլուծությունների հնարավորություններ չեն ընձեռում, ուստի աշխատանքում օգտագործվում են պաշտոնական վիճակագրական տվյալներ:

Տվյալների այս համախումբը թույլ է տալիս ներկայացնել բնակչության թվի շարժընթացն ու արձանագրել, որ դրանում արտացոլվել են երկրաշարժի հետևանքով Շիրակի մարզի բնակչության թվաքանակի նվազումն ու ազդեցությունը հետագա տարիների ժողովրդագրական գործընթացների վրա:

Ըստ պաշտոնական վիճակագրության, Շիրակի մարզում, չնայած որոշ տարիներին արձանագրված աճին, այնուամենայնիվ քննարկվող ժամանակահատվածում բնակչության թվաքանակը չի հասել նախաերկրաշարժյան ցուցանիշին²⁴: 2003թ. հունվարի 1-ի դրությամբ արդեն այն կազմել է 282.5 հազ. մարդ, մինչդեռ 1988թ. եղել է 364.3 հազ.: Այս տարբերությունը գալիս է հավաստելու, որ մարզի բնակչության բնական աճի ցուցանիշների նվազման, միգրացիոն սալդոյի բացասական մեծության հետևանքով ի վերջո բնակչության թվաքանակը էապես պակասել է:

Ընդհանուր գծերով ներկայացնենք այն պատճառները, որոնք պայմանավորել են և՛ դրական և՛ բացասական տեղաշարժերը:

Առաջինը, որը բնորոշ է ինչպես Շիրակի մարզին, այնպես էլ հանրապետությանը, կապված է զանգվածային արտագաղթի հետ, որի ազդեցություններին դեռևս կանդրադառնանք: Արտագաղթն իր հերթին պայմանավորված է սոցիալ-տնտեսական ճգնաժամով, զանգվածային գործազրկությամբ, բնակչության մեծ մասի աղքատացմամբ ու այլ իրողություններով: Այսինքն, և հանրապետության և մարզի բնակչության զանգվածային արտագաղթի հիմնական պատճառների թվում պետք է դիտարկվի սոցիալ-տնտեսական վերափոխումների և արտաքին ու ներքաղաքական տարբեր գործոնների ազդեցությունը:

Շիրակի մարզում թվարկածներին հավելվում են կենցաղային խիստ ծանր, որոշ դեպքերում անտանելի պայմանները: Ի տարբերություն այլ մարզերի, Շիրակում աղքատությունը հանդես է գալիս նաև որպես ունեցվածքի ու խնայողությունների կորստի հետևանք: Բնական է, որ սոցիալական ու տնտեսական անբա-

²⁴ 2001թ. անցկացված մարդահամարը ցույց տվեց, որ քննարկվող ժամանակահատվածում առկա է եղել բնակչության թվի գերհաշվառում:

րենպաստ գործոնների ազդեցությունը միայն զանգվածային արտագաղթի ձևով չի դրսևորվում²⁵:

Բնակչության թվաքանակի փոփոխությունները պայմանավորված են բնական և մեխանիկական աճի առանձնահատկություններով: Մեխանիկական աճը քննարկվելու է առանձին, ուստի անդրադառնանք բնակչության բնական աճի բացարձակ և հարաբերական ցուցանիշների շարժընթացի վերլուծությանը:

Խորհրդային շրջանում դիտվող՝ բնական աճի բարձր ցուցանիշների միտումը 1988թ.-ից ենթարկվեց էական փոփոխությունների:

Աղյուսակ 1

Թվական	Չանրապետություն			Շիրակի մարզ		
	Ծնվածներ	Մահացածներ	Բնական աճ	Ծնվածներ	Մահացածներ	Բնական աճ
1989	75250	20853	54397	7267	1943	5314
1990	79882	21993	57889	8462	1995	6467
1991	77825	23425	54400	8681	2209	6472
1992	70581	25824	44757	7467	2418	5049
1993	59041	27500	31541	6005	2533	3472
1994	51143	24652	26491	5473	2185	3288
1995	48960	24842	24118	4980	2369	2611
1996	48134	24936	23198	4657	2548	2109
1997	43929	23985	19944	4456	2363	2093
1998	39366	23210	16156	3874	2220	1654
1999	36502	24087	12415	3278	2403	875
2000	34276	24025	10251	3040	2297	743
2001	32065	24003	8062	2830	2292	538
2002	32229	25554	6675	2807	2563	244

Չանրապետության և Շիրակի մարզի բնակչության բնական աճի ցուցանիշները 1989-2002թթ.(մարդ)²⁶

ՀՀ բնակչության բնական աճը 1988թ. կազմել է 39140 մարդ, 1985թ. համեմատությամբ (60725 մարդ) նվազելով 35.5%-

²⁵Մարզում արձանագրվել է մահացության, այդ թվում՝ մանկամահացության աճ: Էական են հոգեբանական բնույթի գործոնները. սթրեսներ, հարազատների կորստի ցավ, հայրենի բնակավայրի կիսավեր վիճակ և այլն: Այսպիսի իրավիճակում բնական է նաև ծնելիության նվազումը:

²⁶ Այս և հետագա աղյուսակները կազմվել են ԱՎԾ տվյալների և սեփական հաշվարկների հիման վրա:

ով՝ պայմանավորված բարձր մահացությամբ (այն 1985թ. համեմատ աճել է 81.6%-ով): 1988թ. Շիրակի մարզում բնակչության բնական աճ չի արձանագրվել, պայմանավորված երկրաշարժի զոհերի մեծ թվով: 1988թ. ցածր է եղել նաև ծնվածների թիվը (1985թ. համեմատ նվազելով 15.9%-ով):

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, 1989-2002թթ. և՛ հանրապետության և՛ Շիրակի մարզի բնակչության բնական աճի ցուցանիշների փոփոխություններն էական են:

Քանի որ աղյուսակն արտացոլում է փոփոխությունների ընդհանուր շարժընթացը, սահմանափակվենք միայն որոշ միտումներ ներկայացնելով: 1990-1991թթ. բնական աճի ցուցանիշը եղել է ամենաբարձրը՝ պայմանավորված բարձր ծնելիությամբ: Նման օրինաչափություն դիտվում է տարբեր աղետներից հետո, երբ փորձ է արվում փոխհատուցել մարդկային անսպասելի կորուստները: Աղետի գոտու, ինչպես նաև հանրապետության տարբեր բնակավայրերում արձանագրվել են դեպքեր, երբ ամուսնական զույգն այս նպատակով ունեցել է երրորդ կամ չորրորդ երեխան:

Հետագա տարիներին արդեն բնական աճի ցուցանիշը նվազում է: 2001-2002թթ. ցուցանիշը ՀՀ-ում արդեն պակաս է 10000-ից, Շիրակի մարզում՝ 500-ից և ամենացածրն է քննարկվող ողջ ժամանակահատվածում: Այնուհանդերձ նաև բնական աճի գործակցի նվազումը այսպես հանրապետության գործակիցը հազար մարդու հաշվով 1989թ. կազմել է 15.6‰, 1995թ.՝ 6.4‰, 2001թ.՝ 2.1‰, Շիրակի մարզինը՝ համապատասխանաբար՝ 16.0‰, 7.3‰, 1.2‰:

Առավել ընդհանուր գծերով ներկայացնենք բնական աճի նվազման պատճառները.

Բնական աճի նվազման հիմնական պատճառը ծնվածների թվի նվազումն է սկսած 1992թ.: Հանրապետությունում միայն 2002թ. է արձանագրվում չնչին աճ՝ նախորդ տարվա համեմատ:

Որպես պատճառ կարելի է դիտարկել նաև ամուսնությունների թվի նվազումը: Սրա հիմքում ընկած են սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակով պայմանավորված գործոններ, որոնք Շիրակի մարզում ստացել են ճգնաժամային բնույթ՝ տնակային պայ-

մաններ, աշխատատեղերի պակաս, աշխատունակ տարիքի բնակչության միգրացիոն մեծ ակտիվություն և այլն:

Սոցիալ-տնտեսական պայմանների վատթարացման հետևանքով աճել է աշխատունակ տարիքի տղամարդկանց արտահոսքը, որոնց ընտանիքների վերամիավորման նպատակով հետագայում միացել են նաև վերարտադրողական տարիքի կանայք: Այսինքն, այս դեպքում ծնունդներ գրանցվում են հանրապետությունից դուրս:

Ծնվածների թվաքանակի նվազմանը որոշակիորեն նպաստել է նաև ծնելիության բարձր ցուցանիշներ ունեցող ադրբեջանցիների հեռանալը: Որպես օրինակ բերենք Անասիայի տարածաշրջանը, եթե այստեղ 1985թ. ծնվածների թիվը կազմել է 660, ապա 2003թ՝ ընդամենը 43 մարդ:

Շիրակի մարզում թվարկված պատճառներին պետք է հավելել ևս մի քանիսը. երկրաշարժի զոհերի մեջ բարձր էր ինչպես վերարտադրողական տարիքի կանանց և տղամարդկանց, այնպես էլ դեռևս վերարտադրողական տարիք չմտածների տեսակարար կշիռը: Մեծ է նաև այրիացած կանանց թիվը, որոնց մի մասը դեռևս դուրս չէր եկել վերարտադրողական տարիքից: Եվ վերջապես, մարզում մեծ է վերարտադրողական տարիքի հաշմանդամների տեսակարար կշիռը, ինչը նույնպես ազդում է ծնելիության ցուցանիշների վրա: Այսինքն, հերթական անգամ ստիպված ենք արձանագրել, որ Շիրակի մարզում քննարկվող ողջ ժամանակահատվածում շարունակում են կարևոր մնալ երկրաշարժի հետևանքներով ու ազդեցությամբ պայմանավորված իրողությունները:

Բնական աճի նվազման վրա ազդել է նաև մահացածների թվի աճը, որը Շիրակի մարզում սկսած 1991թ.-ից հատել է 2000-ի սահմանագիծը: Մահացածների թվի աճն առանձին տարիներին և՛ հանրապետությունում և՛ մարզում բացատրվում է հիմնականում սոցիալ-տնտեսական իրավիճակով: Մարզի բնակչության մահացության գործակիցը. 1989թ. կազմել է 5.9‰, 1995թ՝ 7.3‰, 2001թ. 6.6‰, հանրապետությանը՝ համապատասխանաբար՝ 6.0‰, 6.6‰, 6.3‰: Շիրակի մարզում քննարկվող ժամանակահատվածում պատճառներից գլխավորը շուրջ տասնհինգամյա տնակային կա-

ցութաձևն է, ինչի արդյունքում ավելացել են շնչառական համա-
կարգի և սրտանոթային հիվանդությունների հետևանքով արձա-
նագրված մահացության դեպքերը: Երկրաշարժից հետո Գյումրի-
ում նկատվել է սրտի իշեմիկ հիվանդությունների պատճառով մա-
հացության աճ²⁷:

Բնական աճի որակական առանձնահատկությունները բա-
ցահայտելու համար նպատակահարմար է քննարկել ծնելիության,
մահացության և բնական աճի հարաբերական ցուցանիշները,
որոնք ևս 1988-2002թթ. էական փոփոխությունների են ենթարկվել:

1988թ. ՀՀ բնակչության բնական աճի գործակիցը կազմել է
11.3‰, 1985թ. համեմատ նվազելով 8.7‰-ով: 1988թ. այն նվազել է
մահացության աճի հետևանքով, որն ըստ մահացության ընդհա-
նուր գործակիցների գնահատման սանդղակի²⁸, համարվում է մի-
ջին ցուցանիշ (քաղաքային բնակչության մահացությունը եղել է
ավելի բարձր), մինչդեռ 1985թ. հանրապետության բնակչության
մահացության ցուցանիշը համարվել է ցածր: 1985թ. համեմատությ-
յանը ցածր է եղել նաև ծնելիության գործակիցը, որը, համաձայն
ծնելիության գործակիցների գնահատման սանդղակի, գտնվում է
միջին մակարդակի վրա, մինչդեռ 1985թ. այն միջինից բարձր էր:
1989թ. հանրապետության բնակչության բնական աճի գործակիցը
(15.6‰) նախորդ տարվա համեմատ աճում է, սակայն ծնելիութ-
յունը (21.6‰) շարունակում է մնալ միջին մակարդակի վրա, միջի-
նից բարձր լինելով միայն գյուղական բնակչության շրջանում: Մա-
հացության ցուցանիշը նվազում է՝ հասնելով 6‰-ի: Քննարկվող
ժամանակահատվածում բնակչության աճի գործակիցն առավել
բարձր է եղել 1990թ. (16.3‰), հիմնականում ծնելիության (22.5‰)
աճի հետևանքով, որը բարձր էր գյուղական բնակչության շրջա-
նում՝ կազմելով 27.3‰: Հարկ է նշել, որ մահացությունը ևս աճել է:
1991թ. սկսած հանրապետության բնակչության բնական աճի գոր-

²⁷ Առավել մանրամասն տես Ա. Ստեփանյան, Սրտի իշեմիկ հիվանդացության
և մահացության դինամիկան Գյումրի քաղաքում, Ձեկուցումների հիմնադ-
րություն, Գյումրի 1999, էջ 160-161:

²⁸ Ըստ աշխարհագրական գիտության մեջ ընդունված սանդղակների:

ծակիցը, ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների, սկսել է նվազել՝ 2002թ. հասնելով 2.1%:

Ծնելիության գործակիցը միջին մակարդակի վրա է եղել միայն 1991-1992թթ., այն 1993թ-ից սկսած եղել է ցածր:

Մահացության գործակիցը 1991-2002թթ. եղել է ցածր, սակայն 2002թ. արձանագրվել է քննարկվող ժամանակահատվածում մահացության ամենաբարձր ցուցանիշը՝ 8%:

Շիրակի մարզի բնակչության բնական աճը նվազել է հիմնականում ծնելիության գործակցի նվազման հետևանքով: Եթե 1990 և 1991թթ. այն եղել է միջինից բարձր, ապա 1992-1993թթ. դարձել է միջին, իսկ 1994-2002թթ.՝ ցածր: Քննարկվող ողջ ժամանակահատվածում գյուղական բնակչության ծնելիության գործակիցը եղել է ավելի բարձր, քան քաղաքային բնակչությանը:

Մահացության գործակիցը քննարկվող ողջ ժամանակահատվածում եղել է ցածր: Այն գտնվել է 5.9%-ից (1989թ.) 9.0% (2002թ) մակարդակի վրա: Հատկանշական է, որ քննարկվող ժամանակահատվածում այն գերազանցել է 1985թ. համապատասխան ցուցանիշը:

Շիրակի մարզում 1988թ. բնակչության բնական աճի գործակիցը կազմել է -17.0%, մինչդեռ 1985թ. այն եղել է 17.1%: Մահացության գործակիցը նույն թվին կազմել է 36.7%, որն արտակարգ բարձր է: Այն հատկապես բարձր է եղել քաղաքային բնակչության մոտ՝ 46.6 %, իսկ քաղաքային բնակչության բնական աճը կազմել է -30.1%: Ի տարբերություն մահացության գործակցի, 1985թ. համեմատ ծնելիության գործակիցը 1988թ. նվազել է 3.1%-ով: Ծնելիության գործակիցը եղել է միջին մակարդակի (գյուղական բնակչության մոտ՝ բարձր): Մարզի բնակչության բնական շարժի ցուցանիշը 1989թ.-ից աճել է և առավելագույնին հասել 1990թ.՝ կազմելով 19.3%: Այն աճել է ծնելիության գործակցի աճի հետևանքով: Հատկանշական է, որ մարզում 1990 և 1991թթ. արձանագրվել են 1988-2002թթ. ծնելիության ամենաբարձր գործակիցները, որոնք եղել են միջինից բարձր: 1991թ.-ից մարզի բնակչության բնական աճը նվազել է, 2002թ. հասնելով 0.9%-ի:

Այսպիսով, 1988-2002թ.թ. Շիրակի մարզում կատարվել են տարաբնույթ փոփոխություններ, որոնք կապված են ինչպես ընդհանուր հանրապետական գործոնների, այնպես էլ Աղետի գոտու առանձնահատկությունների հետ: Երկրաշարժից հետո մի շարք բնակավայրերում դեռևս չի վերականգնվել բնակչության նախաերկրաշարժյան թվաքանակը, իսկ բնակչության աճի ցուցանիշները զիջում են խորհրդային շրջանի, հատկապես 1980-ական թթ. երկրորդ կեսի ցուցանիշներին:

Բնակչության տեղաբաշխումը և տարաբնակեցման առանձնահատկությունները

Բնակչության տեղաբաշխումը որոշակի ժամանակահատվածում բնակչության աշխարհագրական տարածման և բնակավայրերի ցանցի ձևավորման գործընթացի արդյունքն է: Այն բնութագրելու համար սովորաբար օգտվում են բնակչության միջին խտության ցուցանիշից, որն արտացոլելով միավոր տարածքում բնակվողների թիվը, ըստ էության, ցույց է տալիս այդ տարածքի տնտեսական յուրացվածության աստիճանը²⁹:

1988թ. Շիրակի մարզի բնակչության միջին խտությունը (138 մարդ/քառ.կմ) 1.1 անգամ գերազանցել է հանրապետության միջին ցուցանիշը, պայմանավորված բնակչության թվով երկրորդ քաղաքի՝ Գյումրիի առկայությամբ: Առավել խիտ բնակչություն ունեցել է Արթիկի տարածաշրջանը (Արթիկ քաղաքը ներառյալ)՝ 94 մարդ/քառ.կմ: Առավել նոսր բնակչություն ունեցել է Աշոցքի տարածաշրջանը՝ 18 մարդ/քառ.կմ, որտեղ մշտական բնակչություն ունեցող տարածքը սկսվում է 1824մ-ից և գերակշռում են մանր ու փոքր գյուղերը:

Շիրակի մարզի բնակչության միջին խտությունը (երկրաշարժից տասը տարի անց) կազմել է 1998թ. 137մարդ/քառ.կմ, որը հանրապետության միջին խտության ցուցանիշը գերազանցել է 10 մարդով, սակայն զիջել է 1988թ. ցուցանիշին, քանի որ մարզի բնակչության թվաքանակը չի հավասարվել նախաերկրաշարժյան

²⁹ Լ. Վալեսյան, նշվ. աշխ., էջ 126:

ցուցանիշին: 1998թ. ամենամեծ խտությամբ աչքի է ընկել Արթիկը: Ամենից նոսր բնակչությունը 1998թ. ուներ Ամասիան՝ 14 մարդ/քառ.կմ, կապված աղբբեջանցիների հեռանալու արդյունքում բնակչության թվաքանակի կտրուկ նվազման հետ. 1988թ. բնակչության խտությունը այստեղ կազմել է 32 մարդ/քառ.կմ:

Արդեն 2003թ., մարդահամարի արդյունքում հիմնական ժողովրդագրական ցուցանիշների ճշգրտման ու հստակեցման հետ կապված, բնակչության խտության ցուցանիշները ենթարկվեցին էական փոփոխությունների (107 մարդ/քառ.կմ), որը առաջին հերթին պայմանավորված էր Գյումրու բնակչության կտրուկ նվազմամբ: Խտության ցուցանիշների փոփոխությունը կապվում է նաև գյուղական բնակչության խտության արժեքների նվազման հետ՝ որպես զանգվածային միգրացիայի հետևանք:

Աշխարհագրական գիտության մեջ ընդունված է այն տեսակետը, որ բնակչության տարաբնակեցման օրինաչափությունները ձևավորվում են բուն ժողովրդագրական գործընթացների՝ պատմականորեն հանդես եկող և տվյալ պահին ինքնաշխատ, ինքնուրույն երևույթների և հասարակության զարգացման սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցության տակ:

Մինչև մարզի քաղաքային և գյուղական տարաբնակեցման առանձնահատկություններին անդրադառնալը, համառոտակի ներկայացնենք քաղաքային ու գյուղական բնակչության հարաբերակցությունը և շարժընթացը 1988-2003թթ.:

1988թ. Շիրակի մարզի քաղաքային բնակչության տեսակարար կշիռը կազմել է 71.4%, որն ինչպես այս ցուցանիշով, այնպես էլ ուրբանիզացման աստիճանով՝ 2.50, գերազանցել է հանրապետության համապատասխան ցուցանիշները (68,4% և 2.16):

2003թ. քաղաքային բնակչության տեսակարար կշիռը կազմել է 61.3%, ուրբանիզացման աստիճանը՝ 1.58, իսկ հանրապետության համապատասխան ցուցանիշները կազմել են՝ 64.2% և 1,80³⁰: Քաղաքային բնակչության նվազումը իր արտացոլումն է գտել ինչպես քաղաքային բնակչության տեսակարար կշռի, այնպես էլ ուրբանիզացման աստիճանի վրա:

³⁰ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից:

1988թ. մարզի քաղաքային բնակավայրերի թիվը եղել է 5` 2 հանրապետական ենթակայության քաղաք և 3 քաղաքատիպ ավան: Քաղաքային բնակչության գերակշիռ մասը (88.7%) կենտրոնացված է եղել խոշոր քաղաք համարվող Գյումրիում: Միջին մեծության քաղաք համարվող Արթիկում բնակվել է քաղաքային բնակչության 7.9%, իսկ քաղաքատիպ ավաններում` 3.4%-ը:

1988թ. համեմատությամբ 2003թ. և՛ քաղաքային բնակավայրերի և՛ քաղաքային բնակչության թիվը նվազել է: Նոր վարչատարածքային բաժանման արդյունքում քաղաքատիպ ավաններ Պենզաշենը և Անիպենզան վերածվել են գյուղերի:

Գյումրիում բնակվում է մարզի քաղաքային բնակչության 86.6%-ը, Արթիկում` 10.1%-ը, Մարալիկում` 3.3%-ը: Գյումրիի բնակչությունը 1988թ համեմատ նվազել է 35%-ով, Արթիկինը` 15 %-ով, ինչի հետևանքով վերջինս միջին մեծության քաղաքից վերածվել է փոքր քաղաքի` համաձայն մարդաչատության ընդունված դասակարգման: Մարալիկի բնակչությունն աճել է ընդամենը 2%-ով, այն շարունակում է մնալ փոքր քաղաք:

Քաղաքների բնակչության թվաքանակի նվազումն առաջին հերթին պայմանավորված է արտահոսքով, ինչի հետևանքով 1988-2003թթ. միգրացիոն սալդոն եղել է բացասական: Եթե դրան հավելենք նաև այն, որ գնալով նվազում է բնակչության բնական աճը, ապա պատկերն առավել ամբողջական կդառնա:

Շիրակի տնտեսական շրջանի ձևավորման գործում անվիճելի է եղել Գյումրիի արդյունաբերական հանգույցի դերը: 1980-ական թթ. վերջին Գյումրիում զարգացման բավականին բարձր մակարդակի վրա էին գտնվում մեքենաշինությունը, թեթև և սննդի արդյունաբերությունը: Միաժամանակ, քաղաքն ուներ գիտակրթական և մշակութային կարևոր կենտրոնի նշանակություն: Գյումրու շուրջ գոյություն ուներ արդյունաբերական տարբեր ձեռնարկություններ սպասարկող մինչև 20-25կմ շառավղով ճոճանակային միգրացիա, որում ընդգրկված տարբեր բնակավայրերի համար այն ուներ կարևոր նշանակություն ինչպես տնտեսական զարգացման, այնպես էլ աշխատուժը տեղում պահելու, գյուղական ու քաղաքային բնակավայրերի զարգացման անհամանասնության

հաղթահարման տեսանկյունից: Գյուճարի արդյունաբերական հանգույցի «ուժային դաշտը» տարածվում էր Շիրակի մեծ մասի վրա ոչ միայն հանգույցի արդյունաբերությանը բանվորական ուժ, իսկ քաղաքային բնակչությանը՝ գյուղատնտեսական մթերքներ մատակարարելու, այլև արտադրական կապերի գծով³¹: Որպես կարևոր տրանսպորտային հանգույց Գյուճարիով էին անցնում երկաթուղային և ավտոմայրուղային կարևոր ճանապարհներ, մեծ էր նաև օդանավակայանի նշանակությունը: Քաղաքը կենտրոնական բաշխիչ դիրք ուներ նաև էլեկտրաէներգիայի և բնական գազի մատակարարման գործում:

Վերը նշվեց, որ երկրաշարժի ժամանակ ավերվեց Գյուճարի արդյունաբերական ձեռնարկությունների շուրջ 80%-ը: Աղետի վնասները, զուգակցվելով այլ գործոնների հետ, էական բարդություններ ստեղծեցին քաղաքի տնտեսության և հատկապես զարգացման բարձր մակարդակի հասած արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնման և վերագործարկման համար:

Գյուճարին այսօր կորցրել է շրջանաստեղծ դերի հատկանիշների մի մասը: Խզվել են տարիների ընթացքում ձևավորված տնտեսական և աշխատանքային կապերը, զգալիորեն նվազել է ճոճանակային միգրացիայի նշանակությունը ինչպես քաղաքի, այնպես էլ նախկինում դրանում ընդգրկված բնակավայրերի համար:

Տնտեսական շրջափակման պատճառով սահմանափակվել է նաև տարանցիկ, հատկապես երկաթուղային ճանապարհների նշանակությունը: Եթե նախկինում դրանք Գյուճարին կապում էին նախկին ԽՍՀՄ բազմաթիվ քաղաքների հետ, ապա այսօր այդ հնարավորությունները սահմանափակվում են միայն Վրաստանի հետ երկաթուղային հաղորդակցությամբ:

Այսինքն, քաղաքի զարգացման համար կարևոր են նաև արտաքին քաղաքական ու տնտեսական գործոնները: Կարելի է փաստել, որ երկաթուղային ու ավտոմայրուղային ճանապարհների նշանակության վերականգնման համար առաջնային են շրջափակման վերացումն ու ՌԴ հետ հաղորդակցության վերականգնումը:

³¹ Լ. Վալեսյան, նշվ. աշխ., էջ 398-406:

Չնայած շրջանաստեղծ գործառույթների մի մասի կորստին, Գյումրին շարունակում է հանդես գալ որպես կարևոր վարչական, գիտակրթական ու մշակութային, մասամբ՝ նաև արդյունաբերական կենտրոն: Խոսքն այս դեպքում ավելի շատ ընդհանուր տնտեսական ճգնաժամի ու մարզում առկա հիմնախնդիրների պատճառով շրջանաստեղծ գործառույթների մի մասի սահմանափակման մասին է:

Շուկայական հարաբերությունների, տնտեսավարման նոր ձևերի ու եղանակների ամրագրման պայմաններում հնարավոր է, որ քաղաքը վերականգնի իր նախկին դերը և հանդես գա որպես խոշոր արդյունաբերական և գիտամշակութային կենտրոն: 1995թ. վարչատարածքային բաժանման արդյունքում, Գյումրին դարձավ մարզկենտրոն, ինչը ևս կարող է դրական ազդակ հանդիսանալ քաղաքի հետագա զարգացման համար:

Գիտական խորը և բազմակողմանի հիմնավորումների արդյունքում մշակված ռազմավարական ծրագրերի իրագործման, ներդրումային բարենպաստ մթնոլորտի ապահովման պայմաններում, Գյումրին կկարողանա հասնել ոչ միայն զարգացման նախկին մակարդակին, այլև կստեղծի տնտեսական և աշխատանքային նոր կապեր՝ աշխատուժը տեղում պահելու առավել արդյունավետ միջոցառումների կիրառմամբ: Պետք է հաշվի առնել նաև, որ տնտեսական զարգացման գերակայությունների փոփոխությունները, նոր տնտեսական հարաբերությունների ձևավորման գործընթացները կարող են փոխել շրջանաստեղծ գործառույթները պայմանավորող գործոնների մի մասը, սահմանափակել դրանց որոշ մասի կարևորությունը և առաջին պլան մղել այնպիսիք, որոնք նախկինում քաղաքը չի ունեցել (խոսքը մասնավորապես տուրիզմի, բանկային համակարգի ու բարձր տեխնոլոգիաների զարգացման մասին է):

Փոփոխություններն ազդել են նաև մարզի մյուս քաղաքների գործառույթների, զարգացման միտումների վրա: Նոր վարչատարածքային բաժանման արդյունքում Արթիկն ու Մարալիկը զրկվեցին իրենց հիմնական՝ վարչական գործառույթից: Մարզի քաղաքներից տնտեսաաշխարհագրական հարմար դիրք ունեն

Գյուճընի և Սարալիկը, այս առումով Արթիկը զիջում է նախորդներին և ունի բավարար տնտեսաաշխարհագրական դիրք:

Շիրակի մարզի գյուղական տարաբնակեցումն ունի առավել խայտաբղետ պատկեր³²:

Աղյուսակ 2

Բնակավայրերի խմբավորումն ըստ բնակչ. թվի	Բնակավայրերի թիվը			Բնակավայրերի տեսակարար կշիռը (%)			Բնակչության տեսակարար կշիռը (%)		
	1988	1998	2003	1988	1998	2003	1988	1998	2003
մինչև 50	2	3	4	1.6	2.3	3.1	0.04	0.1	0.1
51-100	4	6	6	3.2	4.7	4.6	0.28	0.4	0.4
<i>շատ մանր</i>	<i>6</i>	<i>9</i>	<i>10</i>	<i>4.8</i>	<i>7.0</i>	<i>7.7</i>	<i>0.32</i>	<i>0.5</i>	<i>0.5</i>
101-200	12	12	12	9.5	9.4	9.2	1.9	1.6	1.7
201-500	34	27	31	27.0	21.1	23.8	11.9	8.2	9.4
<i>մանր</i>	<i>46</i>	<i>39</i>	<i>43</i>	<i>36.5</i>	<i>30.5</i>	<i>33.0</i>	<i>13.8</i>	<i>9.8</i>	<i>11.1</i>
501-1000	40	32	30	31.7	25.0	23.1	29.2	20.4	19.9
1001-2000	21	26	27	16.7	20.3	20.8	28.2	31.9	33.4
<i>փոքր</i>	<i>61</i>	<i>58</i>	<i>57</i>	<i>48.4</i>	<i>45.3</i>	<i>43.9</i>	<i>57.4</i>	<i>52.3</i>	<i>53.3</i>
<i>2001-3000-միջին</i>	<i>5</i>	<i>8</i>	<i>9</i>	<i>4.0</i>	<i>6.2</i>	<i>6.9</i>	<i>12.0</i>	<i>17.2</i>	<i>19.2</i>
<i>3001-5000-խոշոր</i>	<i>2</i>	<i>4</i>	<i>2</i>	<i>1.6</i>	<i>3.1</i>	<i>1.5</i>	<i>7.5</i>	<i>12.7</i>	<i>7.1</i>
<i>5000-ից ավելի-շատ խոշոր</i>	<i>1</i>	<i>1</i>	<i>1</i>	<i>0.8</i>	<i>0.8</i>	<i>0.8</i>	<i>8.9</i>	<i>7.4</i>	<i>8.8</i>

Շիրակի մարզի գյուղական բնակավայրերի խմբավորումն ըստ բնակչության թվի 1988, 1998 և 2003թթ.

³² Տարաբնակեցման խնդիրներին անդրադարձել են՝ Ռ. Հովսեյան, Նկատառումներ Շիրակի մարզի բնակչության տարաբնակեցման հիմնախնդիրների և դրանց կարգավորման ուղղությունների վերաբերյալ.-Աշխարհագրություն 2001, Եր., 2002, էջ 115-119; Ա. Պոտոսյան, Գ. Ղամբարյան, Տարաբնակեցումը որպես արդյունավետ բնօգտագործման նախադրյալ.-Աշխարհագրություն 2001, էջ 131-134; Մ. Մանասյան, Ա. Պոտոսյան, Լ. Սարգսյան, Տարաբնակեցումը և Շիրակի մարզի տարածքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները.-Աշխարհագրություն 2001, էջ 134-137; Մ. Մանասյան, Ա. Գրիգորյան, Ա. Պոտոսյան, Շիրակի մարզ, Բնությունը բնակչությունը, տնտեսությունը, Եր., 2002, էջ 51-99:

Քննարկվող ժամանակահատվածում, Շիրակի մարզի գյուղական բնակավայրերի մեջ տիրապետող են եղել մանր ու փոքր գյուղերը: Վերջիններիս թվաքանակը փոփոխվել է տարբեր տարիներին, սակայն գրեթե միշտ փոքր գյուղերի քանակը գերազանցել է մանր գյուղերի թվին: Մանր ու փոքր գյուղերի մեջ արդեն գերիշխողը 201-500 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերն են: Մարզի գյուղական բնակչության մեծ մասը (52.3-57.4%) բաժին է ընկնում փոքր գյուղերին: Շատ մանր գյուղերի թիվը տարբեր տարիներին եղել է 6-10, որտեղ բնակվող գյուղական բնակչությունը չի գերազանցել ամբողջի 0.5%-ը: Գյուղական բնակչության 12.0-ից 19.2%-ը կենտրոնացված է միջին մեծության գյուղերում: Խոշոր և շատ խոշոր գյուղերի թիվը տատանվել է 3-5-ի, իսկ վերջիններիս բնակչությունը՝ 15.9-20.1%-ի միջև:

Ընդհանուր գծերով նշենք, որ քննարկվող ժամանակահատվածում ըստ մարդաշատության դասակարգված բնակավայրերի թվի փոփոխության հիմնական պատճառ է հանդիսացել բնակչության թվաքանակի նվազումը, ինչի արդյունքում գյուղական բնակավայրերը հայտնվել են «ներքևի» խմբում: Բնակչության թվի նվազման արդյունքում Շիրակի մարզում աճել է այն բնակավայրերի թիվը, որտեղ բնակչություն չի արձանագրվել, այդպիսիք են Երիզակ, Լորասար, Արավետ և այլ գյուղերը:

Պրոֆեսոր Լ.Վալեսյանն առանձնացրել է գյուղական տարաբնակեցման հետևյալ հիմնական ձևերը՝ համատարած, ցրված, խմբային և շղթայաձև կամ գծային³³, որը հիմնականում բնորոշ է նաև Շիրակի մարզին:

Մարզի տարաբնակեցման համակարգում կատարված փոփոխությունների մեծ մասը պայմանավորված է բնակչության ակտիվ տեղաշարժերով և ժողովրդագրական հիմնական ցուցանիշների փոփոխություններով: Դատարկ գյուղական բնակավայրերի թվի աճի պատճառ է հանդիսացել միգրացիոն շարժերի ակտիվացումը ազգային փոքրամասնություններով՝ հիմնականում ադրբեջանցիներով բնակեցված գյուղերում, որը նկատելի էր հատկապես 1988-1991թթ.:

³³ Լ. Վալեսյան, նշվ. աշխ., էջ 148-154:

պես արտաքին միգրացիաների ուսումնասիրությունը չափազանց կարևոր է և՛ արտագաղթի և՛ ներգաղթի բարձր տեսակարար կշիռ ունեցող պետությունների համար: Առաջին դեպքում առկա են ժողովրդագրական բնականոն իրավիճակին ու բնակչության վերարտադրողական կարողություններին առնչվող հիմնախնդիրներ, երկրորդ դեպքում արդեն միգրանտների մեծ թիվը լուրջ բարդություն է ներկայացնում աշխատաշուկայի կարգավորման, միգրանտների նկատմամբ պետական վերահսկողության սահմանման, վերջիններիս հաշվառման և այլ առումներով:

Հայաստանը, ինչպես նշել ենք, ևս զերծ չի մնացել անցումային շրջանի հիմնախնդիրներից: Որպես դրանց ուղղակի կամ անուղղակի հետևանք հանդես են գալիս նաև բնակչության ակտիվ տեղաշարժերը:

Վերջին մեկուկես տասնամյակում հրատարակվել են պաշտոնական վիճակագրական տվյալներ, անկախ փորձագիտական գնահատականներ, մասնագիտական հետազոտություններ, որոնք թույլ են տալիս արձանագրել, որ հանրապետության անկախացումից հետո ակտիվացած միգրացիոն գործընթացները ընդգրկել են բոլոր մարզերը, հասարակության գրեթե բոլոր սոցիալ-մասնագիտական ու սեռատարիքային խմբերը³⁷:

Շիրակի մարզը, հանդես գալով որպես ընդհանուր տնտեսական ճգնաժամի ուղղակի կրող, ունի նաև երկրաշարժով պայմանավորված առանձնահատկություններ, քանի որ «ձգձգվող անբարենպաստ պայմանները սովորաբար հանգեցնում են կայուն միգրացիոն շարժերի»³⁸:

Մարզի բնակչության միգրացիաների վրա երկրաշարժի ազդեցությունը դիտարկելիս հարկավոր է հաշվի առնել, որ այն առավել արտահայտված է մի քանի հիմնական ոլորտում. ա/ բնակա-

³⁷ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր (այսու՝ ԱՀՌԾ), Եր., 2003, էջ 21-46; Հ. Խառատյան, Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Եր., 2000, էջ 28-29; Արտագաղթը Հայաստանից (խմբ. Հ. Խառատյան), Եր., 2003: ՀՀ-ից արտագաղթի մասին տվյալներ են պարունակում նաև ՀՀ ԱՎԾ ընթացիկ և տարեկան տարբեր զեկուլյցներն ու հաշվետվությունները:

³⁸ I . Oããããð, Ááí ãðãðèý: ñèí ðàç ñí ãðàí áí í ùð çí áí èé, I ., 1979. էջ 192:

րանային հիմնախնդիր, կենսապահովման ու կենսագործունեության բնականոն կազմակերպման դժվարություններ, ք/ արդյունաբերական ձեռնարկությունների ու արտադրական հզորությունների զգալի մասի անգործություն, աշխատատեղերի բացակայություն, զանգվածային գործազրկություն, աղքատության աննախադեպ բարձր տեսակարար կշիռ³⁹ և այլն:

Երկրաշարժից անմիջապես հետո միութենական ու հանրապետական ղեկավարության կողմից ձեռնարկվեցին միջոցառումներ Ադետի գոտու բնակչության էվակուացիայի ուղղությամբ: Շիրակի մարզի բնակչության մի ստվար հատվածը ժամանակավորապես թողեց մշտական բնակության վայրը:

Տեղաշարժերն ունեին մի քանի ուղղություն. **արտաքին**՝ երբ բնակչությունը տեղափոխվում էր ՌԴ և այլ հանրապետություններ, տեղավորվում հանգստյան տներում, առողջարաններում, հանրակացարաններում, **ներքին**՝ Երևան և Երկրաշարժից չտուժած այլ բնակավայրեր: Ներքին տեղաշարժերից կարելի է առանձնացնել նաև մարզի ներսում կատարվողները՝ առավել տուժած բնակավայրերից դեպի քիչ տուժածները⁴⁰: Տեղաշարժերը կարելի է դիտարկել հաշվի առնելով նաև դրանց բնույթը՝ **կազմակերպված**, երբ բնակչությունը տեղափոխվում էր տարբեր կառույցների ու կազմակերպությունների միջոցով և **տարերային**, երբ ընտանիքները, սեփական կամ ազգականների ու բարեկամների նախաձեռնությամբ, տեղափոխվում էին այլ բնակավայրեր: Որպես ներքին

³⁹ Առավել աղքատ համայնքները Հայաստանի մարզերում.-Հայաստանի սոցիալական միտումները, տեղեկատվական-վերլուծական պարբերական, Եր., դեկտեմբեր 2002, էջ 6; 43-52; ԱՅՌԾ, էջ 37; Է. Օրդյան, Հ. Մանուկյան, Աղքատության նվազեցման հիմնախնդիրները ՀՀ համայնքներում, Եր., 2001, էջ 13; Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական վերլուծական զեկույց, Եր., 2002; Ա. Մելքունյան, Աշխատանքի շուկայի ձևավորման և զբաղվածության հիմնախնդիրները աղքատության հաղթահարման ՀՀ ռազմավարությունում, Եր., 2002, էջ 23; Թոմաս Քելի, Աղքատության բնութագիրը-տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում, Եր., 2002, էջ 65:

⁴⁰ Տես նաև՝ Ն. Գաբրիելյան, Սպիտակի երկրաշարժի հետևանքով առաջացած բնակչության միգրացիաները, Աշխարհագրություն-99, Եր., 1999, էջ 118-121:

տեղաշարժերի որակման ևս մեկ սկզբունք կարելի է առանձնացնել տեղափոխվող ընտանիքների կազմը. շատ դեպքերում հեռանում էր ամբողջ ընտանիքը (և՛ կազմակերպված, և՛ տարերային տեղափոխությունների դեպքում): Տարբերակներից մեկն այն էր, երբ դուրս էին բերվում մեծահասակներն ու դպրոցահասակ երեխաները, իսկ ընտանիքի աշխատունակ անդամները մնում էին տեղում, ունեցվածքի տեղափոխության, տնակների ձեռքբերման խնդիրները կարգավորելու նպատակով՝ բնակվելով կամ քաղաքամերձ գյուղերում, կամ քաղաքում (վրաններ, տնակներ, քաղաքների չվնասված տներում բնակվող ազգականներ և այլն): Լինում էին նաև դեպքեր, երբ ընտանիքն ամբողջ կազմով մնում էր մարզում, սակայն հեռանում էր քաղաքներից, բնակություն հաստատելով գյուղաբնակ ազգականների մոտ: Եվ, վերջապես, բավականին բարձր է նաև այն ընտանիքների տեսակարար կշիռը, որոնք ամբողջ կազմով մնում էին քաղաքներում (սրանք հիմնականում գուհեր ունեցող կամ այլ վայրերում ազգականներ չունեցող ընտանիքներն էին):

Նշենք, որ բնակչության տեղաշարժերը տարբերակվում են նաև ըստ քաղաքային ու գյուղական բնակավայրերի: Բնական է, որ ավելի մեծ էր քաղաքներից տեղափոխվածների թիվը: Առկա են տարբերություններ նաև ըստ առանձին տարածաշրջանների ու բնակավայրերի:

Բնակչության տեղաշարժերի այս փուլը տևեց մի քանի ամիս, մինչև առավելագույնս տուժած բնակավայրերում առաջին տնակային թաղամասերի ու բնակության համեմատաբար տանելի պայմանների ստեղծումը:

Չնայած դրան, բնակության այլ վայրեր տեղափոխվածների մի մասը չվերադարձավ կամ վերադարձավ ավելի ուշ, երբեմն նույնիսկ տարիներ անց: Խոսքը հատկապես ավելի հարմար տեղավորվածների մասին է (Երևանի տարբեր հյուրանոցներում և հանգստյան տներում բնակվող ընտանիքներ կային նաև 1990-ական թթ. երկրորդ կեսին, ընդ որում նրանց մի մասը տնակներ էր ստացել, հերթագրվել բնակարանների համար, իսկ Երևանում մնալու հիմնական պատճառն աշխատանք գտնելու, տանելի

կենսամակարդակ ապահովելու ավելի մեծ հնարավորություններն են): Չնայած վիճակագրական տվյալների բացակայությանը, տարբեր աղբյուրներից հաջողվել է պարզել, որ չվերադարձան նաև ԽՍՀՄ այլ հանրապետություններ տեղափոխված բազմաթիվ ընտանիքներ (Աղետի գոտուց տեղափոխվածներին արտոնյալ պայմաններով բնակարաններ էին հատկացվում, ապահովվում էր մշտական գրանցում, տեղում հարմարվելու համար նշանակալից օգնություն էր տրամադրվում):

Որպես տեղաշարժերի ուղղություն կարելի է առանձնացնել նաև դեպի ԱՄՆ ու եվրոպական երկրներ ուղղված բնակչության հոսքերը: Երկրաշարժից անմիջապես հետո ԱՄՆ-ն մուտքի համեմատաբար ազատ ռեժիմ ստեղծեց, ինչը հնարավորություն տվեց Աղետի գոտում ապաստանած փախստականների մի մասին տեղափոխվել այդ երկիր: ԱՄՆ ու եվրոպական տարբեր երկրներ տեղափոխվեցին նաև մեծ թվով ոչ փախստական ընտանիքներ⁴¹, հատկապես ազգականներ ու հարազատներ ունեցողները:

Փաստորեն, երկրաշարժից անմիջապես հետո ուրվագծվեցին բնակչության տեղաշարժերի՝ միայն երկրաշարժով պայմանավորված առանձին ուղղություններ: Հաջորդ տարիներին սրանց ավելացան նորերը, որոնք, սակայն, տարբերվում էին ինչպես ըստ առանձին տարիների, այնպես էլ առանձին շրջանների ու բնակավայրերի:

Այսպես, կարելի է արձանագրել, որ չնայած առաջին ամիսների ակտիվ տեղաշարժերին, տեղափոխվածների զգալի մասը, հատկապես աշխատունակ տղամարդիկ ու կանայք, վերադարձան բնակության հիմնական վայրեր, ներգրավվելով շինարարական աշխատանքներում. երկրաշարժից հետո ակտիվ աշխատանքներ ծավալվեցին Աղետի գոտում, ստեղծվեցին մեծ թվով բարձր վար-

⁴¹ Երկրաշարժից անմիջապես հետո որոշ թվով մարդիկ եվրոպական երկրներ և ԱՄՆ տեղափոխվեցին նաև բուժման նպատակով: Աղետի գոտում, հատկապես Գյումրիում նրանց հարազատների հետ մեր հանդիպումները թույլ են տալիս արձանագրել, որ նրանց մի մասը նույնպես չվերադարձավ: Բացի այդ, չնայած պաշտոնական վիճակագրության բացակայությանը, կարելի է նշել, որ որք մնացած որոշ երեխաներ նաև որդեգրվեցին տարբեր ընտանիքների կողմից՝ դարձյալ չվերադառնալով Աղետի գոտի:

ձատրվող աշխատատեղեր: Միաժամանակ, կարևոր էր նաև ավերված բնակավայրերը հնարավորինս շուտ վերականգնելու ցանկությունը: Այս շրջանում, փաստորեն, շինարարական աշխատանքների մեծ ծավալն ընձեռում էր զբաղվածության ապահովման հնարավորությունն և՛ գյուղական և՛ քաղաքային բնակավայրերում: Կարևոր է նաև, որ չնայած բնակարանների բացակայությանը, կար կայուն ու բարձր աշխատավարձ, միաժամանակ ոչ երկրորդական էին նաև բնակչությանը տրվող դրամական փոխհատուցումներն ու օգնությունները:

Չետագա տարիներին կատարվեցին բազմաթիվ փոփոխություններ: ԽՍՀՄ փլուզումից հետո շինարարների մեծ մասն արդեն Ադետի գոտու հանդեպ ուղղակի պարտավորություններ չունեին և հանրապետությունում մնալը կարելի է դիտել որպես բարի կամքի դրսևորում: Ստեղծված իրավիճակում հանրապետության ղեկավարությունը չկարողացավ գտնել Ադետի գոտու վերականգնման արդյունավետ տարբերակներ ու ապահովել շինարարական աշխատանքների անհրաժեշտ ծավալները⁴² (այդ շրջանից են Գյումրիում մնացել բազմաթիվ անավարտ շենքեր, որոնց մի մասի հիմքերը հետագայում պարզապես ծածկվեցին հողով):

1990-ական թթ. սկզբին շինարարական աշխատանքների ծավալների կտրուկ նվազումը, մեր կարծիքով, կարելի է որակել որպես քաղաքներից բնակչության՝ հատկապես որակյալ շինարարական կադրերի արտահոսքի պատճառ: Ասվածն ապացուցվեց նաև անցկացված սոցիոլոգիական հարցմամբ: Բավականին մեծ է հատկապես Գյումրիից տարբեր շինարարական բրիգադների հետ հեռացած տեղացիների թիվը: Նրանց մի մասը, ըստ հարցման արդյունքների, ոչ միայն ընդհանրապես չվերադարձավ, այլև հետագայում տեղափոխեց ընտանիքներն ու փոխեց քաղաքացիություն:

⁴² Պետք է նշել, որ ինչքան էլ զարմանալի թվա, մինչև 1997թ. ներառյալ պետական բյուջեում Ադետի գոտու վերականգնման աշխատանքների, հատկապես բնակարանային շինարարության համար լուրջ ներդրումներ նախատեսված չեն եղել: Ադետի գոտու բնակչությունն իրեն շրջանցված էր զգում Հայաստանի իշխանությունների ուշադրությունից, Ադետի գոտու հիմնախնդիրները մնացել էին չլուծված: Տես նաև Հայաստան, Մարդկային զարգացման զեկուլյ, 1997:

նը: Այսինքն, կարելի է արձանագրել, որ այս տարիներին արտահոսքի հիմնական պատճառը աշխատատեղերի կտրուկ նվազումն էր: Եթե հաշվի առնենք, որ ցածր էին նաև արդյունաբերական ձեռնարկությունների վերագործարկման տեմպերը, ակնհայտ է դառնում, որ շինարարության ոլորտում աշխատատեղերի նվազումն ուղղակի ազդեցություն ուներ շատ ընտանիքների նյութական հնարավորությունների ու կենսամակարդակի վրա:

1990-ական թթ. սկզբին փոխվեց նաև աշխատանքային միգրանտների կազմը: Արտագնա աշխատանքներով սկսեցին զբաղվել մարդիկ, որոնք նախկինում նման փորձառություն չէին ունեցել (գիտակրթական, տեխնիկական մտավորականության ներկայացուցիչներ, արդյունաբերական բանվորներ և այլն): Ընդ որում, այս միտումները պահպանվեցին նաև հետագա տարիներին ու հաստատվեցին հարցման արդյունքներով:

Աղյուսակ 3-ում ներկայացվում է միգրանտների զբաղվածության պատկերը մինչև մեկնելը.

Աղյուսակ 3

Տարբերակ	%
Գործազուրկ	43,7
Մշտական աշխատող/ծառայող	16,3
.Ուսանող/սովորող	14,8
Ջբաղվածություն գյուղատնտեսությունում, սեփականաշնորհված հողամասում	9,8
Ժամանակավոր աշխատանք/ դիպվածային վարձու աշխատանքներ	8,4
Սեփական գործ	2,8
.Տնային տնտեսուհի	2,8
Թոշակառու	0,9
Ձինծառայող	0,5
Ընդամենը	100

Հարցումը, փաստորեն, ապացուցեց, որ զանգվածային գործազրկությունը հանդես է գալիս որպես արտագաղթի ու արտագնացության հիմնական պատճառ: Պատահական չէ, որ մեկնածուների 43.7%-ը մեկնելուց առաջ եղել է գործազուրկի կարգավիճակում: Մշտական աշխատողի/ծառայողի կարգավիճակ է ունեցել մեկնածուների ընդամենը 16.3%-ը: Այս դեպքում արդեն որպես մեկ-

նելու հիմնական պատճառ հանդես են եկել ցածր աշխատավարձերը, վճարների ուշացումներն ու անվստահությունը աշխատանքի տևականության հարցում: Պատահական չէ, որ այս խմբից մեկնածների մեծ մասն ունի մինչև այսօր չվճարված աշխատավարձեր, իսկ շատերը հեռացել են առանց հարցի լուծմանը սպասելու:

Խորհրդային տարիներին, ինչպես հայտնի է արտագնա աշխատանքներում ներգրավված էին հիմնականում գյուղաբնակները, որոնք ամռան ամիսներին, երբեմն նաև գարնանը և աշնանը մեկնում էին արտագնա աշխատանքի՝ հիմնականում լրացուցիչ եկամուտ ունենալու ակնկալիքով:

Պատկերն ամբողջացնելու համար քննարկենք նաև մինչև մեկնելը զբաղվածության ոլորտի հետ կապված որոշ հարցեր (տես Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Տարբերակ	%
Գյուղատնտեսություն	27,8
Սպասարկման ոլորտի այլ ծառայություններ	16,5
Շինարարություն	13,9
Արդյունաբերություն	10,1
Գիտություն, կրթություն, մշակույթ	8,8
Առևտուր	7,6
Զինվորական ծառայություն	7,6
Առողջապահություն	3,8
.Տրանսպորտ	1,3
Կապ	1,3
Քաղաքացիական ծառայություն	1,3
ԸՆդամենը	100

Աղյուսակից երևում է, որ մեկնածների մեջ բավականին բարձր է գյուղատնտեսությունում ընդգրկվածների տեսակարար կշիռը, որը հիմնականում կապված է գյուղատնտեսական գործունեության ցածր արդյունավետության, գյուղմթերքների իրացման բարդությունների, ինտենսիվ գյուղատնտեսության վարման սահմանափակ հնարավորությունների հետ: Բարձր է նաև գիտության, կրթության, մշակույթի և առողջապահության ոլորտում մինչև մեկնելը զբաղվածների տեսակարար կշիռը: Այսինքն, ինչպես նշե-

ցինք, երկրաշարժից անմիջապես հետո և հաջորդող տարիներին, արտագնա աշխատանքներում ներգրավվեցին խմբեր, որոնք նախկինում նման փորձառություն չունեին, ինչը խոսում է ճգնաժամի տևականության ու հաղթահարման բարդությունների մասին: Ջինվորական ծառայության մեջ գտնվածների համեմատաբար բարձր տեսակարար կշիռը նույնպես ունի իր բացատրությունը: Բազմաթիվ երիտասարդներ պայմանագրային հիմունքներով ծառայում են Գյումրիում տեղակայված ռուսական զորամասերում: Նրանց մի մասի ծառայության վայրը պարբերաբար փոխվում է, տեղափոխվում են նաև ընտանիքները: Քիչ չեն նաև այն զինծառայողները, որոնք ծառայության ժամկետի ավարտից հետո, օգտվելով բնակարանի գնման նպատակով հատկացվող գումարներից, բնակարան են գնում ՌԴ տարբեր քաղաքներում:

Հետաքրքիր են նաև ըստ ձեռնարկության տեսակի զբաղվածությանն առնչվող խնդիրները, որի տվյալները բերված են Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Տարբերակ	%
Պետական ձեռնարկություն, բյուջետային հիմնարկություն	41,0
Անհատական գյուղացիական տնտեսություն	27,0
Մասնավոր ձեռնարկություն, սեփական գործ	24,3
Չգրանցված ձեռնարկություն	5,1
Դիպվածային ժամանակավոր վարձու աշխատանք	1,3
Տեղական ինքնակառավարում	1,3
ԸՆդամենը	100

Մեկնածուների հիմնական մասը, ինչպես երևում է աղյուսակից, կազմում են պետական ձեռնարկություններում ու բյուջետային հաստատություններում ընդգրկվածները: Բավականին բարձր է նաև «մասնավոր ձեռնարկություն, սեփական գործ» պատասխանի տեսակարար կշիռը, ինչը խոսում է այն մասին, որ մարզում առկա սոցիալ-տնտեսական ճգնաժամն ու ներդրումային ոչ բավարար գրավչությունը խոչընդոտում են մասնավոր ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը:

Քննարկվող ժամանակահատվածում փոխվեցին նաև արտագնա աշխատանքների ժամկետներն ու աշխարհագրությունը: Բազմաթիվ շինարարական բրիգադներ ու առանձին անհատներ ՌԴ-ում ու ԱՊՀ տարբեր երկրներում արդեն մնում էին բավականին երկար, ինչը կապված էր աշխատավարձի ուշացումների, ձմռան ամիսներին թեկուզ ցածր վարձատրվող աշխատանքի փնտրտուքի, ինչպես նաև՝ դրսում հարմարվելու և հնարավորության դեպքում ընտանիքի մնացած անդամներին տեղափոխելու ցանկության հետ: Փոխվեց նաև արտագնա աշխատանքի մեկնողների զբաղմունքների շրջանակը: Խորհրդային շրջանին վերաբերող հետազոտություններում ցույց է տրված, որ Հայաստանից մեկնածները դրսում զբաղվում էին հիմնականում շինարարական աշխատանքներով: 1990-ական թթ. սկզբին շինարարներին ավելացան առևտրականները, տարբեր մակարդակի գործարարներ և այլն: Այս շրջանում ձևավորվեց նաև Հայաստանից ապրանք արտահանողների խումբը (1990-ական թթ. սկզբին ինչպես Երևանում, այնպես էլ Գյումրիում հիմնվեցին բազմաթիվ արտադրական կոոպերատիվներ, որոնք զբաղվում էին ՌԴ-ում ու ԱՊՀ այլ երկրներում լայն պահանջարկ ունեցող արտադրանքի թողարկմամբ): Շիրակի մարզում, մասնավորապես Գյումրիում, մեծ թիվ էին կազմում այդ արտադրատեսակների իրացմամբ բավականին մեծ գումարներ վաստակողները: Այս խումբը, ի տարբերություն շինարարական աշխատանքներում ընդգրկվածների, երկրից բացակայում էր ավելի կարճ ժամկետով (սովորաբար մեկ-երկու շաբաթից մինչև մեկ ամիս): Սրան զուգահեռ կան անմիջապես հետո ձևավորվեց նաև Թուրքիա և արաբական երկրներ մեկնող առևտրականների խումբը, որը զբաղվում էր հիմնականում հագուստեղենի և արդյունաբերական ապրանքների ներկրմամբ⁴³:

⁴³Այստեղ հիմնականում ներկայացվել են մեր անձնական դիտարկումները, Գյումրի քաղաքում: Այս փուլում միգրանտների հանրապետությունից բացակայելու ժամկետի վերաբերյալ մանրամասն հետազոտություններ գրեթե չըկան, ուստի բարդ է կոնկրետ վիճակագրական տվյալներ ներկայացնելը, քանի որ, ստեղծված քառսային վիճակում անհնար էր նորմալ հաշվառում կատարելը:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ այսօր բացակայող անդամների զբաղվածությունը դրսում այսպիսին է.

Աղյուսակ 6

Տարբերակ	%
Շինարարություն	65,8
.Սպասարկման ոլորտի այլ ծառայություններ	9,3
Գիտություն, կրթություն մշակույթ	4,3
Առևտուր	4,3
Զինվորական ծառայություն	4,3
Դիպվածային աշխատանք	3,3
Արդյունաբերություն	2,5
Գյուղատնտեսություն	2,5
Ձեռներեցություն	2,5
Առողջապահություն	1,2
Ընդամենը	100

Ինչպես եչևում է Աղյուսակ 6-ից. շինարարական աշխատանքներում ընդգրկվածները կազմում են մեծամասնությունը՝ դրսում զբաղվածների 65.8 %-ը: Համեմատաբար բարձր է նաև սպասարկման ոլորտի այլ ծառայություններում զբաղվածների տեսակարար կշիռը:

Աշխատանքային միգրացիայի աշխարհագրության ընդլայնումը նույնպես կատարվեց բավականին արագ: Խորհրդային շրջանում ձևավորված ավանդույթի համաձայն, բազմաթիվ շինարարական բրիգադներ շարունակում էին մեկնել նախկին վայրեր: Այս միտումը պահպանվեց նաև երկրաշարժից հետո (ինչն ապացուցվեց նաև անցկացված ուսումնասիրությամբ), սակայն ավանդական համարվող ուղղություններին ավելացան նաև նորերը⁴⁴: Ընդ որում, ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, հանդիպումներն արտագնա աշխատանքներով զբաղվող տարբեր անձանց հետ ու սոցիոլոգիական հարցումը, արտագնացության ու

⁴⁴ Այսպես, հարցման ժամանակ արձանագրվել է շուրջ 5 տասնյակ բնակավայր, ուր մեկնել են Շիրակի մարզից: Դրանք ընդգրկում են ՌԴ բազմաթիվ մարզեր ու երկրամասեր՝ Յեռավոր Արևելքից մինչև ՌԴ եվրոպական մաս:

արտագաղթի դեպքում բնակավայրի ընտրության ժամանակ կարևորվում են տարբեր սկզբունքներ:

«**Ինչու է հենց այդ վայրն ընտրվել**» հարցի համար գրանցվել է պատասխանների հետևյալ համախումբը.

Աղյուսակ 7

Տարբերակ	%
Եղել է աշխատանքի առաջարկ	29,7
Մեկնել է հարազատների, բարեկամների մոտ	24,0
Մեկնել է ընկերոջ, ծանոթի մոտ	15,1
Կատարվել է պատահական ընտրություն	11,4
Մեկնել է սովորելու	8,7
Մեկնել է ընտանիքի վերամիավորման նպատակով	7,8
Ավելի լավ են կենցաղային պայմանները	1,8
Մեկնել է ամուսնության նպատակով	0,5
Ավելի բարձր է բուժսպասարկման որակը	0,5
Մեկնել է դրամաշնորհային ծրագրի շրջանակում	0,5
Ընդամենը	100

Աղյուսակ 7-ից երևում է, որ դրսում բնակության վայրի ընտրության համար առաջնային են համարվում *աշխատանքի առաջարկը, հարազատների, բարեկամների, ընկերների ու ծանոթների առկայությունը*: Այսինքն, կարևորվում են անձնական կապերն ու ծանոթությունները, ինչը թույլ է տալիս ապահովել նաև պաշտպանվածության ու երաշխավորված նվազագույնի մթնոլորտ, չնայած, ինչպես ցույց տվեց հարցումը, բազմաթիվ են դեպքերը, երբ արտագնա աշխատանքի մեկնողը բախվում է չնախատեսված բարդությունների և հաճախ ստիպված է լինում վերադառնալ ձեռնունայն:

Բավականին բարձր է նաև «*կատարվել է պատահական ընտրություն*» պատասխանների տեսակարար կշիռը: Այս դեպքում արդեն նախապատվությունը տրվում է աշխատանքի լայն հնարավորություններ ունեցող երկրամասերին ու բնակավայրերին (ՌԴ եվրոպական մաս՝ Մոսկվա ու Մոսկվայի մարզ, Սախա-Յակուտիայի Հանրապետություն, Կրասնոյարսկի երկրամաս, Հեռավոր Արևելք և այլն): Ավանդաբար, մեծ է նաև Հյուսիսային Կովկաս, հատկապես Կրասնոդարի ու Ստավրոպոլի երկրամասեր տեղափոխվողների թիվը: Այսինքն, 1990-ական թթ. սկիզբը, կապված հատ-

կապես շինարարական աշխատանքների ծավալների կտրուկ նվազման հետ, կարելի է որակել որպես բնակչության զանգվածային տեղաշարժերի առաջին փուլ, երբ զուգակցվում էին տարբեր գործոններ և փոխվում էր միգրանտների կազմը: Պատճառները, ինչպես և հետագա տարիներին, կապված էին գերազանցապես բնակարանային չլուծված հիմնախնդիրների, աշխատատեղերի բացակայության և այլ գործոնների հետ:

Հետագա տարիներին արդեն կարելի է խոսել երկրաշարժի ուղղակի ազդեցության աստիճանական սահմանափակման կամ ազդեցությունը պայմանավորող գործոնների թվի նվազման մասին, չնայած, ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, դրանցից հիմնականը՝ բնակարանների և աշխատատեղերի բացակայությունը, շարունակում էր մնալ առաջնային: Միաժամանակ, ավելանում էին արդեն ընդհանուր տնտեսական ճգնաժամով պայմանավորված գործոններ:

Աղյուսակ 8

Տարբերակ	%
Գոյատևման համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինությունը	17,7
.Վաղվա օրվա հանդեպ անվստահությունը	16,1
.Սոցիալական, բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտը	14,4
Աշխատատեղերի բացակայությունը	12,5
.Տնտեսական անբարենպաստ իրավիճակը	10,9
Արդյունաբերական ձեռնարկությունների անգործությունը	5,6
.Տնակային կացութաձևը	5,6
Երկրաշարժը	4,7
Ձեռներեցությամբ զբաղելու անհնարինությունը	2,9
Ընտանիքի մեկնումը/վերամիավորումը	2,6
Գյուղատնտեսությամբ զբաղվելու համար անհրաժեշտ միջոցների բացակայությունը	2,6
Ըստ մասնագիտության աշխատելու անհնարինությունը	2,4
Հողի սեփ. արդյունքում առաջացած դժվարությունները հաղթահարելու անհնարինությունը	1,3
Կոռուպցիան և հովանավորչությունը	0,6
.Պատերազմը	0,1
Ընդամենը	100

Ինչպես երևում է Աղյուսակ 8-ից, հիմնականում գոյատևման համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինությունը և վաղվա օրվա հանդեպ անվստահությունը ստիպում են բնակչությանը դիմել արտագաղթի և արտագնացության: Բնակարանների բացակայությունը զուգակցվում է զանգվածային գործազրկության, աշխատատեղերի բացակայության կամ չափազանց ցածր աշխատավարձերի հետ, բնականաբար, էլ ավելի սահմանափակելով ճգնաժամի հաղթահարման հնարավորությունները: Այսպիսով, 1990-ական թթ. կեսերից արդեն կարելի է նշել մարզի բնակչության միգրացիաները պայմանավորող ընդհանուր հանրապետական գործոնների ազդեցության աճի մասին:

Ամփոփելով, կարելի է արձանագրել, որ «Սպիտակի» երկրաշարժը հանդես է գալիս որպես Շիրակի մարզի՝ մասնավորապես Գյումրի քաղաքի բնակչության միգրացիաները պայմանավորող հիմնական գործոններից մեկը, զուգակցվելով նաև հետագա տարիներին ավելացած ընդհանուր հանրապետական բնույթի գործոնների հետ: Այս պարագայում կարելի է արձանագրել, որ երկրաշարժը իր հերթին հանդես է գալիս որպես բազմաթիվ անբարենպաստ իրողություններ էլ ավելի խորացնող գործոն: Ընդ որում, երկրաշարժի ազդեցությունը դասակարգվում է ինչպես ըստ առանձին բնակավայրերի, այնպես էլ առանձին տարիների:

ՀՀ-ում ընթացող տարաբնույթ քաղաքական, տնտեսական ու հասարակական գործընթացները նույնպես իրենց ուղղակի ազդեցությունն են թողել Շիրակի մարզի բնակչության միգրացիաների վրա: Միգրացիաները պայմանավորող գործոնների ամբողջական վերլուծության նպատակով, դրանք կներկայացվեն երկու հիմնական խմբերով՝ ընդհանուր հանրապետական և տեղային կամ լոկալ:

Առաջին խումբ գործոնները բնորոշ են ողջ հանրապետությանը: Միաժամանակ, կապված տեղային գործոնների զուգակցման հետ, Շիրակի մարզում վերջիններս ունեն նաև դրսևորման առանձնահատկություններ:

Ընդհանուր կամ հանրապետական գործունեության կարևորագույնը Հայաստանի անկախության հռչակումն էր, որին հաջորդեցին արմատական վերափոխումները:

1991թ. Հայաստանում սեփականաշնորհվեց հողը, իսկ անասնազխաքանակը, գյուղատնտեսական տեխնիկան ու գյուղատնտեսական նշանակության կառույցները վաճառվեցին անհատական գյուղացիական տնտեսություններին⁴⁵:

Հողի սեփականաշնորհումից և գյուղատնտեսության ոլորտում իրականացված վերափոխումներից հետո, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները⁴⁶, գյուղական բնակավայրերում ձևավորված իրավիճակը ենթարկվեց լուրջ փոփոխությունների: Վերը բերված աղյուսակում երևում է, որ բնակչության միգրացիոն ակտիվության պատճառ են հանդիսացել նաև գյուղատնտեսությանը զբաղվելու համար անհրաժեշտ միջոցների բացակայությունը և հողի սեփականաշնորհման արդյունքում ձևավորված դժվարությունները հաղթահարելու անհնարինությունը:

Այս տեսանկյունից ուշագրավ է հատկապես Պենզաշենի օրինակը: Խորհրդային շրջանում այն ուներ քաղաքատիպ ավանի կարգավիճակ, իսկ բնակչության մեծ մասը զբաղված էր արդյունաբերության ոլորտում, բնականաբար, աստիճանաբար օտարվելով գյուղատնտեսական զբաղմունքներից, որոնք այստեղ ունեին ընդամենը օժանդակ նշանակություն: Այս համայնքում սահմանափակ էին նաև սեփականաշնորհման հնարավորությունները, քանի

⁴⁵ Ն. Մանասերեան, Հայաստանի գյուղատնտեսությունը յետ-սեփականաշնորհման փուլում-Դրօշակ, 1997, թիվ 11, էջ 23-24:

⁴⁶ Ս. Աբրահամյան, Գյուղատնտեսության պետական կարգավորման շուրջ-Շուկայական տնտեսության անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում, գիտական հոդվածների ժողովածու, գիրք երկրորդ, Եր., 1997, էջ 87-94; Մ. Գևորգյան, Բ. Եղիազարյան, Ա. Թամազյան, Հ. Մամիկոնյան, ՀՀ ագրոպարենային համակարգի զարգացման ծրագրի շուրջ-նույն տեղում, էջ 94 –103; Ս. Գևորգյան, ՀՀ գյուղատնտեսության զարգացման խնդիրները-նույն տեղում, էջ 49-60; Ս.Ղազարյան, Է. Ղազարյան, Տնտեսական քաղաքականությունը և գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնադրույթները – նույն տեղում, էջ 36-42; Հ. Մամիկոնյան, Հ. Պիվազյան, ՀՀ գյուղատնտեսական արտադրության տարածքային մասնագիտացման ու զարգացման նպատակահարմար ուղղությունները – նույն տեղում, էջ 80-87:

որ չկային բավարար հողատարածքներ: Անկախացումից հետո, նոր վարչատարածքային բաժանման արդյունքում, փոխվեց նաև բնակավայրի կարգավիճակը՝ այն վերածվեց գյուղի, սակայն բացակայում են գյուղատնտեսական գործունեության հնարավորությունները: Չեն գործում նաև արդյունաբերական ձեռնարկությունները, ուստի բնակչության մի ստվար հատվածը, հատկապես երիտասարդներն ու միջին տարիքի տղամարդիկ ստիպված են գոյատևման նպատակով զբաղվել արտագնա աշխատանքով կամ հիմնովին լքում են հայրենի բնակավայրը, ձևավորելով անվերադարձ միգրացիա:

Արդյունաբերական ձեռնարկությունների, փոքր, ինչպես նաև անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհումը հանրապետությունում սկսվեց 1994թ.: Չմանրամասնելով մասնավորեցման մեխանիզմները, նշենք, որ դրանք ևս, ըստ էության, չճանաչեցին իրենց նպատակին:

Փաստորեն, տնտեսական վերափոխումների ազդեցությունը մարզի բնակչության միգրացիոն շարժերի վրա միանշանակ չէ:

Հողային վերափոխումներն ունեցան երկակի ազդեցություն՝ մի դեպքում դրանք որոշ գյուղերում հանդես եկան որպես բնակչության միգրացիան կանխող, մեկ այլ դեպքում՝ խթանող գործոն: Յուրաքանչյուր կոնկրետ բնակավայրի համար այս դեպքում կարևորվում է բնատնտեսական գործոնների ողջ համալիրը, որը և պայմանավորում է կատարված փոփոխությունները:

Նույնը կարելի է ասել նաև արդյունաբերության ոլորտում իրականացված վերափոխումների մասին: Սակայն, ի տարբերություն գյուղական բնակավայրերի, քաղաքներում ստեղծվել է ավելի ծանր իրավիճակ, քանի որ արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասն այսօր չի գործում, իսկ այլընտրանքային զբաղվածության հնարավորությունները սահմանափակ են: Շիրակի մարզի բնակչության համար լրացուցիչ բարդություններ են ստեղծում նաև արդյունաբերական ձեռնարկությունների վերագործարկման և նոր հզորությունների ստեղծման անբավարար տեմպերը: Անբավարար են նաև ներդրումների ծավալները: Այսինքն, ընդհանուր հանրապետական գործոններն արտահայտված են նաև մարզում:

Միաժամանակ, երկրաշարժի դեռևս չհաղթահարված բազմաթիվ դժվարություններով պայմանավորված, դրանք այստեղ ունեն դրսևորման առանձնահատկություններ և հաճախ տարբերվում են նաև ըստ առանձին տարածաշրջանների ու բնակավայրերի:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

**Բնակչության ներքին միգրացիաները,
ճոճանակային միգրացիա**

Ներքին միգրացիաների բնույթի, ուղղվածության ու ծավալների մանրամասն, ամբողջական քննարկումը կապված է լուրջ բարդությունների հետ: Առաջին կարևոր խնդիրը վերաբերում է վիճակագրական հաշվառմանը: Բացակայում են ամբողջական տվյալներն ըստ բնակավայրերի ներքին միգրացիաների ուղղությունների, միգրանտների թվի, սեռատարիքային կազմի, միգրացիայի դրդապատճառների և որոշ այլ հարցերի վերաբերյալ:

Ներհանրապետական միգրացիայի առաջին փուլ կարելի է համարել երկրաշարժին անմիջապես հաջորդող շրջանը, երբ հանրապետության հյուսիսային շրջաններում բնակվող մոտ 100000 բնակիչ էվակուացվեց հանրապետության այլ վայրեր՝ դասվելով էկոլոգիական միգրանտների կատեգորիային⁴⁷:

Քննարկվող ժամանակահատվածում բնակչության ներհանրապետական միգրացիան ունեցել է գյուղից քաղաք, գյուղից գյուղ, քաղաքից գյուղ և քաղաքից քաղաք ուղղությունները, որոնք փորձենք քննարկել առանձին-առանձին:

Գյուղից քաղաք ուղղություն. Առկա և նոր ստեղծվող աշխատատեղերի ու աշխատանքային ռեսուրսների ճշգրիտ հաշվեկշռի բացակայությունը, վարչական շրջանների միակողմանի զարգացումը, կադրերի հոսունությունը⁴⁸, արդեն խորհրդային շրջանում հանգեցրել էին դեպի խոշոր քաղաքներ և մայրաքաղաք հանրապետության լեռնային ու նախալեռնային շրջանների բնակ-

⁴⁷Г. Погосян, Аժի янское общество в трансформации, Ер., 2003, էջ 297:

⁴⁸Տ.Քոչարյան, Լ. Եսայան, Արդյունաբերության զարգացման պրոբլեմները և հեռանկարները Թումանյանի շրջանում, Հայաստանի Ժողովրդական տնտեսություն, N:3, Եր.,1991, էջ19; Վ.Խոջաբեկյան, Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում, Եր.,1998, էջ 160; Ա. Օի օթա-ձաթյի, Ա.Աթաօթյի, Աձի ի ձթաօթ-թթեթա ձթի ձեթու օթաթի օթաթեթ ձ Աձի յի ձեթի օթաթ, Աձ., 1990:

չութեան արտահոսքին: Հանրապետութեան անկախացումից հետո, հատկապէս Շիրակի մարզում այս գործընթացում ներգրավված բնակավայրերի «աշխարհագրությունն ընդլայնվեց» նոր գյուղերի հաշվին՝ դրսևորելով որոշ ներքին առանձնահատկություններ:

Շիրակի մարզում գյուղից քաղաք տեղափոխվելն ուներ մի քանի պատճառ: Գյուներիում այս երևույթը բավականին տարածված էր հատկապէս շինարարական աշխատանքների մեծ ծավալների պայմաններում, երբ նաև գյուղաբնակներն էին մասնակցում վերականգնողական աշխատանքներին, և որոշ դեպքերում, օգտվելով շինարարների համար նախատեսված ֆոնդից, բնակարաններ ստանում ու տեղափոխվում քաղաքներ: Այս շրջանում Գյուների տեղափոխվեցին ընտանիքներ Աշոցքի, Ամասիայի, Ախուրյանի շրջաններից: Կարելի է սակայն նշել, որ այս ուղղութիւնը, ծավալների տեսանկյունից, էական չէր, քանի որ նշված ժամանակահատվածում հենց քաղաքներն էին գտնվում ծանր վիճակում, ուստի տեղափոխվելու հիմնական պատճառը բնակարան ստանալն էր: Նաև սա է պատճառը, որ բնակարան ստացած որոշ ընտանիքներ շարունակում էին բնակվել գյուղերում, իսկ բնակարանը հաճախ տրվում էր վարձով: Որպէս գյուղից քաղաք տեղաշարժերը պայմանավորող ևս մեկ գործոն պետք է համարել այն, երբ արտագնացութեան մեկնած և գումարներ վաստակած որոշ ընտանիքներ քաղաքներում բնակարաններ են գնում: Իհարկէ, այս գործոնը դարձյալ չի կարելի համարել էական, սակայն այն ևս առկա է:

Վերջին տարիներին բավարար ֆինանսական հնարավորություններ ունեցող ընտանիքները նախընտրում են բնակարաններ գնել Երևանում: Նշենք նաև, որ թվարկված միտումները կամ դրանց մի մասը փոխվել են տարբեր տարիներին: Այսպէս, նշվեց, որ Գյուների տեղափոխվում էին հիմնականում շինարարական աշխատանքների առաջին շրջանում՝ մինչև խորհրդային շինարարական կազմակերպությունների հեռանալը: Դրանից հետո աշխատանքների ծավալների կտրուկ նվազման պայմաններում այս հանգամանքը դադարեց էական լինելուց:

Գյուճարիում, 1990-ական թթ. վերջերից արձանագրվել է ևս մեկ միտում. շինարարական աշխատանքների համեմատաբար մեծ ծավալները մասամբ վերականգնել են այս քաղաքի գրավչությունը և վերջին տարիներին դիտվում է բնակչության ներհույս հատկապես ծայրամասային, բարձրլեռնային ու լեռնային բնակավայրերից, որոնք երիտասարդության մի մասի կողմից դիտվում են որպես անհեռանկարային, որը պարզվեց նաև հարցման ընթացքում: Մասնավորապես, Արփենիում կային երիտասարդ ընտանիքներ, որոնք արտագնացության էին մեկնել գումարներ վաստակելու և Գյուճարի տեղափոխվելու նպատակով: Գյուճարիում իր ուրույն տեղն ունի նաև ռուսական կայազորի առկայությունը, որտեղ բավականին մեծ է գյուղերից պայմանագրային հիմունքներով ծառայողների թիվը:

Գյուղից գյուղ տեղափոխությունները նույնպես ենթարկվում են որոշ օրինաչափությունների: Այս ուղղությունն ակտիվացավ 1980-ական թթ. վերջին, երբ Շիրակի մարզից, և հատկապես Ամասիայի տարածաշրջանից հեռացան ադրբեջանցիները: Սկզբնական շրջանում ադրբեջանական գյուղեր տեղափոխվում էին ինչպես քաղաքներից, այնպես էլ հարևան հայաբնակ գյուղերից, ինչը նաև բնակարանային խնդրի լուծման էժան տարբերակ էր: Ամասիայի տարածաշրջանում այսպիսի տեղափոխություններ արձանագրվել են Բանդիվան, Ջովտուն և այլ գյուղերից: Միտումը պահպանվեց նաև հետագա տարիներին, ակտիվանալով հատկապես 1991թ., կապված հողի սեփականաշնորհման հետ, երբ տեղափոխվելը, բացի բնակարանային խնդրի լուծումից, ընձեռում էր նաև հողի սեփականատեր դառնալու հնարավորություն: Նշենք, որ այս միտումն արտահայտված է նախկինում ադրբեջանական բնակչություն ունեցող գրեթե բոլոր տարածաշրջաններում:

Լեռնային երկրներին բնորոշ իրողություններից է նաև բարձրլեռնային գյուղական բնակավայրերի բնակչության արտահոսքը հարթավայրային և նախալեռնային գոտու ավելի բարենպաստ պայմաններ ունեցող գյուղեր և քաղաքներ: Նշենք սակայն, որ այս տեղափոխություններն ավելի տարածված էին խորհրդային շրջանում, իսկ այսօր դրանք դիպվածային բնույթ են կրում:

Քաղաքից գյուղ ուղղությունը Շիրակի մարզում, հատկապես երկրաշարժից անմիջապես հետո, պայմանավորված էր վերջինիս ազդեցությամբ: Այն, պատճառած մարդկային կորուստներից զատ, իր կնիքը թողեց հետագա ժողովրդագրական գործընթացների ողջ համալիրի վրա: Էապես աճեց մարզի բնակչության միգրացիոն ակտիվությունը, քանի որ հատկապես երկրաշարժին հաջորդած առաջին երկու-երեք տարիներին առավել տուժած բնակավայրերը համարվում էին բնակության համար անբարենպաստ պայմաններ ունեցող և նպաստում էին բնակչության արտահոսքի ձևավորմանը, ինչպես նաև կանխում էվակուացված բնակչության վերադարձը: Եթե հաշվի առնենք, որ բնակչությունը ոչ միայն զրկվել էր բնակության նվազագույն կենցաղային պայմաններից, այլև՝ աշխատանքից, ակնհայտ կդառնա, որ աստիճանաբար ձևավորվում էր բնակչության մշտական վայրից հեռանալու և առավել ապահով վայրում հաստատվելու ձգտումը: Եվ, քանի որ արդյունաբերական ձեռնարկությունների անգործությունը համապետական բնույթ ուներ, զբաղվածություն ապահովելու համար ներհանրապետական միգրացիոն ուղղությունների մեջ որոշակիորեն ակտիվացավ քաղաք-գյուղ ուղղությունը: Այս միտումը կապված էր նաև հողի սեփականաշնորհմանը մասնակցելու, գոյատևման նվազագույն պահանջումքներն ապահովելու ձգտման հետ: Նման գործընթացը խթանեց նաև «Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի այն դրույթը, ըստ որի, երկրաշարժից հետո գյուղեր վերադարձած ընտանիքներն ունեին առանց գրանցման պահանջվող ժամկետի առկայության հողի սեփականատեր դառնալու հնարավորություն⁴⁹:

Քաղաքից գյուղ տեղափոխվելը մարզի շրջանակներում ուներ որոշակի առանձնահատկություններ: Երկրաշարժի պատճառով առավել շատ տուժել էր Գյումրին, որն ուներ աշխատուժի օգտագործման իրական հնարավորություններ: Բնական է, որ հենց այստեղ գոյացավ աշխատանքային ռեսուրսների ավելցուկ: Մինչև 1991թ. դեռևս զբաղվածության հիմնախնդիրն այնքան սուր չէր,

⁴⁹ ՀՀ օրենքը գյուղացիական և կոլեկտիվ տնտեսությունների մասին, Եր., 1991, էջ 9-10:

քանի որ շինարարության մեծ ծավալները հնարավորություն էին տալիս ազատ աշխատուժի մի մասը ներգրավել դրանցում: Սակայն, 1991թ.-ից շինարարական աշխատանքների դանդաղելու և միութենական շինարարական կազմակերպությունների զգալի մասի հեռանալու հետևանքով, աշխատանքային ռեսուրսների զգալի մասը կրկին հայտնվեց գործազուրկի կարգավիճակում: Վերջիններիս հաշվին էլ ձևավորվեց ներհանրապետական միգրացիան, ընդ որում դրանում ներգրավվեցին հիմնականում հանրապետությունից դուրս աշխատանք գտնելու միջոցներ չունեցող անձինք: Միաժամանակ, հատկապես 1988-1989թթ., Ամասիայի շրջանից ադրբեջանցիների հեռանալուց հետո ազատվեցին բազմաթիվ բնակարաններ, առաջացան լքված կամ ժամանակավորապես դատարկված գյուղեր, ինչը հնարավորություն ստեղծեց լուծելու բնակարանային հիմնախնդիրը և միաժամանակ ունենալ սեփական հող՝ գոյության նվազագույն պայմաններն ապահովելու համար: Այս գործընթացն ակտիվ էր հատկապես 1990-ական թթ. սկզբին, երբ Գյումրիից բազմաթիվ ընտանիքներ բնակարաններ գնեցին (կամ պարզապես զբաղեցրին) Ամասիայի տարբեր գյուղերում, որոնք հաճախ օգտագործվում էին ժամանակավորապես՝ գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման շրջանում: Մնացած անիսներին ընտանիքը շարունակում էր բնակվել Գյումրիում:

Քաղաքից քաղաք ուղղությունը, որը նույնպես առկա է Շիրակի մարզում, դարձյալ ենթակա է նույն տրամաբանությանը: Մարզի քաղաքներից հեռանալը բազմաթիվ ընտանիքների համար համարվում էր ավելի բարձր կենսամակարդակ ապահովելու հնարավորություն: Դրա հետ մեկտեղ մարզի ներսում քաղաքից քաղաք տեղափոխությունները լայն տարածում չունեն: Վերջին տարիներին, ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունները, գրավչության տեսանկյունից աչքի է ընկնում հիմնականում Երևանը, ուր և ձգտում է տեղափոխվել քաղաքաբնակ ընտանիքների մեծամասնությունը, ընդ որում, հաճախ տեղափոխվում են նույնիսկ առանց բնակարանային հիմնախնդրի լուծման՝ քիչ թե շատ բարձր վճարվող աշխատատեղերի առկայության դեպքում: Ըստ հարցման արդյունքների ներքին միգրացիայում ընդգրկված-

ների 68%-ը գտնվում է Երևանում: Պատճառներն այս դեպքում ավելի քան պարզ են. Երևանում կենտրոնացված է գործող հիմնարկ-ձեռնարկությունների մեծ մասը, պետական կառավարման ամբողջ համակարգը, գրեթե բոլոր միջազգային կազմակերպությունները, ուստի, հատկապես բարձր կրթական ցենզ ունեցողների համար այստեղ ավելի հեշտ է ըստ մասնագիտության աշխատանք գտնելը: Քաղաքից քաղաք տեղափոխություններ կային նաև երկրաշարժից անմիջապես հետո, երբ էվակուացվածների որոշ մասը չվերադարձավ, հաստատվելով հիմնականում Երևանյան տարբեր հյուրանոցներում, հանգստյան տներում, պանսիոնատներում, հանրակացարաններում և այլն, որտեղ նրանց մի մասը բնակվում է մինչ օրս: Ինչպես տեղափոխությունների այլ ուղղությունների դեպքում, այստեղ ևս հստակ առանձնացվում է քաղաքից քաղաք տեղափոխությունների պատճառների մի քանի խումբ: Հիմնական պատճառ են շարունակում հանդիսանալ բնակարանի բացակայությունը, ցածր կենսամակարդակը, աշխատատեղերի պակասը, որոշ դեպքերում՝ երեխաների կրթության հետ կապված խնդիրները: Բնակարանային խնդիրը դեռևս շարունակում է մնալ երկրաշարժի ուղղակի հետևանք:

Ուշագրավ փոփոխությունների է ենթարկվել նաև *ճոճանակային միգրացիան*. Բնակչության ճոճանակային միգրացիան հատուկ է հիմնականում խոշոր քաղաքներին: Գյումրու շուրջ մինչև երկրաշարժը գոյություն է ունեցել տարբեր արդյունաբերական ձեռնարկություններին սպասարկող ճոճանակային միգրացիա⁵⁰: ճոճանակային միգրացիա գոյություն է ունեցել նաև այլ քաղաքների շուրջ. Արթիկը, օրինակ, որը խորհրդային շրջանում արդյունաբերության զարգացման բավականին բարձր տեմպեր ունեցող քաղաք էր, աշխատատեղեր էր ապահովում նաև հարևան գյուղերի բնակչության համար: Գյումրին, բացի արդյունաբերական ձեռնարկություններին սպասարկող միգրացիա ձևավորելուց, նաև ուսումնական խոշոր կենտրոն էր, որի կրթական հաստատություններում սովորում էին մեծ թվով երիտասարդներ հարևան բնակավայրերից:

⁵⁰ Լ. Վալեսյան, նշվ. աշխ., էջ 219-221; Գ. Ավագյան, Հայկական ՍՍՀ բնակչությունը, Եր., 1975, էջ 147:

Որոշակի թիվ էին կազմում նաև ամենօրյա առևտրի նպատակով քաղաքների շուկաներ մեկնող գյուղաբնակները: Այսինքն Գյումրիի խորհրդային շրջանում ձևավորում էր ճոճանակային միգրացիայի մի քանի ալիք:

Երկրաշարժից ու վերափոխումներից հետո ճոճանակային միգրացիայի ծավալներն ու ուղղությունները ենթարկվեցին էական փոփոխությունների: Սակայն վիճակագրական տվյալների բացակայությունը հնարավորություն չի ընձեռում ներկայացնել քանակական կոնկրետ ցուցանիշներ: Այդ պատճառով կներկայացնենք ճոճանակային միգրացիայի հիմնական ուղղություններն ու պատճառները: Նշենք, որ 1970թ. մարդահամարի տվյալների համաձայն, Գյումրիի ճոճանակային միգրացիային մասնակցողները կազմել են 1146 մարդ: Եթե նկատի ունենանք, որ մինչև 1988թ. քաղաքն աչքի է ընկել արդյունաբերության զարգացման բարձր տեմպերով, ապա ակնհայտ կդառնա, որ աճել է նաև ճոճանակային միգրացիայի մեջ ընդգրկվածների թիվը: Գյումրիի շուրջ ստեղծվել էր արդեն 20-25 կմ շառավղով ճոճանակային միգրացիա, որն ընդգրկում էր հիմնականում Ախուրյանի տարածաշրջանի բնակավայրերը:

Երկրաշարժը էական ազդեցություն ունեցավ նաև Գյումրու շուրջ ձևավորված ճոճանակային միգրացիայի վրա: Նախ, երկրաշարժից անմիջապես հետո Գյումրիի ձեռնարկությունների մեծ մասի ավերման հետևանքով վերջինիս սպասարկող ճոճանակային միգրացիան հիմնականում դադարեց: Իսկ այն ձեռնարկությունները, որոնք չէին ավերվել, դադարեցրել էին բնականոն գործունեությունը: Այսինքն, արդյունաբերական ձեռնարկություններին սպասարկող ճոճանակային միգրացիան հասավ նվազագույնի, իսկ որոշ դեպքերում՝ դադարեց:

Սա չի նշանակում սակայն, որ ճոճանակային միգրացիան Շիրակի մարզում ընդհանրապես դադարել է: Արդեն նշել ենք, որ Գյումրիի ստանձնել է նոր՝ մարզկենտրոնի գործառույթներ: Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ այսօր որոշ թվով ծառայողներ ընդգրկված են ճոճանակային միգրացիայի այս հոսքում. բնակվելով գյուղական վայրերում, աշխատում են մարզկենտրոնի

տարբեր հիմնարկ-ձեռնարկություններում: Նույնը կարելի է ասել նաև երկրաշարժից հետո քաղաքամերձ գյուղերում հաստատված ու քաղաքներում աշխատող մանկավարժների և այլ մասնագետների մասին: Միաժամանակ, արձանագրված է ճոճանակային միգրացիայի մեկ ուղղություն ևս, երբ քաղաքաբնակ որոշ մանկավարժներ աշխատում են գյուղական դպրոցներում:

Ճոճանակային միգրացիայի մեջ ընդգրկված են նաև գյուղաբնակ և քաղաքաբնակ ուսանողներ (ինչը ցույց տվեց նաև անցկացված հետազոտությունը): Այս հոսքը ևս ենթարկվում է որոշ փոփոխությունների: Նախկինում ծնողների մեծ մասը ձգտում էր երեխաներին սովորելու ուղարկել երևանյան բուհեր: Այսօր ֆինանսական բարդությունների, երևանում բնակվելու դժվարությունների հետ կապված, արդեն նախապատվությունը տրվում է մարզկենտրոնի բուհերին և այլ կրթական հաստատություններին: Վերջին տարիներին ճոճանակային միգրացիայում ընդգրկված են նաև որոշ թվով դպրոցականներ, հատկապես բարձր դասարանցիներ, որոնք սովորում են մարզկենտրոնի քոլեջներում, վարժարաններում:

Հողային վերափոխումների իրագործումից հետո ակտիվացել է խորհրդային շրջանում գոյություն ունեցած մեկ հոսք ևս, որում ներառված են հիմնականում քաղաքներում գյուղմթերքների իրացմամբ զբաղվող գյուղացիները: Ձևավորվել են նաև այլ հոսքեր, որոնք, մեր կարծիքով, դարձյալ կարելի է դիտարկել որպես ճոճանակային միգրացիա: Ամռան ամիսներին աճում է Արմավիրի, Արարատյան դաշտի այլ բնակավայրերի և Բագրատաշենի գյուղմթերքների շուկաներ մեկնող առևտրականների թիվը:

Բնակչության արտաքին միգրացիաները. ծավալման ուղղություններն ու ինտենսիվությունը

Բնակչության արտաքին միգրացիաները քննարկվող ժամանակահատվածում վերլուծելիս հարկավոր է հաշվի առնել որակապես նոր քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակը, որն ազդել և ազդում է միգրացիաների ուղղությունների ու ինտենսիվության վրա, քանի որ մարդկանց տեղաշարժերը բացատրվում

են հասարակական օրենքներով, որոնք փոխվում են պատմական մեկ դարաշրջանից մյուսին անցնելիս: Փոխվում են տեղաշարժերի պատճառները, մասշտաբը, ուղղությունները և նպատակը:⁵¹

Համառոտակի անդրադառնանք խորհրդային շրջանում ձևավորված իրավիճակին: 1926-1939 և 1950-1970թթ. ՀԽՍՀ բնակչությունը միայն ներհոսքի հաշվին ավելացել է 208800 մարդով կամ համապատասխանաբար 11.0 և 14.4%-ով: Խորհրդային տարիներին բնակչության աճի աղբյուր է հանդիսացել նաև հայրենադարձությունը⁵²: Հայրենադարձության բոլոր փուլերում Շիրակը ներգաղթող հայերի բնակության հիմնական վայրերից էր: Այսպես, 1946-1949թթ. հայրենադարձների գերակշռող մեծամասնությունը, նախկինում լինելով քաղաքաբնակ, հրաժարվում էր մեկնել գյուղական շրջաններ, ամեն կերպ ձգտելով տեղավորվել մեծ քաղաքներում: Հայրենադարձների 81.6%-ը բնակեցվել է 20 քաղաքներում, ամենից շատ՝ Գյումրիում (ընդհանուր թվի գրեթե 20%)⁵³, սակայն, 1970-ական թթ. պատկերը սկսեց աստիճանաբար փոխվել: Նախորդ տասնամյակների հայրենադարձների մի մասը հեռացավ Հայաստանից՝ հիմնականում ԱՄՆ և այլ երկրներ:

Բնակչության միգրացիան առավել ինտենսիվ դարձավ 1980-ականների վերջերին-90-ականների սկզբներին: Նույն շրջանում, հիմնականում 1988-1992թթ., տեղի ունեցավ փախստականների մուտքը հանրապետություն: Վերջիններիս մի մասը տեղավորվեց Շիրակի մարզում, սակայն հետագայում, սոցիալ-տնտեսական ծանր կացության, ինչպես նաև ադապտացիայի հետ կապված բարդությունների արդյունքում, նրանց մի մասը լքեց նույն բնակավայրերը:

Ներկայացնենք Շիրակի մարզի բնակչության միգրացիայի վերլուծությունը՝ որպես հիմք ընդունելով ԱՎԾ բնակչության միգրացիայի հաշվառման քարտերի տվյալները (տես նաև Հավելված՝

⁵¹ Ի .Ածծաի նեեé, Էչáծծաի í úá òծծáú: Ոծáí í áéáí èá ýéí í î ì è÷áñéí é ñî ááòñ-éí é ááí áծáòèè, Մ., 1980, էջ 287:

⁵² Գ.Ավագյան, Հայկական ՍՍՀ բնակչությունը, էջ 121-129:

⁵³ Ա. Ստեփանյան, Հ. Սարգսյան, Հայրենադարձների տեղաբաշխումը Ալեքսանդրապոլ-Լենինականում, Ջեկ. հիմն., Գյումրի, 2002թ.

Գծապատկեր 1, Քարտեզ): Առավել մանրամասն կդիտարկվեն 1988-1994թթ., քանի որ այս տարիներին ուրվագծվեցին միգրացիաների հիմնական ուղղությունները:

Աղյուսակ 9

Թվականը	Միգրացիոն սալոն		
	Ընդամենը	.Քաղաք	Գյուղ
1988	-7476	-1277	-6199
1989	-3972	-1978	-1994
1990	-57	-1151	1094
1991	2939	-60	2999
1992	-670	-1436	766
1993	-1744	-1643	-101
1994	-1837	-1376	-461
1995	-1217	-875	-342
1996	-872	-657	-215
1997	-724	-653	-71
1998	-569	-485	-84
1999	-572	-539	-33
2000	-953	-1013	60
2001	-763	-801	38
2002	-1050	-961	-89

Շիրակի մարզի բնակչության միգրացիոն սալոն 1988-2002թթ.

Ինչպես երևում է աղյուսակ 9-ից, քննարկվող ամբողջ ժամանակահատվածում մարզի բնակչության միգրացիոն սալոն դրական է եղել միայն 1991թ., գյուղական բնակավայրերի դրական միգրացիոն սալոնի հաշվին: 1988թ. մարզի բնակչության միգրացիոն սալոն եղել է բացասական, որը հիմնականում ձևավորվել է գյուղական բնակչության միգրացիոն սալոնի բացասական արժեքներից: 1989թ. և մարզի բնակչության միգրացիոն սալոն եղել է բացասական, սակայն աճել է նաև քաղաքային բնակչության միգրացիոն սալոնի բացասական ցուցանիշը: Այն ձևավորվել է Գյումրիում ստեղծված իրավիճակի արդյունքում. մեկնողները կրկնակի գերազանցել են եկողներին:

Ի տարբերություն նախորդ տարիների, 1990թ. միգրացիոն սալոնի բացասական ցուցանիշը նվազել է, կազմելով -57 մարդ: 1991թ. դրական ցուցանիշը 1992թ. դարձյալ վեր է ածվում բացա-

սականի և բացասական մեծությունը պահպանվում է հետագա բոլոր տարիներին:

Միգրացիոն գործընթացների ակտիվության տեսանկյունից, քննարկվող ժամանակահատվածը կարելի է բաժանել երեք փուլի՝

ա) 1988-1991թթ., երբ միգրացիայի ծավալը գերազանցում էր 10000-ը (տատանվելով 10409-ից՝ 1990թ., 17244՝ 1988թ. մարդու միջև),

բ) 1992-1994թթ., երբ միգրացիայի ծավալը գերազանցում էր 4.000-ը (տատանվելով 4483-ից՝ 1994թ. 5846՝ 1992թ. մարդու միջև),

գ) 1995-2002թթ., երբ միգրացիայի ծավալը գերազանցում էր 2.000-ը (տատանվելով 2462-ից՝ 1997թ. 2795՝ 1995թ. մարդու միջև):

Այսպիսի հիմնական փուլերի առանձնացումը պայմանավորված է մի քանի հանգամանքով: Արդեն բազմիցս նշել ենք, որ երկրաշարժի հետևանքներով ու ազդեցությամբ պայմանավորված, միգրացիոն ակտիվություն դիտվում էր հիմնականում մինչև 1990-ական թթ. կեսերը: Մինչև 1991թ. միգրացիոն ակտիվությունը կարող էր ծանր կենցաղային պայմանների և նոր իրավիճակին հարմարվելու դժվարությունների դրսևորման հետևանք լինել, իսկ մինչև 1994թ. սրան ավելացան նաև աղետով պայմանավորված այլ գործոններ՝ տնակային պայմաններ, աշխատատեղերի պակաս, արդյունաբերական ձեռնարկությունների փաստացի անգործություն ու վերականգնման անբավարար տեմպեր և այլն: 1994թ. հետո երկրաշարժի հետևանքով պայմանավորված գործոնները շարունակում են պահպանվել: Սակայն սրանց ավելանում են արդեն քաղաքական, տնտեսական վերափոխումների բացասական արդյունքներն ու ազդեցությունները՝ զանգվածային աղքատացում, հասարակության արտահայտված ունեցվածքային բևեռացում և այլն:

ՀՀ և այլ երկրների միջև ևս 1988-1991թթ. գոյություն է ունեցել ինտենսիվ միգրացիա, ընդ որում, եթե մինչև 1988թ. արդեն ուրվագծվել էին միգրացիոն հիմնական ուղղությունները, արտահոսքի և ներհոսքի օջախները, ապա 1988թ. հայ հասարակությունը

կանգնեց բոլորովին նոր հիմնախնդիրների առջև, որոնցից կարելի է առանձնացնել՝

- «Սպիտակի» երկրաշարժը, որը բնակչության արտահոսքի պատճառ հանդիսացավ հատկապես Շիրակի մարզում, որի արդյունքում 1988թ. արձանագրվել է մեկնողների ամենաբարձր ցուցանիշը:
- Արցախյան հակամարտությունը և արդյունքում՝ ադրբեջանցիների արտահոսքը Հայաստանից և Ադրբեջանից մեծաքանակ հայ բնակչության ներհոսքը Հայաստան:

Նշված իրադարձությունների արդյունքում միգրացիայի ծավալը քննարկվող ժամանակահատվածում աճեց և առավելագույնին հասավ 1989թ.:

Միգրացիոն կապերն ընդգրկում են նախկին ԽՍՀՄ բոլոր հանրապետությունները: Երկրաշարժից հետո այդ կապերն ակտիվացան նաև եվրոպական երկրների, ԱՄՆ-ի հետ: Արդյունքում, հատկապես քաղաքային բնակավայրերից բնակչության զգալի արտահոսք է արձանագրվել նշված երկրներ:

Միգրացիոն փոխանակությունները տարբեր երկրների հետ տալիս են տարբեր արդյունք: Այսպես՝ Ադրբեջանի, Վրաստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի, Տաջիկստանի, Լատվիայի հետ Հայաստանի համար դրանց արդյունքը դրական է, իսկ նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետությունների հետ՝ բացասական: Առավելագույն ցուցանիշը դիտվում է ՌԴ-ի պարագայում, վերջինիս շուրջ երեք անգամ զիջում է Ուկրաինան, հաջորդում է Բելառուսը: Մյուսներից համեմատաբար մեծ է Ղազախստանի պարագայում արձանագրված բացասական արդյունքը: Ի տարբերություն այլ երկրների, ՌԴ-ի հետ միգրացիոն փոխանակությունների՝ Հայաստանի համար բացասական մեծության ձևավորմանը նպաստել են առավելապես ՀՀ գյուղերի և ՌԴ-ի միջև միգրացիոն փոխանակությունների բացասական արդյունքը: Նույնն է պատկերը նաև Ղազախստանի պարագայում, այն տարբերությամբ, որ Ղազախստանի և ՀՀ քաղաքների միջև փոխանակությունները Հայաստանի համար դրական են:

Այլ երկրների և Հայաստանի միջև միգրացիոն փոխանակությունների հանրագումարը Հայաստանի համար եղել է բացասական:

Միգրացիայի ծավալը ևս տարբեր երկրների միջև միատեսակ չէ: Ինչպես նշվեց, հայտնի իրադարձությունների արդյունքում առավել ինտենսիվ են եղել Ադրբեջանի և Հայաստանի միջև միգրացիոն փոխանակությունները: Ընդ որում, եթե Հայաստանից ադրբեջանցիների արտահոսքն ընթանում էր առանց բռնությունների, նրանց հնարավորություն տրվեց փոխանակել բնակարանները, տանել ունեցվածքը, ավելին՝ Ադետի գոտուց մեկնողներին հատկացվել է 70 մլն ռուբլու փոխհատուցում, ապա Ադրբեջանից հայերի արտահոսքն ընթացավ բռնություններով, սպանություններով, թալանով, մարդիկ չկարողացան իրենց հետ բերել ունեցվածքը, բնակարանի փոխանակություններ կատարել (Բաքվի, Սումգայիթի և այլ իրադարձությունները ասվածի ապացույցն են): Ադրբեջանից մազապուրծ եղած փախստականների այն հատվածը, որը տեղավորվեց Ադետի գոտում, երկրաշարժի հետևանքով ենթարկվեց հերթական փորձություններին և ստիպված էր կրկին դառնալ միգրանտ՝ մեկնելով հիմնականում ՌԴ, եվրոպական երկրներ և ԱՄՆ:

Միջպետական միգրացիոն կապերի ակտիվությամբ առանձնանում է նաև ՌԴ-ն: Այդ կապերն առավել ակտիվ են հատկապես Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերի և ՌԴ Կենտրոնական շրջանի միջև:

Միգրացիոն կապերի ակտիվությամբ աչքի է ընկնում նաև Ուկրաինան, սակայն այն զգալիորեն զիջում է ՌԴ-ին: Ուկրաինայի հետ միգրացիոն կապերի որոշ ակտիվություն նկատվել է երկրաշարժից անմիջապես հետո: Շիրակի մարզի քաղաքները և հատկապես Գյումրին ունեցել են զարգացած թեթև արդյունաբերություն, որտեղ ներգրավված են եղել հիմնականում կանայք, ինչպես նաև՝ նախկին ԽՍՀՄ հանրապետություններից այստեղ աշխատելու եկածները, որոնց զգալի մասը դարձել էր Հայաստանի մշտական բնակիչ, ընտանիք էր կազմել: Երկրաշարժից անմիջապես հետո Ուկրաինայի քաղաքներից ստացվեցին վերջիններիս թեթև արդյունաբերական ձեռնարկություններում ներգրավելու, բնակա-

րանով և գույքով ապահովելու առաջարկություններ, որից հետո շատ ընտանիքներ մեկնեցին: Նման հոսք նկատվեց հիմնականում դեպի Խերսոն և Նիկոլա:

Քննարկվող ժամանակաշրջանում միգրացիոն կապերի ակտիվությամբ առանձնանում է նաև Վրաստանը, սակայն վերջինիս հետ միգրացիան բնորոշվում է Հայաստան եկողների գերակշռությամբ: Տարածաշրջանում առկա քաղաքական լարվածությունը խթան հանդիսացավ մեծ թվով վրաստանաբնակ հայերի ներհոսքի, որոնց որոշ մասը, հատկապես Ջավախքից, տեղավորվեց Ամասիայի տարածաշրջանում՝ Արփի լճի ավազանի նախկին ադրբեջանաբնակ գյուղերում:

Նույնն է պատկերը նաև Ուզբեկստանի և Թուրքմենստանի դեպքում, այն տարբերությամբ, որ միգրացիայի ակտիվությամբ վերջիններս զգալիորեն զիջում են Վրաստանին: Փաստորեն, միգրացիայի ակտիվությունը կախված է տարբեր գործոններից: Մի կողմից յուրաքանչյուր բացասական գործոն (տվյալ դեպքում՝ երկրաշարժը) նպաստում է ազգային փոքրամասնությունների՝ Հայաստանից հեռանալուն (հիմնականում ազգային պետական կազմավորումներ), փոխելով միջպետական միգրացիոն ուղղությունները, մեկ այլ դեպքում՝ քաղաքական ցնցումները հայերին հարկադրում են վերադառնալ: Բացի այդ, նույն երկրաշարժը դարձել է նաև հայերի զանգվածային միգրացիոն տեղաշարժերի պատճառ:

1992-1994թթ. Շիրակի մարզի բնակչության միգրացիայի ծավալը կազմել է 15541 մարդ: Միգրացիայի բացարձակ ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այն ակտիվության տեսանկյունից զգալիորեն զիջում է նախորդ փուլին, քանի որ միայն 1989թ. մարզի բնակչության միգրացիայի ծավալը գերազանցել է քննարկվող երեք տարիների ծավալի հանրագումարը: Միգրացիայի ծավալը նվազել է եկողների թվաքանակի նվազման հետևանքով: Մարզի քաղաքներ եկողների թիվը զիջել է գյուղեր եկողներին, հիմնականում այն պատճառով, որ քաղաքներում ձևավորված իրավիճակը սահմանափակել էր վերջիններիս միգրանտ ընդունելու հնարավորությունները:

Քննարկվող ժամանակահատվածում զգալիորեն նվազել է նաև գյուղեր եկողների հոսքը: Շիրակի մարզի դատարկված գյուղական բնակավայրեր գալիս էին հիմնականում Ադրբեջանից, Ջավախքից, իսկ 1992-1994թթ. դրանց հոսքը զգալիորեն նվազել էր:

Շիրակի մարզի բնակչության միգրացիոն ակտիվության առանձնահատկությունները պայմանավորված են առաջին հերթին տեղային գործոններով: Սակայն, նկատի ունենանք, որ վերջիններիս հետ փոխկապակցված են ընդհանուր հանրապետական գործոնները: Շիրակի մարզի և հանրապետության բնակչության միգրացիան պայմանավորող գործոնները պատճառահետևանքային կապի մեջ են: Այսպես, մարզի քաղաքներից մեկնողները գերազանցում են եկողներին, որը պայմանավորված էր վերականգնողական աշխատանքների ծավալների նվազմամբ, առանձին դեպքերում՝ նաև դադարեցմամբ, ինչն իր հերթին հանրապետության սոցիալ-տնտեսական ճգնաժամի արդյունք էր: Այսինքն, հանրապետության իրավիճակն ավելի է խորացնում մարզի ճգնաժամը: Այս ամենի արդյունքում մարզից դիտվող արտահոսքն իր հերթին դառնում է տնտեսական ճգնաժամի խորացման պատճառ, քանի որ հանրապետությունը կորցնում է որակյալ աշխատուժ, զրկվելով նաև տարածքը վերականգնելու և աշխատուժը տեղում պահելու հնարավորությունից:

1992-1994թթ. արտաքին միգրացիան Հայաստանի համար ունեցել է բացասական արդյունք: Քանի որ նախկին ԽՍՀՄ սահմաններից դուրս այն հաշվառվում է մեկ տողով, ըստ երկրների միգրացիայի արդյունքը մեկնաբանել հնարավոր չէ: Կարելի է միայն նշել, որ վերջինիս հանրագումարային մեծության հիման վրա արված հաշվարկների արդյունքը բացասական է: Ինչ վերաբերում է նախկին ԽՍՀՄ հանրապետություններին, ապա վերջիններիս պարագայում ևս միգրացիայի արդյունքը բացասական է, բացառությամբ Ադրբեջանի, Վրաստանի, Ուզբեկստանի, Ղրղզստանի և Տաջիկստանի: Բնակչության միգրացիոն փոխանակությունների բացասական արդյունքն առավել մեծ է ՌԴ-ի պարագայում, ինչը պայմանավորված է նաև ՌԴ-ում հարմարվելու, աշխատանք գտնելու ավելի մեծ հնարավորություններով: Հարկ է նշել, որ

քննարկվող ժամանակահատվածում բնակչության միգրացիոն փոխանակություններն այլ ազգությունների ներկայացուցիչների միջև ունեցել են բացասական արդյունք, ինչը հերթական անգամ փաստում է այն, որ միջպետական միգրացիոն ուղղությունները կրել են որոշակի փոփոխություններ: Եթե մինչև ԽՍՀՄ փլուզումը արդյունաբերության զարգացման բարձր տեմպերն ապահովում էին այլազգիների ներհոսքը Հայաստան, ապա ԽՍՀՄ փլուզումից հետո միգրացիոն ուղղությունները փոխվեցին հիմնականում ՀՀ-ից դեպի դուրս: Բնակչության միգրացիոն առավել մեծ ակտիվություն դիտվել է աշխատունակ հասակի միգրանտների մոտ, ընդ որում՝ տղամարդիկ գերազանցել են կանանց, սակայն այս ընթացքում նկատվում է կանանց տեսակարար կշռի աստիճանական աճ: Այս դիտարկումը թույլ է տալիս ենթադրել, որ աստիճանաբար ձևավորվող միգրացիոն գործընթացների հիմքում սկսում է ուրվագծվել անվերադարձ միգրացիայի ևս մի ակիք, երբ այլ երկրներում հաստատված տղամարդկանց հետևում են նաև կանայք, այսինքն, ընտանիքն ամբողջությամբ հաստատվում է այլ երկրում: Միտումը շարունակվում է նաև հետագա տարիներին: Բացի դրանից, աշխատունակ կնոջ մեկնումը պատճառ է ևս մեկ կարևոր իրողության՝ գնալով նվազում է ծնելիության մակարդակը:

1995-2002թթ. Շիրակի մարզի բնակչության միգրացիայի ծավալը կազմել է 20696 մարդ: Միգրացիոն փոխանակությունների արդյունքը մարզում շարունակում է մնալ բացասական: Միգրացիոն սալդոյի բացասական մեծությունը բարձր է հատկապես քաղաքներում:

1995-2002թթ. Հայաստանի և այլ երկրների մեջև միջպետական միգրացիան ՀՀ համար ունեցել է բացասական արդյունք: Միգրացիոն կապերն ընդգրկել են ինչպես ԱՊՀ բոլոր երկրները, այնպես էլ այլ պետություններ: Փոխանակությունները տարբեր երկրների հետ ունեցել են տարբեր արդյունք: ՌԴ-ի, Ուկրաինայի, Բելառուսի, Ուզբեկստանի, Ղազախստանի, Լիտվայի, Մոլդովայի դեպքում դրանք Հայաստանի համար ունեցել են բացասական արդյունք, ընդ որում մեծ է ՌԴ-ի պարագայում արձանագրված ցուցանիշը, որն առավել բարձր է եղել 2000, 2001թթ.: Միգրացիոն փո-

խանակությունները Վրաստանի, Թուրքմենստանի, Էստոնիայի, Տաջիկստանի, Լատվիայի, Ղրղզստանի հետ Հայաստանի համար դրական են: Միգրացիոն փոխանակությունների արդյունքը բացասական է «այլ երկրների» և «առանց նշելու շրջանը, երկիրը» տողերում հաշվառված միգրանտների և ՀՀ-ի միջև, ընդ որում 2000թ.-ից միգրացիայի հաշվառման գրանցամատյաններում «այլ երկրների» տողը առավել մանրամասն է ներկայացված, որտեղից երևում է, որ այլ երկրների և ՀՀ միջև գոյություն ունեցող միգրացիոն փոխանակությունների բացասական արդյունքի ձևավորմանը առավել շատ նպաստել է ԱՄՆ-ի և ՀՀ միջև գոյություն ունեցող միգրացիոն փոխանակությունը: Հայաստանի ազգային փոքրամասնություններից միգրացիոն ակտիվություն նկատվել է ռուսների, ուկրաինացիների, եզդիների և հույների մոտ: Եթե քաղաքներում միգրացիոն ակտիվության տեսանկյունից առանձնացել են ռուսները, ապա գյուղերում՝ եզդիները: Միգրացիոն ակտիվության տեսանկյունից առանձնացել են աշխատունակ միգրանտները:

Հարցման արդյունքներով պարզվել է, որ Շիրակի մարզում արտաքին միգրացիայի մեջ ընդգրկվածների 94%-ը գտնվում է ՌԴ-ում, 3%-ը՝ ԱՊՀ մյուս երկրներում և 3 %-ը՝ այլ երկրներում:

Բնակչության միգրացիոն գործընթացների զարգացման ընդհանուր միտումները

Ինչպես նշվեց, միգրացիոն ակտիվության տեսանկյունից քննարկվող ժամանակահատվածում առանձնանում է երեք փուլ՝ 1988-1991թթ., 1992-1994թթ. և 1995-2002թթ.: Սակայն, եթե դեռևս 1988-1991թթ. միգրացիայի ծավալի ձևավորման մեջ եկողների տեսակարար կշիռը կազմում էր 43%, ապա 1992-1994թթ. այն կազմել է 36%, իսկ 1995-2002թթ.՝ 34%:

Փաստորեն, միգրացիայի ծավալի նվազմանը զուգընթաց, բացառությամբ առանձին տարիների, նվազել է նաև եկողների տեսակարար կշիռը, ինչը պայմանավորված է վերականգնողական աշխատանքների տեմպերի թուլացմամբ, ինչպես նաև այստեղ սոցիալ-տնտեսական ճգնաժամի առավել սուր դրսևորումներով: Բնական է, որ այս իրավիճակում բնակչության մի մասը հեռանում

էր Շիրակի մարզից: Աղյուսակ 10-ում ներկայացվում է միգրանտների բացակայության տևողությունը:

Աղյուսակ 10	
Տարբերակ	%
3 տարուց ավելի	46,8
1-ից 3 տարի	19,0
3-ից 6 ամիս	12,1
6 ամսից 1 տարի	11,7
մինչև 3 ամիս	10,4
Ընդամենը	100

Աղյուսակից երևում է, որ միգրանտների շուրջ կեսը բացակայում է 3 տարուց ավելի, այսինքն, մարզում ստեղծված իրավիճակը հանգեցրել է արտագաղթի և արտագնացության տևականությունը:

Բնակչության միգրացիայի հարաբերական ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վերջիններս ունեն որոշակի առանձնահատկություններ (տես՝ Հավելված, գծապատկեր 2)⁵⁴: Մարզի բնակչության միգրացիայի լարվածության ցուցանիշն բարձր է եղել 1989թ., քանի որ բնակչության բնական աճը 1989թ. եղել է շատ ցածր: Այնուհետև, բնակչության միգրացիայի լարվածությունը թուլացել է՝ նվազագույնին հասնելով 1992թ., որից հետո կայունացում է նկատվել: 1999թ.-ից սկսած աճելով, 2002թ.-ին հասնում է առավելագույնի: 1988-1990թթ. բնակչության միգրացիայի լարվածության արդյունքում մարզի մի քանի գյուղեր դատարկվեցին: Դրանցից են Ամասիայի տարածաշրջանի Արավետ, Դարիկ, Երիզակ և այլ գյուղերը:

Մարզի բնակչության միգրացիայի արդյունավետությունը քննարկվող ժամանակահատվածում՝ կապված բնակչության միգ-

⁵⁴ Հարաբերական ցուցանիշների հաշվառման հիմքում ընկած են աշխարհագրական գիտություն մեջ ընդունված բանաձևերը-տես՝ Ա. Օիժա, Ա. Քաի ձե, Ի ժի ձեձի ու էջո-ձի էյ ի էձձօձե ի ձձեձի էյ, Լ ., 1978; Ա. Բաձեւոձե, Աձի ձձօ-Օէյ ի ձձեձի էյ, Լ ., 1980; Ա. Ի ձձաձաձի Օձձ, Լ ձձի ձձ էջո-ձի էյ ի էձձօձե ի ձձեձի էյ, Լ ., 1975; Մ. Մանասյան, Տնտեսաաշխարհագրական դաշտային հետազոտությունների մեթոդիկա, Եր., 1991; Մ. Մանասյան, Ռ. Մարգարյան, Աշխարհի բնակչությունը (հիմնախնդիրներ, հիմնադրույթներ և կանխատեսումներ), Եր., 2003:

րացիոն սալդոյի և եկողների թվաքանակի փոփոխության հետ, ձեռք է բերել որոշակի առանձնահատկություններ: Այսպես՝ 1988թ. լինելով ցածր, այն այնուհետև սկսում է աստիճանաբար աճել: 1991թ. նկատվել է ամենաբարձր ցուցանիշը, քանի որ այդ տարի մարզ են եկել մեծ թվով միգրանտներ: 1992թ. միգրացիայի արդյունավետությունը դարձյալ նվազում է, շարունակվելով մինչև 1995թ.: Քննարկվող ժամանակահատվածի վերջում, փաստորեն, մարզի բնակչության միգրացիայի արդյունավետության բարելավում չի նկատվում: 2002թ. նշված ցուցանիշը գրեթե հավասարվում է 1988թ. համապատասխան ցուցանիշին: Նշենք նաև, որ սկսած 1992թ.-ից, քաղաքային բնակավայրերի միգրացիայի արդյունավետության ցուցանիշը զգալիորեն զիջում է գյուղական բնակավայրերի բնակչության միգրացիայի արդյունավետությանը, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ քաղաքները քննարկվող ժամանակահատվածում միգրանտներ ընդունելու տեսանկյունից կորցրել են իրենց երբեմնի գրավչությունը:

Ինչ վերաբերում է Շիրակի մարզի բնակչության ներհոսքի և արտահոսքի ինտենսիվությանը (տես՝ Հավելված, գծապատկեր 3), նշենք, որ արտահոսքի ինտենսիվությունը քննարկվող ժամանակահատվածում, բացառությամբ 1991թ., գերազանցել է ներհոսքի ինտենսիվությանը: Ընդհանուր առմամբ, 1988-2002թթ. բնակչության մեխանիկական աճ չի դիտվել:

Միգրացիայի ինտենսիվությունը քննարկվող ժամանակաշրջանում ունեցել է ու փոփոխությունների շարժընթացի հետևյալ պատկերը. 1988-1991թթ. այն եղել է բարձր, առավելագույնին հասնելով 1989թ. (քանի որ հենց այս տարի է դիտվել միգրացիայի ամենամեծ ծավալը), 1992-1994թթ. նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ նվազել է ու կայունացել, իսկ 1995-1998թթ. դիտվել է նվազման միտում: 1999թ. սկսած միգրացիայի ինտենսիվությունն սկսել է աճել, քանի որ բնակչության միգրացիայի ծավալի աճին զուգընթաց, սկսել է աստիճանաբար նվազել բնակչության տարեկան միջին թվաքանակը:

Եվս մեկ անգամ նշենք, որ բերված թվային տվյալները վերաբերում են գերազանցապես օրինական ճանապարհով գրան-

ցունից դուրս եկած և գրանցված բնակչությանը: Սակայն, ինչպես ցույց են տալիս վերջին տարիների ուսումնասիրությունները⁵⁵ և հարցման արդյունքները, առկա է նաև հանրապետությունից բացակայող և գրանցումից դուրս չեկած բնակչության մի ստվար զանգված, այսպես կոչված «ստվերային միգրացիա», որի վերաբերյալ հավաստի ու ամբողջական հաշվառում չի իրականացվում (դա լավագույնս ապացուցեց նաև 2001թ. մարդահամարը): Նույնիսկ ըստ բնակավայրերի մշտական և առկա բնակչության հաշվառումները, հնարավորություն չեն տալիս պատկերացում կազմել բնակչության արտահոսքի ամբողջական թվային տվյալների մասին, քանի որ հնարավոր չէ որոշել, թե մշտական և առկա բնակչության տարբերության արդյունքում ստացված թվից բնակչության որ մասն է գտնվում հանրապետության ներսում, իսկ որ մասը՝ հանրապետությունից դուրս⁵⁶:

Այժմ անդրադառնանք հարցումների որոշ արդյունքների քննարկմանը, որոնք վերաբերում են միգրանտների դրսում մնալու տևականությունը և հայրենիք վերադառնալու համար անհրաժեշտ նախադրյալներին:

Վերադառնալու մտադրություն ունեցողների մեջ, ինչպես ցույց են տալիս աղյուսակ 11-ի տվյալները շուրջ 30%-ը մտադիր է վերադառնալ 3-6 ամսվա, 47.4 %-ը՝ մինչև 1 տարվա ընթացքում իսկ 13.3 %-ը՝ 3 տարուց հետո միայն: Թերևս ցանկությունները հուսադրող են

⁵⁵ Հայաստան, Մարդկային զարգացման զեկույց, 1996; Ռ. Եգանյան, Կ.Կուլումջյան, Ետխորհրդային Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական մարտահրավերները, Եր., 2004:

⁵⁶ 2000թ.-ից սկսած ՀՀ Կառավարությանն առընթեր Միգրացիայի և փախստականների վարչությունը ՀՀ ԱՎԾ հետ, համագործակցելով տրանսպորտային ձեռնարկությունների և ՀՀ պետական սահմանի անցման կետերում գործող ծառայությունների հետ, կազմակերպում է եկողների և մեկնողների վերաբերյալ քանակական տվյալների ստացման գործընթացը: Սակայն պետք է նշել, որ հրապարակի վրա եղած տվյալները հնարավորություն չեն ընձեռում դիտարկել դրանց տարածքային առանձնահատկությունները, ինչպես նաև պատկերացում կազմել միգրացիոն գործընթացների բնույթի, տևականության և այլնի վերաբերյալ:

Աղյուսակ 11

Երբ է մտադիր վերադառնալ	%
Մինչև 3 ամսից	10,1
3-ից 6 ամսից	29,7
6 ամսից 1 տարուց	7,6
1-ից 3 տարուց	10,2
3 տարուց հետո	13,3
Ձմռանը գալիս են, ամռանը գնում	9,5
Դժվարանում են պատասխանել	19,6
Ընդամենը	100

Վերադառնալու պատճառների մասին է ներկայացվող աղյուսակ 12-ը:

Աղյուսակ 12

.Ո՞ր դեպքում/ ինչու՞ է վերադառնում	%
Այցելություն ընտանիքին/վերամիավորում	48,3
Հայրենի բնակավայրում բնակվելու ցանկություն	27,3
Աշխատանքային սեզոնի, աշխատանքների ավարտ	4,9
Դրսում հարմարվելու դժվարություններ	4,2
Բնակարանային հիմնախնդրի լուծում	4,2
Ամուսնություն	3,5
Աշխատանքը ցածր է վարձատրվում	2,8
Աշխատանքին չեն հարմարվել	2,1
Հիվանդություն, առողջական խնդիրներ	1,3
.Ուսման ավարտ	0,7
Ընտանիքը տեղափոխելու նպատակով	0,7
Ընդամենը	100

Վերադառնում են հիմնականում ընտանիքին այցելելու նպատակով՝ 48.3%: Միգրանտների 27.3%-ը ցանկանում է բնակվել հայրենի բնակավայրում: Մյուս պատասխանների համեմատ բարձր ցուցանիշ ունի նաև «աշխատանքային սեզոնի, աշխատանքների ավարտ» տարբերակը՝ 4.9%: Ուշագրավ է նաև, որ վերադառնալու մտադրություն ունեցողների 4.2%-ի նպատակը բնա-

կարանային հիմնախնդրի լուծումն է, ինչը պատրաստվում են իրականացնել դրսում վաստակած գումարների միջոցով:

Աղյուսակի տվյալները վկայում են այն մասին, որ վերադարձողների մեջ առկա են պոտենցիալ միգրանտներ (0.7%), որոնք գալիս են ընտանիքի մյուս անդամներին տեղափոխելու նպատակով, և հնարավոր միգրանտներ, որոնք վերադառնում են ընտանիքին այցելելու, այսինքն նրանց մեկնումը ևս չի բացառվում:

Վերը նշվածը հնարավորություն է տալիս ենթադրել, որ աշխատատեղերի ստեղծման դանդաղ տեմպերը Շիրակի մարզում առաջիկայում կշարունակեն նպաստել վերադառնալու մտադրություն ունեցող միգրանտների, ինչպես նաև տեղի բնակչության մի մասի արտահոսքին:

Ստորև ներկայացված աղյուսակ 13-ը տալիս է «ինչու մտադրություն չունեն վերադառնալու» հարցի պատասխանները:

Աղյուսակ 13

Տարբերակ	%
Այստեղ աշխատանք չկա	28,1
Դրսում արդեն հարմարվել և հիմնավորվել են	21,9
Այստեղ հեռանկար չի տեսնում	15,6
Այստեղ բնակարան չունի	12,5
Դժվարանում են պատասխանել	9,4
Պարզապես ցանկություն չունի	6,3
Այստեղի պայմանները իրեն չեն բավարարում	3,1
Ամուսնացել է այլ ազգության ներկայացուցչի հետ	3,1
Ընդամենը	100

Ինչպես երևում է աղյուսակ 13-ից, անվերադարձ միգրացիայի գլխավոր պատճառ է հանդիսացել ինչպես աշխատատեղի բացակայությունը՝ (պատասխանների 28.1%-ը), այնպես էլ դրսում հարմարվելու և հիմնավորվելու հնարավորությունը (21.9%):

Փաստորեն, քննարկվող ժամանակահատվածում, բացի ծավալային տեսանկյունից, փոփոխությունների է ենթարկվել նաև մարզի բնակչության սեզոնային միգրացիան՝ ըստ ուղղություն-

ների և դրդապատճառների, ինչպես նաև դրսում զբաղվածության ընդհանուր պատկերի:

Առավել ընդհանրացված դիտարկման ու խորհրդային շրջանի հետ համեմատության դեպքում կարող ենք արձանագրել, որ որոշ տարածաշրջաններ նախկինում ևս աչքի են ընկել սեզոնային միգրացիայի ձևավորված «ավանդական» ուղղություններով: Առանձին դեպքերում նույնիսկ որոշ բնակավայրեր ունեցել են սեզոնային զբաղվածությունն ապահովող հիմնական կենտրոններ: Սեզոնային միգրացիայի մեջ նախկինում ավելի շատ ընդգրկված է եղել գյուղական բնակչությունը, որը հիմնականում ամռան, ինչպես նաև գարնան ու աշնան որոշ ամիսների մեկնել է արտագնա շինարարական աշխատանքների, ի տարբերություն քաղաքաբնակների, որոնց համար արդյունաբերության զարգացման բարձր տեմպերն ապահովել են անհրաժեշտ զբաղվածություն:

«Սպիտակի» երկրաշարժը, բնականաբար, ազդեց նաև սեզոնային միգրացիայում ընդգրկվածների թվի, միգրացիայի բնույթի և տարածական ընդգրկման վրա: Մինչև 1991թ. հանրապետությունից դուրս մեկնող սեզոնային միգրանտների զգալի մասը մնաց Հայաստանում և մասնակցեց Աղետի գոտու վերականգնման աշխատանքներին: Սակայն, 1991թ.-ից արդեն շինարարական աշխատանքների ծավալների կտրուկ անկման հետևանքով վերջիններս կրկին կանգնեցին զբաղվածություն ապահովելու հիմնախնդրի առաջ՝ աստիճանաբար վերականգնելով ավանդաբար ձևավորված կապերը: Այս ուղղությամբ, այսինքն, «ավանդական» կապերի վերականգնմանը զուգահեռ, նշված տարիներից սկսեց փոխվել սեզոնային միգրացիայի աշխարհագրությունը: Պատճառները մի քանիսն էին. ԽՍՀՄ-ը փլուզվել էր, միջպետական տնտեսական կապերը՝ թուլացել, նորանկախ պետությունները գտնվում էին տնտեսական ակտիվ վերափոխումների փուլում, տեղի էր ունենում մասնավոր սեկտորի արագ ձևավորում, ինչը նույնպես նպաստեց սեզոնային միգրանտների զբաղվածության ոլորտների էական փոփոխություններին:

Միաժամանակ, սեզոնային միգրացիայում ընդգրկվում են բնակչության սոցիալ-մասնագիտական, ունեցվածքային, տարի-

քային տարբեր խմբեր: Խորհրդային շրջանում կային սեզոնային շինարարական աշխատանքների մեկնողների կայուն խմբեր, որոնց տեղաշարժերի ուղղությունները վերահսկելը ընդհանուր պետությունում՝ ԽՍՀՄ-ում, դժվարություն չէր ներկայացնում: Սակայն անկախության տարիներին բավականին բարդ է սեզոնային միգրանտների քանակական տվյալները հավաքագրելը: Նախ, ի տարբերություն նախորդ տարիների, այժմ սեզոնային արտագնա աշխատանքների մեկնողների մի մասը նախընտրում է ավելի բարձր ու արագ եկամուտներ ապահովող ճյուղերը: Որոշ մասի համար դա հիմնականում մանրածախ կամ մեծածախ առևտուրն է: Բնական է, որ սեզոնային միգրանտների այս խումբը ձգտում է տեղավորվել խոշոր քաղաքներում՝ Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ, Սամարա, Կրասնոյարսկ, Նովոսիբիրսկ և Յեռավոր Արևելքի որոշ քաղաքներ: Այս խմբի տեղափոխությունների աշխարհագրությունը շատ դեպքերում դուրս է գալիս ՌԴ սահմաններից՝ Կիև, Մինսկ, Եվրոպական մի քանի խոշոր քաղաքներ, մասնավորապես՝ Վարշավա, Լոձ, Վրոցլավ և այլք: Շինարարությամբ զբաղվողների խումբը ևս փոխել է աշխարհագրությունը. ավանդական համարվող Յակուտիային կամ Սիբիրի ու Յեռավոր Արևելքի որոշ այլ տարածաշրջաններին ավելացել են նույն Մոսկվան՝ շինարարական աշխատանքների իր հսկայական ծավալներով, Մոսկվայի մարզի ու ՌԴ Եվրոպական մասի բազմաթիվ քաղաքներ: Սեզոնային արտագնա աշխատանքով զբաղվող անձանց հետ մեր հանդիպումները Շիրակի մարզում և անցկացված հարցումը թույլ են տալիս արձանագրել ևս մեկ ուշագրավ իրողություն՝ կապված դրսում վերջիններիս շարժունության աճի հետ: Սեզոնային միգրանտների բազմաթիվ խմբեր բավականին արագ են փոխում ժամանակավոր բնակության վայրերը՝ հաստատվելով տարբեր քաղաքներում: Նման ակտիվությունն ու շարժունությունը, բնականաբար, էլ ավելի են ընդարձակում սեզոնային միգրանտների տեղափոխությունների «աշխարհագրությունը»: Կարևոր իրողություն պետք է համարել նաև սեզոնային միգրանտների խմբի սոցիալ-մասնագիտական ու կրթական կառուցվածքում կատարված փոփոխությունները:

Չնայած վիճակագրական տվյալների հետ կապված բարդություններին, պետք է արձանագրել, որ սեզոնային միգրացիան, իր տարբեր դրսևորումներով, նրանում ընդգրկվածների սոցիալական ու մասնագիտական կազմով, վերջին տարիներին բավականին լուրջ ազդեցություն է թողնում ինչպես հանրապետությունում, այնպես էլ, հատկապես մարզում ընթացող տարբեր գործընթացների վրա: Վտանգավոր է հատկապես այն, որ սեզոնային միգրացիան դրսևորում է մշտականի վերածվելու միտում, ինչն իր հերթին դարձյալ կարող է ազդել ժողովրդագրական գործընթացների վրա:

Լուրջ հիմնախնդիրներ կան նաև միգրանտների իրավական պաշտպանվածության ոլորտում: ԱՊՀ և եվրոպական երկրներում գտնվող միգրանտների համար առաջնային են իրավական պաշտպանվածության, կարգավիճակի հստակեցման հարցերը: Այս ոլորտում արդեն կարևոր նշանակություն է ձեռք բերում պետական համակարգված քաղաքականությունը, միջպետական պայմանագրերով ու համաձայնագրերով միգրանտների իրավական կարգավիճակի հստակեցումն ու պաշտպանվածության մեխանիզմների մշակումը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ աշխատուժի կազմակերպված ու պետականորեն պաշտպանվող «արտահանումը» ձեռնտու է ոչ միայն միգրանտներին, այլ նաև պետություններին: Ուստի, կարծում ենք, որ առաջիկայում ՀՀ համար ևս միգրացիայի կարգավորման ռազմավարությունն ու հայեցակարգերը պետք է համարվեն առաջնային, մանավանդ որ դրսից ուղարկվող օգնությունները բազմաթիվ ընտանիքների գոյության կարևորագույն աղբյուր են հանդիսանում, այդ են վկայում նաև հարցման արդյունքները: Այսպես. այն հարցին թե, «տնային տնտեսության եկամտի որ մասն է կազմում բացակայող անդամի ուղարկած գումարը»՝ հարցվողների 44%-ը պատասխանել է 75-100%-ը, 28%-ը՝ 50-75%, 15%-ը՝ 25-50 % և 13 %-ը՝ մինչև 25%:

Եզրակացություններ

Հանրագումարի բերելով անցկացված հետազոտության, ինչպես նաև այլ ուսումնասիրությունների արդյունքները, կարելի է ներկայացնել հետևյալ հիմնական եզրահանգումները.

1. 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը, բացի մեծ թվով մարդկային զոհեր պատճառելուց, էական ազդեցություն ունեցավ նաև Շիրակի մարզի տնտեսության տարբեր ճյուղերի վրա:

Չնայած կատարված աշխատանքներին, այնուամենայնիվ, երկրաշարժի հետևանքները դեռևս վերջնականապես վերացված չեն: Անբավարար են հատկապես արտադրական հզորությունների վերագործարկման գործընթացները: Ուստի, առաջիկա տարիներին ևս երկրաշարժի հետևանքների հաղթահարումը շարունակելու է մնալ ինչպես հանրապետության, այնպես էլ մարզի ղեկավարության ու տեղական ինքնակառավարման մարմինների առջև ծառայած կարևորագույն հիմնախնդիրներից մեկը: Բնակարանային խնդրի թեկուզև ամբողջական լուծումը, ինչպես ցույց է տրված աշխատանքում, դեռևս բավարար չէ սոցիալ-տնտեսական ճգնաժամի հաղթահարման ու զարգացման կայուն նախադրյալների ապահովման տեսանկյունից:

2. Շիրակի մարզում ձևավորված իրավիճակի վրա ազդում են նաև 1990-ական թթ. ՀՀ-ում իրագործված վերափոխումները: Մասնավորապես, մարզում ներդրումների անբավարար ծավալները կապված են ներդրումային գրավչության հետ: Պատահական չէ, որ վերջին մեկուկես տասնամյակում նախկինում կարևոր արդյունաբերական կենտրոններ համարվող Գյումրին ու Արթիկը այդպես էլ չեն կարողանում վերականգնել իրենց դերն ու նշանակությունը հանրապետության տնտեսական համալիրում:

3. Լուրջ հիմնախնդիրներ կան նաև մարզի այլ բնակավայրերում: Նրանցում ևս առկա են ենթակառուցվածքների վերականգնման, արդի շուկայական տնտեսության պահանջներին ու սկզբունքներին համապատասխանող համակարգերի ձևավորման հետ կապված խնդիրներ: Այլ կերպ, այս ոլորտում առաջիկայում լուրջ տեղաշարժեր կարելի է ակնկալել միայն մարզի բնակավայրերի զարգացման համալիր ծրագրի մշակման և իրագործման

դեպքում: Այդ ծրագրերը կազմելուն անպայման պետք է նախորդի շրջանային հատակագծման աշխատանքների իրականացումը, որի հիման վրա կորոշվեն մի շարք կարևոր քաղաքաշինական և սոցիալ-տնտեսական գործնական խնդիրներ:

Ինչ վերաբերում է Գյումրիի շրջանաստեղծ դերի վերականգնմանը, ապա պետք է նշել, որ այն հանդիսանում է հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման վրա ազդող էական գործոն: Գյումրին խորհրդային տարիներին դարձել էր խոշոր արդյունաբերական հանգույց Շիրակի սոցիալ-տնտեսական շրջանի համար, կատարելով նաև բնակչության տեղաշարժերն ու այլ գործընթացները «հավասարակշռողի», կարգավորողի դեր: Երկրաշարժից հետո Գյումրին կորցրել է իր նախկին գործառույթների մի մասը, ինչն ուղղակիորեն ազդում է բնակչության միգրացիաների վրա, միգրացիոն ակտիվությունն ուղղորդելով մի դեպքում մայրաքաղաք Երևան՝ հաշվի առնելով վերջինիս անհամեմատ ավելի մեծ հնարավորությունները, մեկ այլ դեպքում՝ հանրապետությունից դուրս, բազմաթիվ դեպքերում ձևավորելով արդեն անվերադարձ միգրացիա:

4. Նշվեց, որ սոցիալ-տնտեսական ծանր կացությունը միայն երկրաշարժով չէ, որ պայմանավորված է: Շիրակի մարզի առանձնահատկությունը հենց նրանում է, որ երկրաշարժի հետևանքները, զուգակցվելով ողջ հանրապետությունում ստեղծված անբարենպաստ գործոնների հետ, էլ ավելի են խորացնում ճգնաժամն ու բարդացնում վերջինիս հաղթահարման ուղղությամբ ձեռնարկվող և իրականացվող միջոցառումները:

Երկրաշարժն ազդել է ոչ միայն տնտեսության վրա: Ազդեցությունն ուղղակի է նաև բնակչության տեղաբաշխման, տարաբնակեցման համակարգի վրա: Էական փոփոխություններ են կրել ոչ միայն քաղաքները, այլև բազմաթիվ գյուղական բնակավայրեր:

5. Շիրակի մարզի բնակչության տեղաշարժերը քննարկելիս պարզ է դառնում, որ երկրաշարժին հաջորդած առաջին տարիներին դրանց մեծ մասը, ինչպես ներհանրապետական, այնպես էլ միջպետական, ուղղակիորեն պայմանավորված էր երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքների տեմպերով ու ծավալ-

ներով: Այն ավելի հիմնավոր ու համոզիչ է դառնում բնակչության տեղաշարժերի տարբեր ուղղությունները՝ գյուղից-գյուղ, գյուղից-քաղաք, քաղաքից-գյուղ և քաղաքից-քաղաք հանգամանորեն քննարկելիս:

Միաժամանակ, բնորոշ է սոցիալ-տնտեսական ճգնաժամի, գործազրկության, աշխատատեղերի բացակայության, տնակային ծանր պայմանների, բարոյահոգեբանական մթնոլորտի ազդեցությունը: Այս իրավիճակի խորացմանը նպաստեց հատկապես Ադետի գոտու շինարարական-վերականգնողական աշխատանքների տեմպերի և ծավալների կտրուկ նվազումը 1990-ականների առաջին տարիներին: Երկրաշարժից անմիջապես հետո բազմաթիվ ընտանիքներ ու անհատներ չէին հեռանում՝ հայրենի օջախների վերականգնմանը և կառուցմանը մասնակից դառնալու նպատակով: Սակայն, վերականգնողական աշխատանքների դանդաղ տեմպերը ակտիվացրին միգրացիոն տրամադրությունները:

6. Անցած մեկուկես տասնամյակում աճել է նաև սեզոնային միգրանտների թիվը և շարժունությունը: Ի տարբերություն խորհրդային շրջանի, երբ վերջիններս կատարում էին հիմնականում շինարարական աշխատանքներ, այսօր բավականին բարձր է մանր ու միջին բիզնեսով և այլ տնտեսական գործունեությամբ զբաղվողների տեսակարար կշիռը:

Էական փոփոխությունների է ենթարկվել սեզոնային միգրանտների սեռատարիքային ու սոցիալ-մասնագիտական կազմը: Ավանդաբար սեզոնային միգրացիայում ընդգրկված խմբերին ավելացել են ոչ միայն շինարարների նոր խմբեր, այլև մտավորականներ, նախկին արդյունաբերական բանվոր-ծառայողներ, գյուղացիության տարբեր շերտերի ներկայացուցիչներ: Այսպիսով, միգրացիոն տարբեր հոսքերում ընդգրկվում են նախկինում նման փորձ չունեցած խմբեր:

Բնակչության աճի վրա ազդող բացասական գործոններից է նաև այն, որ հեռանում են ընտանիքներ, որոնց մեծ մասը հավանաբար անվերադարձ:

7. Փոխվել են նաև միգրացիաների հիմնական ուղղությունները: Բավականին մեծ է եվրոպական տարբեր երկրներ և ԱՄՆ

մեկնողների տեսակարար կշիռը, ինչն ապացուցվեց նաև վերջին տարիների մանրամասն վիճակագրական հաշվառումներով:

8. Առկա են նաև տարածքային առանձնահատկություններ: Քաղաքային բնակչության միգրացիայի դրդապատճառները իրենց մասշտաբներով տարբերվում են գյուղական վայրերում առկա հիմնախնդիրներից: Ուստի քաղաքային բնակավայրերում, այսուհետ էլ պետք է ներդրումները և վերականգնողական աշխատանքներն իրականացնել արագ տեմպերով և անհամեմատ մեծ ծավալներով:

Գյուղական բնակավայրերում միգրացիոն տրամադրությունների վրա ազդեց 1991թ. իրագործված հողի սեփականաշնորհման գործընթացը, որը որոշ չափով սահմանափակեց բնակչության միգրացիոն շարժերը, սակայն հաջորդ տարիներին արդեն դրանք ակտիվացան նաև գյուղական բնակավայրերից:


Այսպիսով, հանրագումարի բերելով հիմնական արդյունքները, մեկ անգամ ևս նշենք, որ 1988թ. դեկտեմբերի 7-ի «Սպիտակի» երկրաշարժը, չնայած վերջին տարիներին դրա հետևանքների վերացման ուղղությամբ իրագործվող մեծ ծավալի աշխատանքներին, ամենայն հավանականությամբ, առաջիկա տարիներին էլ կշարունակի հանդես գալ որպես Շիրակի մարզում, այդ թվում՝ Գյումրի քաղաքում ընթացող գործընթացների և հատկապես միգրացիոն շարժերի հիմքում ընկած էական ու ազդեցիկ գործոն: Բնական է, որ իրականացված միջոցառումները. բնակարանային հիմնախնդրի աստիճանական լուծում, աշխատատեղերի մասնակի ավելացում, որոշ արդյունաբերական ձեռնարկությունների և ենթակառուցվածքների վերականգնում, այլ դրական տեղաշարժեր, աստիճանաբար թուլացնում են երկրաշարժի ազդեցությունը:

Սակայն դրա հետևանքների ամբողջական հաղթահարման համար անհրաժեշտ են համալիր միջոցառումներ, որոնք պետք է նպատակաուղղված լինեն ոչ միայն երկրաշարժի հետևանքների վերացմանը, այլև նպաստեն բազմաբնույթ հիմնախնդիրների լուծման ճանապարհով Աղետի գոտին Ջարգացման գոտի դարձնելուն:


Համալիր միջոցառումների շարքում առաջնային դեր պետք է խաղան շրջանային հատակագծման աշխատանքները, որոնք

զարմանալիորեն անտեսված են իրականացվող միջոցառումներում: Շրջանային հատակագծման աշխատանքները մեծ չափերով կնպաստեն տարածաշրջանի բնական ռեսուրսների նպատակային օգտագործման, արտադրողական ուժերի զարգացման ու ավելի ռացիոնալ տեղաբաշխման, և, որ ամենակարևորն է, տարաբնակեցման խնդիրների հիմնավոր լուծումներ գտնելուն, որոնք վերջին հաշվով նշանակալից դեր կխաղան բնակչության տեղաշարժերի կարգավորման գործընթացներում: Նշենք նաև, որ առաջիկայում մարզի բնակչության միգրացիոն հոսքերի կարգավորման և հատկապես արտագաղթի նվազեցման համար կարևոր դեր կարող են ունենալ հանրապետության տարածքային կառավարման ապակենտրոնացման գործընթացները: Այսօր ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ Երևանը կարծես թե դառնում է քաղաք-պետություն, որը տնօրինում է ոչ միայն հիմնական ֆինանսական միջոցները, այլ նաև կլանում է մտավոր ներուժի հիմնական մասը: Մինչդեռ, հատկապես Գյումրին ոչ միայն ունի բոլոր նախադրյալները գիտակրթական, մշակութային կարևոր կենտրոնի նշանակությունը մեծացնելու, այլ նաև հնարավոր ապակենտրոնացման պայմաններում կառավարչական լրացուցիչ գործառույթներ ստանձնելու առումով:


Հակելված




Գծապատկեր 2. Շիրակի մարզի բնակչության միջազգային լարվածության և արդյունավետության գործակիցների փոփոխությունը 1988-2002 թ.թ.



Գծապատկեր 3. Շիրակի մարզի բնակչության ներհուսքի, արտահուսքի, միգրացիայի ասորոյի և միգրացիայի ծավալի գործակիցների փոփոխությունը 1988-2002թ.թ.



Շիրակի ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԳԱՐԹԸ 1988-2002ԹԹ.



Պ Ա Յ Մ Ա Ն Ա Ն Շ Ա Ն Ն Ե Ր

- ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԳԱՐԹԸ ՄԱՐԶԻՑ (մարդ)
 - 50000-60000
- ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԳԱՐԹԸ (մարդ)
 - մինչև 3000
 - 3000-6000
 - 24000 և ավելի
- 4835 ՁՅՈՒՐԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԳԱՐԹԸ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՐԶԱՆՆԵՐԻՑ (մարդ)

ՍԱՀՄԱՆՆԵՐ

- ՀՀ մարզերի
- Նախկին վարչական շրջանների
- Երկաթուղիներ
- Համրապետական նշանակության ավտոմայրուղիներ

ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՐԶԱՆՆԵՐ

Երբանի N-ը	Անվանումը
3	Սյուրբանի
1	Ամառիայի
5	Անիի
2	Աշոցի
4	Արթինի

ՄԱՍՇՏԱՐ 1:300000

Գրականության ցանկ

1. Աբրահամյան Ս., Գյուղատնտեսության պետական կարգավորման շուրջ - Շուկայական տնտեսության անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում, գիտական հոդվածների ժողովածու, գիրք երկրորդ, Եր., 1997, էջ 87-94:
2. Աղայան Ա., Հայաստանի քաղաքական զարգացման հիմնախնդիրները, Եր., 2003:
3. Աղքատության նվազեցման ռազմավարական ծրագիր, Հայացք տնտեսությանը, 2001, թիվ 3:
4. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Եր., 2003:
5. Ավագյան Գ., Հայկական ՍՍՀ բնակչությունը, Եր., 1975:
6. Արդյունաբերություն. վիճակագրական ժողովածու, Եր., 1999:
7. Արտագաղթը Հայաստանից, (խմբագիր՝ Յ. Խառատյան), Եր., 2003:
8. Գաբրիելյան Հ., Հայկական լեռնաշխարհ, Եր., 2000:
9. Գաբրիելյան Մ., Հայաստանի հանրապետության արդի գյուղացիությունը, Եր., 2001:
10. Գաբրիելյան Մ., Հայկական գիւղը վերափոխումների տասնամեակում, Դրօշակ թիւ 2 (1574), ապրիլ 2002, էջ 49--59:
11. Գաբրիելյան Ն., Սպիտակի երկրաշարժի հետևանքով առաջացած բնակչության միգրացիաները, Աշխարհագրություն-99, Եր., 1999, էջ 118-121:
12. Գրիգորյան Ի., Լոռու մարզի առավել աղքատ տասը համայնքների հետազոտության արդյունքների վերլուծություն - Հայաստանի սոցիալական միտումները, 03, դեկտեմբեր, 2002, էջ 43-45:
13. Գևորգյան Ա., Շիրակի մարզի առավել աղքատ տասը համայնքների հետազոտության արդյունքների վերլուծություն -

Հայաստանի սոցիալական միտումները, 03, դեկտեմբեր, 2002, էջ 50-52:

14. Գևորգյան Ս., Եղիազարյան Բ., Թամազյան Ա., Մամիկոնյան Հ., ՀՀ ագրոպարենային համակարգի զարգացման ծրագրի շուրջ - Շուկայական տնտեսության անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում, գիտական հոդվածների ժողովածու, գիրք երկրորդ, Եր., 1997, էջ 94 –103:

15. Գևորգյան Ս., ՀՀ գյուղատնտեսության զարգացման խնդիրները - Շուկայական տնտեսության անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում, գիտական հոդվածների ժողովածու, գիրք երկրորդ, Եր., 1997, էջ 49-60:

16. Եզանյան Ռ., Կույունջյան Կ., Ետխորհրդային Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական մարտահրավերները, Եր., 2004:

17. Թերի Մքթինլի, Աղքատությունը և աճի բնույթը - Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում, Եր., 2002, էջ 33-48:

18. Թոմաս Քելլի, Աղքատության բնութագիրը - Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում, Եր., 2002, էջ 61-75:

19. Խառատյան Հ., Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Եր., 2000:

20. Խոջաբեկյան Վ., Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում, Եր., 1998:

21. Հայաստան. տնտեսական միտումներ, 1999, ապրիլ:

22. Հայաստան, Մարդկային զարգացման զեկույց, Եր., 1995:

23. Հայաստան. Մարդկային զարգացման զեկույց, 1996, Եր., 1996:

24. Հայաստան. Մարդկային զարգացման զեկույց, 1998, Եր., 1998:

25. Հայաստանի Հանրապետության օրենքը «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին», Եր., 1991:

26. Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 1999, վիճակագրական ժողովածու, Եր., 1999:
27. Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, վիճակագրական ժողովածու, 1998-2002, Եր., 2003:
28. Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները, Եր., 2003:
29. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր. I (խմբագիր՝ Յու. Ի. Մկրտումյան), Եր., 2000:
30. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, Եր., 2002:
31. Հայաստանի Հանրապետության ագրո-պարենային համակարգի 1998-2002թթ. բարեփոխումների ծրագիր, Եր., 1998:
32. Հարությունյան Է., Քաղաքական համակարգի զարգացման հիմնախնդիրը անցումային հասարակությունում, Եր., 2003:
33. Հովեսյան Ռ., Նկատառումներ Շիրակի մարզի բնակչության տարաբնակեցման հիմնախնդիրների և դրանց կարգավորման ուղղությունների վերաբերյալ - Աշխարհագրություն 2001 - Շիրակի մարզի բնական ռեսուրսների օգտագործման և բնապահպանության հիմնախնդիրները, գիտագործնական կոնֆերանսի նյութեր (հուլիս, 2001 թ., ք. Արթիկ), Եր., 2003:
34. Հայկական ՍՍՀ Ֆիզիկական աշխարհագրություն, Եր., 1971:
35. Հայկական Սովետական հանրագիտարան, հատոր 13, Եր., 1987:
36. Ղազարյան Ս., Ղազարյան Է., Տնտեսական քաղաքականությունը և գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնադրույթները - Շուկայական տնտեսության անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում, գիտական հոդվածների ժողովածու, գիրք երկրորդ, Եր., 1997, էջ 36-42:
37. Մամիկոնյան Հ., Պիվազյան Հ., ՀՀ գյուղատնտեսական արտադրության տարածքային մասնագիտացման ու զարգացման նպատակահարմար ուղղությունները - Շուկայական տնտեսության

անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում, գիտական հոդվածների ժողովածու, գիրք երկրորդ, Եր., 1997, էջ 80-87:

38. Մանասերեան Ն., Հայաստանի գիւղատնտեսութիւնը յետսեփականաշնորհման փուլում - Դրօշակ, 1997, թիվ 11:

39. Մանասյան Մ., Տնտեսաաշխարհագրական դաշտային հետազոտությունների մեթոդիկա, Բնակչություն, Եր., 1991թ.:

40. Մանասյան Մ., Գրիգորյան Ա., Պոտոսյան Ա., Շիրակի մարզ, Բնությունը բնակչությունը, տնտեսությունը, Եր., 2002:

41. Մանասյան Մ., Սարգսյան Ռ., Աշխարհի բնակչությունը, Հիմնախնդիրներ, հիմնադրույթներ, կանխատեսումներ, Եր., 2003:

42. Մանասյան Մ., Պոտոսյան Ա., Սարգսյան Լ., Տարաբնակեցումը և Շիրակի մարզի տարածքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները - Աշխարհագրություն 2001, էջ 134-137:

43. Մարտիրոսյան Լ., Պողոսյան Դ., Նահապետյան Ա., Վալեսյան Լ., Շիրակի մարզի գյուղատնտեսության աշխարհագրություն, Եր., 2000:

44. Մելքունյան Ա., Աշխատանքային շուկայի ձևավորման և զբաղվածության հիմնախնդիրները աղքատության հաղթահարման ՀՀ ռազմավարությունում, Եր., հունիս 2002:

45. Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.), Եր., 2003:

46. Մնացականյան Բ., Աջամօղլյան Ա., Շիրակի կլիման և ջրերը, Եր., 2005:

47. Մնացականյան Բ., Չիլինգարյան Լ., Շիրակի մարզի ջրային ռեսուրսների և նրանց բաշխվածության բնութագիրը - Աշխարհագրություն 2001, Եր., 2002, էջ 93-95:

48. Նազարեթյան Ս., Սպիտակի երկրաշարժը, Եր., 1991:

49. Նազարյան Խ., Շիրակի մարզի բնական լանդշաֆտների անթրոպոգեն փոփոխությունները - Աշխարհագրություն 2001, Եր., 2002, էջ 5-10:

50. Շինարարական-վերականգնողական աշխատանքներն Ադետի գոտում 1989-1998թ.թ., Վիճակագրական ժողովածու, Եր., ա.թ.:

51. Պոտոսյան Ա., Հայաստանի Հանրապետության գյուղական տարաբնակեցումը, Եր., 1999:

52. Պոտոսյան Ա., Ղանբարյան Գ., Տարաբնակեցումը որպես արդյունավետ բնօգտագործման նախադրյալ - Աշխարհագրություն 2001, Եր., 2002, էջ 131-134:

53. ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը երկրաշարժից տուժած քաղաքների, քաղաքատիպ ավանների ու շրջկենտրոնների վերականգնման և կառուցման գործում Հայկական ՍՍՀ-ին օգնելու միջոցառումների մասին - «Սովետական Հայաստան» օրաթերթ, 5 հունվարի 1989:

54. ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը Հայկական ՍՍՀ տարածքում երկրաշարժից տուժած արդյունաբերական ձեռնարկությունների և նրանց ենթակա սոցիալական ոլորտի օբյեկտների վերականգնման և կառուցման անհետաձգելի միջոցառումների մասին - «Սովետական Հայաստան» օրաթերթ, 7 հունվարի 1989:

55. ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը Հայկական ՍՍՀ-ի երկրաշարժի հետևանքով տուժած շրջաններում գյուղական բնակավայրերի և ագրոարդյունաբերական համալիրի արտադրական օբյեկտների վերականգնման միջոցառումների մասին - «Սովետական Հայաստան» օրաթերթ, 6 հունվարի 1989:

56. Ստեփանյան Ա., Սարգսյան Հ., Հայրենադարձների տեղաբաշխումը Ալեքսանդրապոլ-Լենինականում - Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական հինգերորդ գիտաժողով, Ջեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2002:

57. Ստեփանյան Ա., Սրտի իշեմիկ հիվանդացության և մահացության դինամիկան Գյումրի քաղաքում, Ջեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1999, էջ 160-161:

58. Վալեսյան Լ., Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Եր., 1988:
59. Քոչարյան Տ., Եսայան Լ., Արդյունաբերության զարգացման պրոբլեմները և հեռանկարները Թումանյանի շրջանում - Հայաստանի ժողովրդական տնտեսություն, N:3, Եր., 1991, էջ 19-26:
60. Օրդյան Է., Սանուկյան Հ., Աղքատության նվազեցման հիմնախնդիրները ՀՀ համայնքներում, Եր., 2001:
61. Āāđī ēēēī àòè÷āñēēā đāñóđñŪ Āđī ýī ñēī é ĽŃĐ (í ī ā đāā. Đ. Ĭ ēđò÷ýī à), Ē., 1976.
62. Āāđāī ñēēé Ĭ., Ēçáđāī í Ūā òđóāŪ: Ńòāī ī āēāī ēā ñī āāòñēī é ýēī í ī ì è÷āñēī é āāī āđàòēē, Ĭ., 1980.
63. Āāēāñýī Ē., Ĭ đī èçāī āñòāāī í ī -òāđðēòī ðēāēŪī Ūé ēī ī ī -ēāēñ Āđī ýī ñēī é ĽŃĐ, Āđāāāī, 1970.
64. Āāī ēī āēý Āđī ýī ñēī é ĽŃĐ, Õī ī VI, Ĭ āòāēēè÷āñēēā ī ī ēāçí Ūā ēñēī ī āāī Ūā, Āđāāāī, 1967.
65. Āāī ēī āēý Āđī ýī ñēī é ĽŃĐ, Õī ī VII, Ĭ āī āòāēēè÷āñēēā ī ī ēāçí Ūā ēñēī ī āāī Ūā, Āđāāāī, 1966.
66. Āāī ēñāī ēī Ĭ., Ēī ī óāā Ā., Őī đāā Ā., Ĭ ēāđāöēī ēī āēý, Ĭ., 1989.
67. Ēī ñòāēī ā Ā., Ĭ ēāđāöēý-āēāāī ēēē áāāā - Ĭ ēāđāöēý: āāēāāđòāēŪī Ūé æóđī àē, 1, 1996.
68. Ĭ āī óēýī Đ., Ýēī í ī ì è÷āñēēā ī đī áēāī Ū ī ēāđāöēī í í Ūō ī đī óāññī ā è èò đāāóēēđī āāī ēā ā Āđī āī èè: Αφτορεφερατ äēññāđ-òāöēē í ā ñī ēñēāī ēā ó÷āī í é ñòāī āī è ēāī ā. ýēī í ī ì è÷āñēēò í àóé, Āđāāāī, 2001.
69. Ĭ āđī āī í āñāēāī ēā: ī đī øēī ā, í āñòī ýŪāā, áóāóŪāā, Ĭ., 1987.
70. Ĭ āī ī ýī Ā., Āāāāñāđýī Ĭ., Ĭ í āēī òī đŪō āī ī đī ñāō òđóāī āī é Ĭ ēāđāöēē í āñāēāī ēý Āđī āī èè ā Đī ññēp, Āđāāāī, 1999.

71. Í í áí ñýí Ā., Āðì ýí ñéí á í áúáñòáí á òðáí ñòí ðì àòèè, Āðáááí, 2003.
72. Í í ěí æáí èá ááæáí óáá á ñòðáí áó ì èðà: 1995: Í áéòè ðáðá-í èá, Ĭ ., 1996.
73. Í áðáááááí óáá Ā., Ĭ áòí áú èçó÷áí èý ì èáðàòèè í àñáéáí èý, Ĭ ., 1975.
74. Í í èøèðááñèèé Ā., Í àñáéáí èá è ááí áðàòèý, Ĭ ., 1978.
75. Ðááì í í á Ð., Ēí í Òèèèò í à Ēááèàçá, Ááæáí óú N:1, IV, 1994.
76. Ðúááéí àñèèé Ē., Ĭ èáðàòèý í àñáéáí èý: í ðí áí í çú, Òáèòí ðú, í í èèòèèá, Ĭ ., 1987.
77. Ðèøéí á Ā., Āúí óæááí í úá ì èáðáí òú (éí ì ì áí òáðèè è Í ðí áðáí ì á ááéñòáèè), Āúí óæááí í úá ì èáðáí òú: éí òááðàòèý è áí çáðàúáí èá, Ĭ ., 1997.
78. Óááááò Í ., Āáí áðàòèý: ñéí òáç ñí áðáí áí í úó çí áí èé, Ĭ ., 1979.
79. Óí äæáááéýí Ā., Āñàòðýí Ā., Āáí í áðàòèè÷áñèèá àñí áèòú óðááí èçàòèè á Āðì ýí ñéí é ÑÑÐ, Āðáááí, 1990.
80. Óí äæáááéýí Ā. Āàçá Ð., Øáòáð Ē., Āáí í áðàòèè÷áñèèá í ðí áéáí ú è áí ñí ðí èçáí áñòáí òðóáí áúó ðáñóðñí á, Āðáááí, 1983.
81. Óí ðáá Ā., Í ðí áéáí ú áí ðí áí á, Ĭ ., 1975
82. Óí ðáá Ā., ×àí áé Ā., Í ðí áéáí ú èçó÷áí èý ì èáðàòèè í àñáéáí èý (ñòàòèñòèèí -ááí áðàòèè÷áñèèá í ÷áðèè), Ĭ ., 1978.
83. Øóááéí á Ā., Āáí áðàòèý í àñáéáí èý, Ĭ ., 1977.
84. Ðááéüñèèé Ā., Āáí áðàòèý í àñáéáí èý, Ĭ ., 1980.